Իմամ Խոմեյնի- 100

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՎ ՀԻՄՆԱԴԻՐ ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ ՄՏՔԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1999 Թ.

9(55)
Հ-43

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՎ ՀԻՄՆԱԴԻՐ ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ ՄՏՔԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

3088

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1999Թ.

ՆԱԽԱԲԱՆ

Իրանական 1378 արեգակնային տարին՝ համապատասխանաբար 1999թ., համընկնում է ողջ աշխարհի եւ հատկապես աշխարհի ակնառու գործիչներից մեկի ծննդյան հարյուր ամյակին: Իմամ Խոմեյնին որպես Իրանի Իսլամական Հեղափոխության հիմնադիր կարողացավ առաջնորդել ներկայիս խոշորագույն հեղափոխությունների վարչակարգը եւ այն պսակել հաղթանակով: Բազմաթիվ գիտնականներ եւ պատմաբաններ դեռեւս ուսումնասիրում են հեղափոխության պատճառներն ու արմատները եւ թեպետ դրանից անցել է երկու տասնամյակ, սակայն համարձակությամբ կարելի է ասել, որ այսօր Իմամ Խոմեյնու կերպարի բարդության պատճառով չեն կարողացել աշխարհի խոշորագույն հեղափոխությունների պատճառների օրրանում, ինչպիսիք են Ֆրանսիայի մեծ հեղափոխությունը եւ ռուսաստանի հեղափոխությունը, ուսումնասիրել:

Այսօր նշում ենք ժամանակակից աշխարհի պատմական դեմքերից մեկի ծննդյան հարյուր ամյակը, որի երկնային մահից անցել է տասը տարի: Նա կատարեց այնպիսի հեղափոխություն, որը ոչ միայն չտապալվեց, այլ օրըստօրե ամրապնդվեց ու հզորացավ եւ որին աշխարհի բոլոր երկրները հատուկ նշանակություն են տալիս:

Այսօր Իմամ Խոմեյնու հայացքներն ու տեսակետներն Իրանի Իսլամական Հանրապետության պատասխանատուների համար հանդիսանում են որպես արժեքավոր գանձ, ուղեցույց եւ օրակարգ եւ միջազգային եւ տեղական նշանակության՝ սեմինարներ, կոնֆերանսներ, կլոր սեղաններ կազմակերպելու միջոցով, ներկայացում Իմամ Խոմեյնու էության թաքնված եզրերը, նրա հայացքները, եւ նրա դերը ԻԻՀ հաղթանակում:

Այդ ուղղությամբ Երեւանում ԻԻՀ դեսպանությունը, ՀՀ ԳԱԱ եւ ԻԻՀ մշակույթի կենտրոնը Իմամ Խոմեյնու իրական եւ ճիշտ պատկերը, նրա մտածելակերպը ներկայացնելու Հայաստանի ժողովուրդին, սույն թվականի հոկտեմբերի 1-ին, որը համընկնում է նրա ծննդյան 100-ամյակին, ՀՀ ԳԱԱ-ում կազմակերպեցին գիտական խորհրդաժողով: Մեկօրյա գիտաժողովի ընթացքում պատմաբանները, մտավորականները եւ հայ իրանագետները ներկայացնելով հոդվածներ եւ գիտական ելույթներ, պարզաբանելով նրա հայացքներն ու մտքերն, մեծարեցին նրան:

Խոսքի եւ հայացքների ազատությունը, ԻԻՀ արտաքին քաղաքականությունը, մտավորականներն ու համալսարականներն, կնոջ տեղը Իմամի տեսանկյունից, իրանական եւ իսլամական մշակույթի վերածնունդը եւ Իմամ Խոմեյնու կողմից նրա կերպարի եզրերի ներկայացումը գիտաժողովի քննարկվող կարեւորագույն թեմաներն էին:

Այն, ինչ գիտաժողովում հնչեց, ներկայացված են ելույթների եւ հոդվածների տեսքով եւ հուսով ենք, որ գիտաժողովի միջոցով կկարողանանք ինչպես ԻԻՀ հոգեւոր առաջնորդ Խամենեին է ասում «Ճշմարտությունը միշտ կենդանի է պատմության մեջ», ներկայացնել Իմամ Խոմեյնու մտորումներն ու հայացքները:

Այստեղ հարկ ենք համարում նշել ՀՀ ԳԱԱ նախագահ պարոն Ֆադեյ Սարգսյանի, ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի տնօրեն պարոն Նիկոլայ Հովհաննիսյանի եւ բոլոր նրանց, ովքեր աջակցություն ցուցաբերեցին գիտաժողովը լավագույնս կազմակերպելու համար, հայտնում ենք մեր ջերմ շնորհակալությունները եւ երախտագիտությունը:

One - day Seminar on
" Thoughts & Ideas of Imam Khomeini"

PROGRAMM

Part one: 11:00 a.m.

☞ Opening of Seminar by message of **H.E.Mr.Karen Demirchian**, Parliamentary Chairman (perused by **Mr.Fadey Sargsian**, President of National Academy of Science of Republic of Armenia).

☞ Speech of **H.E.Mr.Hekmatollah Gorbani**, Charge d'Affairs a.i. of the Embassy of the Islamic Republic of Iran in Armeina.

☞ Lecture by **Mr.Nikolay Hovhannisyan** on "Imam Khomeini Phenomenon and Foreign Policy of Islamic Republic of Iran".

☞ Lecture by **Mr.Avak Khachatorian** on "Intellectuals from Imam Khomeini's point of view".

☞ Llecture by **Mr.Igor Moradian** on "Imam Khomeini's point of view about Zionism & Global Arrogance".

☞ Lecture by **Mr.Rafael Ghazarian** on "Culture & Ethics from Imam Khomeini's point of view".

☞ Lecture by **Mr.Garnik Asatorian** on "Women in Ideas of Imam Khomeini".

12:30 p.m. - 13:00 p.m. Break

Part Two: 13:00 P. m.

☞ Lecture by **Mr.Mohsen Abutalebi** (Cultural Counsellor of Embassy of the Islamic Republic of Iran) on "Human being & His Generosity in Imam Khomeini's point of view".

☞ Lecture by **Mr.Babken Harotonian** on "Historical Process of Islamic Revolution".

☞ Lecture by **Mr.Arshavir Gabojian** on "Freedom of thoughts & Speech in Imam Khomeini's point of view".

☞ Lecture by **Mr.Gorgen Melikian** on "Imam Khomeini & Contemporary Literature".

☞ Lecture by **Mr.Vahan Baybortian** on "Iranian & Armenian Relatoins".

☞ Lecture by **Mr.Ara Papian** on "Youth & Imam Khomeini".

☞ Lecture by **Mr.Roben Angaladian** on "Philosophical Viewpoints of Imam Khomeini".

☞ Anoush Stambolchian: Imam Khomeini's Points of View on Foreign Policy.

☞ Ali Kazemzadeh: Imam Khomeini's Points of View on Mass Media.

15:00 p.m. - Lunch

Իմամ Խոմեյնու մտքերի եւ հայացքների քննարկմանը նվիրված գիտաժողովի

ԾՐԱԳԻՐ

Առաջին մաս, սկիզբը ժամը 11:00

☞ ՀՀ ԱԺ նախագահ պարոն **Կարեն Դեմիրճյանի** ողջույնի ընթերցումը ՀՀ ԱԱ նախագահ պարոն **Ֆադեյ Սարգսյանի** կողմից եւ գիտաժողովի բացումը:

☞ Երեւանում ԻԻՀ ժամանակավոր հավատարմատար պարոն **Հեքմաթօլլահ Ղորբանիի** ելույթը:

☞ Պարոն **Նիկոլայ Հովհաննիսյան**. Իմամ Խոմեյնիի երեւույթը եւ ԻԻՀ արտաքին քաղաքականությունը:

☞ Պարոն **Ավագ Խաչատրյան**. Մտավորականները ու համալսարանականները ըստ Իմամ Խոմեյնու (ՌԱՀ) հայացքների:

☞ Պարոն **Իգոր Մուրադյան**. Իմամ Խոմեյնու տեսակետը սիոնիզմի եւ համաշխարհային կեղեքման վերաբերյալ:

☞ Պարոն **Ռաֆայել Ղազարյան.** Մշակույթը եւ բարոյականությունը Իմամ Խոմեյնու տեսանկյունից:

☞ Պարոն **Գառնիկ Ասատրյան**. Կինը Իմամ Խոմեյնու տեսանկյունից:

Ընդմիջում ժամը 12:30-13:00

Երկրորդ մաս, ժամը 13:00

☞ Պարոն **Մոհսեն Աբութալեբի.** Մարդը եւ մարդկային վեհանձնությունը Իմամ Խոմեյնու տեսանկյունից:

☞ Պարոն **Բաբկեն Հարությունյան**. Իսլամական հեղափոխության պատմական գործընթացը:

☞ Պարոն **Արշավիր Գաբուջյան**. Խոսքի եւ հայացքների ազատությունը Իմամ Խոմեյնու տեսանկյունից:

☞ Պարոն **Գուրգեն Մելիքյան**. Իմամ Խոմեյնին եւ ժամանակակից գրականությունը:

☞ Պարոն **Վահան Բայբուրթյան**. Հայ-իրանական հարաբերությունները:

☞ Պարոն **Արա Պապյան**. Երիտասարդությունը Իմամ Խոմեյնու տեսանկյունից:

☞ Պարոն **Ռուբեն Անգալադյան**. Իմամ Խոմեյնու փիլիսոփայական հայացքները:

☞ **Անուշ Ստամբուլցյան.** Խոմեյնու արտաքին քաղաքական կոնցեպցիաները:

☞ Պարոն **Ալի Քազեմզադե.** Իմամ Խոմեյնիի տեսակետը ՋԼՄ-ների մասին:

Ճաշկերույթ ժամը 15:00

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ

ԱՅԱԹՈԼԼԱ ԽՈՄԵՅՆԻԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ.

Ի սրտե ողջունում եմ ձեզ Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադիր եւ առաջնորդ Այաթոլլա Ռուհոլլա Խոմեյնիի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակիցներիդ եւ համոզմունք հայտնում, որ դուք գիտական մոտեցումով կվերլուծեք եւ կարժեւորեք մեր բարեկամ պարսիկ ժողովրդի մեծ զավակի անցած բարդ ու դժվարին, սակայն եւ իմաստալից ուղին:

Միանգամայն բնական է, որ այս արժանահիշատակ տարեդարձը Իրանի բոլոր ժողովրդների հետ միասին այսօր նշում է նաեւ հայ ժողովուրդը: Հայերը եւ պարսիկները հարեւան եւ բարեկամ ժողովուրդներ են, որոնք դարեր ի վեր միմիանց հետ կապված են պատմամշակութային բազմաթիվ թելերով: Անկախ Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրահետության միջեւ հաստատվել եւ հաջողությամբ զարգանում են բազմաբնույթ բարեկամական միջպետական հարաբերություններ, որոնք ընդգրկում են քաղաքական, պառլամենտական, տնտեսական, մշակութային, մարզական եւ այլ ոլորտները եւ ծառայում մեր երկու դրացի երկրների ազգային շահերին: Այդ հարաբերությունները մեր երկու երկրների միջեւ զարգացման եւ խորացման մեծ հեռանկարներ եւ ներուժ ունեն:

Մենք գոհունակությամբ ենք նշում, որ արտաքին քաղաքականության, այդ թվում եւ մերձավոր արեւելյան տարածաշրջանային, քաղաքականության սկզբունքային շատ հարցերում մեր երկու բարեկամ երկրների տեսակետները համընկնում են: Դա Հայաստանի եւ Իրանի միջեւ օրեցօր զարգացող հարաբերությունների արդյունավետության կարեւոր գրավականն է:

Հայ-Իրանական համագործակցությունը մեր տարածաշրջանի խաղաղության պահպանման եւ կայունության ամրապնդման կարեւոր գործոններից է:

Կրկին անգամ ողջունում եմ ձեզ եւ ցանկանում հաջողություն ձեր գիտաժողովին, որը նկատելի ավանդ է հայ-իրանական գիտական կապերի զարգացման բնագավառում:

ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի Նախագահ
1 հոկտեմբերի 1999թ.

ԱՅԱԹՈԼԼԱ ԽՈՄԵՅՆԻԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հանուն գթած եւ ողորմած Աստծո.

Մեծարգո գիտնականներ, դեսպաններ, հավատարմատարներ, տիկնայք եւ պարոնայք.

Այսօր, 1999 թ հոկ. 1-ին ձեռնամուխ ենք եղել մի այնպիսի քաջարի մարտիկի մտքերի եւ հայացքների քննարկման նվիրված սեմինարի կազմակերպմանը, ինչպիսին քսաներորդ դարի ամենախոշոր հեղափոխություններից մեկի կազմակերպիչը եւ հիմնադիրն է:

Իրանի Իսլամական հեղափոխությունը ազատատենչ առաջնորդ, բարեպաշտ գիտնական, իմաստուն եւ նորարար քաղաքագետ, խելամիտ ու անվեհեր կրոնամիստիկի վեհ գաղափարների ու անխոնջ մաքառումների արգասիք է: Առաջնորդ, որն իր կյանքը նվիրեց հանուն կեղեքումների, բռնարարքների, ճնշումների վերացման, ինչպես նաեւ մարդու վեհ կերպարի ու մարդկային իրավունքների վերածնման:

Իրանի Իսլամական հեղափոխությունը ամբողջ աշխարհում զուգակցվում է Իմամ Խոմեյնու անվան հետ:

Իմամ Խոմեյնու երկարաշունչ պայքարը ընդդեմ հարստահարումների ու կեղեքման, եւ հանուն ազատամտության, մարդկային իրավունքների վերականգնման, պարզ ու համեստ ապրելակերպի, ժուժկալության ու բարեպաշտության եւ վերջապես արդարության ու ճանաչումի, որպես հայրական հոգեւոր պարգեւներ, արժանացել են մեր ողջ ժողովրդի ամենախոր հարգանքներին:

Իմամ Խոմեյնին, որպես մի եզակի առաջնորդ տապալելով Իրանի բռնակալ ու կեղեքիչ ռեժիմը ամենաժողովրդավարական եւ ամենաթանկագին վարչակարգը պարգեւեց Իրանի ժողովրդին եւ այսպիսով իր վեհ անունը հավերժացրեց մարդկանց սրտերում:

Նա քաջատեղյակ լինելով Իրանի ստրտեգիական զգայուն դիրքին, եւ օժտված լինելով հսկայական ներուժով եւ ունակություններով եւ ծանոթ լինելով ժողովրդի նվիրական իղձերով լի Իրանի պատմությանը ձեռնամուխ եղավ այնպիսի պատմական հզոր պայքարի, որ հագիվ թե որեւէ պատմական խոշոր դեմք ի վիճակի լիներ հաղթանակած դուրս գալ նրանից:

Հեղափոխության հաղթանակից եւ Իրանի Իսլամական Հանրապետության կազմավորումից հետո, երբ Իրանը անկախացավ ու ազատագրվեց, երբ Իրանի ժողովուրդը գտավ իր ազգային արժանապատվությունը, ծայր առավ հայրենաստեղծ աշխատանքը:

Իրանի Իսլամական Հանրապետությունը այնպիսի հեղափոխության արդյունք է, որի պատգամը արտաքին քաղաքականությունում խաղաղության, բարեկամության, մտերմության ու եղբայրության հաստատումն է ազգերի մեջ, որի նպատակը բռնության ու սահմանափակումների վերացումն է եւ աշխարհի խաղաղ գոյակցությունը:

Իրանի Իսլամական Հանրապետությունը իր «երկխոսություն քաղաքակրթությունների միջեւ» եւ բախումների վերացման քաղաքականությամբ ջանում է, հարգելով փոխադարձ իրավունքներն ու շահերը, վերածնելով մարդկային արժեքները, եւ մարդու իրավունքները, զարգացնել հարեւան ու տարածաշրջանի երկրների բարեկամությունը եւ ամրապնդել կայունություն ու խաղաղություն համայն աշխարհում:

Նման սեմինարներ եւ գիտաժողովներ, որոնք կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության հարգարժան պատասխանատու անձանց նվիրական ջանքերի ու ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համագործակցության եւ հատկապես՝ մեծարգո պարոն Ֆադեյ Սարգսյանի օժանդակությամբ, կարող են էլ ավելի ընդլայնել եւ ամրապնդել՝ Իրանի Իսլամական Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության գիտական եւ մշակութային փոխհարաբերությունները:

Վերջում իմ երախտագիտության հավաստիքն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր մասնակցել են այս գործի կազմակերպման աշխատանքներին, զանգվածային լրատվական միջոցների եւ մամուլի ներկայացուցիչներին, ինչպես նաեւ սեմինարի բոլոր հարգարժան մասնակիցներին:

ՀԵՔՄԱԹՈԼԼԱՀ ՂՈՐԲԱՆԻ
ԻԻՀ դեսպանության
ժամանակավոր հավատարմատար

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայաստանի Գիտությունների Ազգային ակադեմիայի
Արևելագիտության ինստիտուտի տնօրեն,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Գիտությունների «Արարատ» միջազգային ակադեմիայի (Փարիզ)
և Ազգային անվտանգության պրոբլեմների
գիտությունների միջազգային ակադեմիայի (Մոսկվա) անդամ

ԱՅԱԹՈԼԼԱ ԽՈՄԵՅՆԻԻ ՖԵՆՈՄԵՆԸ

Եթե երբևիցե կազմվելու լինի XX դարի խոշորագույն պետական և քաղաքական գործիչների և հոգևոր առաջնորդների ցանկը, որոնք իրենց խոր դրոշմն են դրել դարիս հոգևոր-քաղաքական կերպարի ձևավորման վրա, ապա այդ ցուցակում իր արժանի տեղը կգրավի մեր բարի հարևան, Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադիր և հոգևոր առաջնորդ Այաթոլլա Ռուհոլլա Խոմեյնին, որի ծննդյան հարյուրամյակը այսօր Իրանի մեր բարեկամ ժողովրդի հետ միասին նշում է նաև հայ ժողովուրդը:

Խոմեյնիի հայտնվելը պատմության բեմահարթակում խոշոր երևույթ էր, որը առանց չափազանցության կարելի է ասել, ցնցեց աշխարհը: Նա մի կողմից առաջ բերեց իր համախոհների ու համակիրների աննախադեպ ցնծությունը, իսկ մյուս կողմից խուճապ առաջացրեց արևմտյան երկրներում, մասնավորապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որը շահի տապալումով և Խոմեյնիի իշխանության գլուխ գալով կորցրեց իր ամենահուսալի դաշնակիցներից և հենարաններից մեկին:

Տագնապի լուրջ պահեր ապրեց նաև մյուս գերտերությունը՝ Խորհրդային Միությունը, որը խորապես մտավախ էր այն կապակցությամբ, թե ինչպիսի արձագանք կգտնեն Այաթոլլայի հռչակած սկզբունքները Խորհրդային Միության տարածքում բնակվող մուսուլման ժողովուրդների մեջ:

Այդ մտավախությունը ակնառու կերպով դրսևորվեց Խորհրդային կառավարության և Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի կողմից 1980թ. մարտին Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում հրավիրված փակ գիտաժողովում, նվիրված իսլամի ակտիվացման հարցերին՝ Իրանում շահական ռեժիմի տապալումից և հոգևորականության իշխանության գլուխ գալուց հետո: Գիտաժողովը ղեկավարում էր ակադեմիկոս Եվգենի Պրիմակովը: Նրա աշխատանքներին Հայաստանի պատվիրակության

կազմում մասնակցում էր նաև տողերիս հեղինակը: Երկու օր տևած գիտաժողովը ցույց տվեց, որ Խորհրդային ղեկավարությունը խորապես մտահոգված էր այն իրողությունից, որ Խոմեյնիի գաղափարները արդեն ներթափանցում են Միջին Ասիայի հանրապետություններ, Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս, Պովոլժիե, Ալթայի երկրամաս և մուսուլմանաբնակ այլ վայրեր: Եվ մեր առաջ խնդիր էր դրվում, թե ինչպես անել, ինչ քայլերի դիմել, որպեսզի կանխել, ինչպես այն ժամանակ էին ասում, «իսլամի ակտիվացումը» և «մուսուլմանական ալիքի բարձրացումը» Խորհրդային Միությունում:

Այաթոլլա Խոմեյնիի, նրա հայացքների և գործունեության, նրա ֆենոմենի մասին բավականին շատ է գրվել: Հրատարակվել է մեծաքանակ գրականություն հայերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն, գերմաներեն, բնականաբար, նաև պարսկերեն և աշխարհի այլ լեզուներով: Եվ դեռ գրվում են և կգրվեն ապագայում: Գումարվել են բազում գիտաժողովներ, այդ թվում և միջազգային, աշխարհի տարբեր երկրներում: Նրանցում փորձ է արվել լուսաբանել Այաթոլլա Խոմեյնիի կրոնական և քաղաքական հայացքների էությունը, դրանց առաջացման, նպատակների և հաղթարշավի պատճառները: Եվ պետք է ընդունել, որ պատմաբանները, փիլիսոփաները և քաղաքագետները քիչ բան չեն արել այդ խնդիրների պարզաբանման ուղղությամբ:

Սակայն սխալ կլիներ ասել, թե հարցի ուսումնասիրությունը սպառված է և լիովին պարզաբանված են բոլոր հանգուցային խնդիրները: Գիտության մեջ այդպես չի լինում: Բացի այդ պետք է ի նկատի ունենալ մի հանգամանք ևս: Ուսումնասիրողներից յուրաքանչյուրն իր տեսակետն է արտահայտել, իր մոտեցումն է ցուցաբերել և օգտագործել է հետազոտման իր մեթոդը, որը չի կարող անվիճելի և պարտադիր լինել բոլորի համար: Նման իրավունք, այսինքն իրենց սեփական տեսակետն արտահայտելու իրավունք, հավասարապես ունեն նաև մյուս հետազոտողները:

Օգտվելով այդ իրավունքից ցանկանում ենք ներկայացնել մեր տեսակետը Խոմեյնիի ֆենոմենի վերաբերյալ: Բնականաբար, հնարավոր չէ մի զեկուցման մեջ ընդգրկել այս վիթխարի թեմայի բոլոր հարցերը, ուստի մենք հակիրճ կանդրադառնանք ֆենոմենի հայտնության պատճառներին և մի քանի էական կողմերին:

Խոմեյնիի ֆենոմենը հայտնվեց իրանական հասարակության խոր հակասությունների, ավելի ստույգ ընդհանուր ճգնաժամի ֆոնի վրա: Ճգնաժամը համակել էր բոլոր ոլորտները՝ պետական ապարատը, տնտեսությունը, սոցիալական համակարգը, բանակը, ոստիկանությունը և անվտանգության ծառայությունը, ներքին և արտաքին

քաղաքականությունը: Դժգոհ էին իրանական հասարակության բոլոր խավերը: Սրանից հետևում է, որ ճգնաժամը ոչ թե օջախային էր, որն ընդգրկում էր լոկ այս կամ այն ոլորտը, այլ ամբողջական, կառուցվածքային-համակարգային: Իսկ նման պարագաներում հնարավոր չէր ճգնաժամը հաղթահարել առանձին բարեփոխումների օգնությամբ, որը հաստատվում է հենց Իրանի պատմական փորձով: Մենք ի նկատի ունենք այսպես կոչված «սպիտակ հեղափոխությունը», որը փորձեց իրականացնել շահական ռեժիմը վերևից, որը, սակայն, հաջողություն չունեցավ և Պահլավիների դինաստիան չփրկեց կործանումից:

Իրանում ծագած համընդհանուր պետական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային ճգնաժամը հնարավոր էր հաղթահարել և այդ հինավուրց երկրի զարգացման համար նոր հորիզոններ բացել միայն արմատական կառուցվածքային վերափոխումների միջոցով, որը իրագործեց հոգևորականությունն իր անառարկելի հեղինակություն հանդիսացող առաջնորդի՝ Այաթոլլա Ռուհոլլա Խոմեյնիի ղեկավարությամբ:

Սակայն, բնականաբար, հարց է առաջանում, ինչու՞ հենց հոգևորականությունը և ինչու՞ հենց ինքը Խոմեյնին: Միթե՞ իրանական քաղաքական ասպարեզում չկային այլ ուժեր, որոնք իրենց վրա վերցնեին նման պատմական մի պատասխանատվություն, ինչպես միապետության տապալումը և նոր վարչակարգի հաստատումը: Այդ հարցերի պատասխանը պետք է փնտրել իրանական յուրահատուկ քաղաքական իրողությունների մեջ:

Իրանի քաղաքական դաշտը շատ թույլ էր զարգացած: Չկային լավ կազմակերպված և հեղինակություն ունեցող կուսակցություններ, որոնք ի վիճակի լինեին ոտքի հանելու և իրենց հետևից տանելու հոծ զանգվածներին: Եղած քաղաքական կազմակերպությունները թույլ էին և շատ սահմանափակ էր նրանց ազդեցության ոլորտը, որը զրկում էր նրանց վերոհիշյալ պատմական առաքելությունն իրականացնելու ունակությունից և կարողությունից: Անկազմակերպ էին բանվորական և գյուղացիական խավերը, թույլ էր իրանական բուրժուազիան, որի մի աչքն անընդհատ շահնշահի կողմն էր՝ նրա բարյացակամությունը շահելու ակնկալությամբ: Բանակը քաղաքական ուժ էր ներկայացնում իրենից և լավ թե վատ ծառայում էր միապետին: Խիստ ուժեղ էին ազգային անվտանգության ծառայությունների դիրքերը, որոնք ահ ու սարսափ էին տարածում հասարակության մեջ և հավատարմորեն ծառայում Մուհամմադ Ռզա Պահլավիին:

Կարող ենք ասել, որ Իրանի քաղաքական դաշտը հասունացած չէր և շատ տխուր պատկեր էր ներկայացնում:

Սիա այսպիսի պայմաններում ասպարեզը մնաց Իրանի իսլամական հոգևորականությանը: Նա միակ համազգային-համաիրանական կազմակերպված, կուռ կառույցներ ունեցող ինստիտուտն էր, որը ընդդիմադիր, նույնիսկ ըմբոստ դիրք էր գրավել միապետական ռեժիմի նկատմամբ և պատրաստ էր գնալ մինչև վերջ: Հոգևորականության դերը Իրանում ավանդաբար եղել է մեծ, նա խոր արմատներ է գցել հասարակության մեջ, որին ընդունում և նրա հրահանգները անվերապահորեն կատարում են հասարակության բոլոր խավերը: Այս առումով նա բացառիկ դիրք և ազդեցություն ունեցող համազգային ինստիտուտ է, որը մրցակցությունից դուրս է: Իրանի յուրահատուկ պայմանների բերումով հոգևորականությունը մշտապես, և հատկապես մեր դարի 50-60-ական թվականներից սկսած, իրագործում է ոչ միայն զուտ կրոնական, այլև քաղաքական ֆունկցիաներ:

Այս գործոնների շնորհիվ հոգևորականությունը դուրս եկավ պայքարի առաջին գծի վրա և ստանձնեց Իրանի ժողովրդական ամենալայն զանգվածների հակամիապետական շարժումը, որն, ի վերջո, պսակվեց հաջողությամբ:

Այդ շարժումը առաջին օրվանից գլխավորեց Այաթոլլա Խոմեյնին, որն ուներ իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Նա բնությունից օժտված էր մեծ խելքով, լայն գիտելիքների տեր անձնավորություն էր: Նրա խոսքը և քարոզները աչքի էին ընկնում իրենց հստակությամբ և տրամաբանությամբ:

Նա Ղուրանի և շարիաթի լավագույն գիտակ էր, կարողանում էր իսլամական դոգմաները հաջողությամբ միահյուսել Իրանի առջև կանգնած քաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիրների հետ, ցույց տալ նրանց լուծման ուղիները: Ժողովրդի համար հասկանալի լեզվով ասված և առաջ քաշված գաղափարները մոգական ազդեցություն էին գործում միլիոնավոր մարդկանց վրա, որոնք պատրաստ էին մինչև մահ հետևելու իրենց սիրելի Այաթոլլային:

Խոմեյնին մեծ հեղինակություն ձեռք բերեց շնորհիվ իր քաղաքական խիզախության, երբ նա բացահայտ կերպով հակադրվեց շահին և նրա վարած քաղաքականությանը, որն իր նախադեպը չունեցող երևույթ էր ամբողջատիրական վարչակարգի պայմաններում: Վախենալով ձեռք բարձրացնել Այաթոլլայի կյանքի վրա, շահը բավարարվեց նրան արտաքսելով, որը, սակայն, էլ ավելի բարձրացրեց Խոմեյնիի հեղինակությունը: Գտնվելով աքսորում, Իրաքի Ան-Նաջաֆ քաղաքում, որը շիիզմի համաշխարհային կարևոր կենտրոններից է, Այաթոլլա Խոմեյնին չհաշտվեց այդ պատժի հետ և չաղերսեց միապետի ներողամտությունը, ինչպես հաճախ է լինում

նման դեպքերում: Ընդհակառակն, նա, հեռվից-հեռու ուշի ուշով հետևելով իրադարձությունների զարգացմանը, ավելի համոզված և ավելի ուժեղ կերպով շարունակեց պայքարը շահի կառավարման և այն արժեքների դեմ, որ հաստատվել էր վերջինիս թագավորման ժամանակաշրջանում:

Էմիգրացիայի տարիներին Այաթոլլա Խոմեյնին վերջնականապես մշակեց իր քաղաքական հայեցակետը ապագա Իրանի, նրա ապագա կառուցվածքի վերաբերյալ, որն այնուհետև նա դրեց իր քաղաքականության հիմքում որպես Իրանի հոգևոր առաջնորդ:

Շնորհիվ այս հատկանիշների Այաթոլլա Խոմեյնին դարձավ Իրանի հակամիապետական շարժման առաջին դեմքը, շարժման անվիճարկելի ղեկավարը, որը ընդունում էին ոչ միայն միլիոնավոր մարդիկ, այլև մյուս բոլոր հեղինակավոր այաթոլլաները: Նա դարձավ առաջինը հավասարների, այսինքն այաթոլլաների մեջ և իր վրա վերցրեց միապետությունը տապալելու և իսլամական հանրապետություն հիմնելու դժվարագույն պատմական առաքելությունը:

Խոմեյնիի ֆենոմենը ճիշտ ըմբռնելու համար հարկ է անդրադառնալ նրա հետևյալ չորս էական կողմերի լուսաբանությանը:

Առաջինը - արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերի բլոկը:

Շահական ռեժիմը Իրանը դարձրել էր ԱՄՆ-ի հուսալի հենարանը Մերձավոր և Միջին Արևելքում: ԱՄՆ-ը շահին դարձրել էր իր կամակատարը և օգտագործում էր նրան իր ծավալապաշտական, ստրատեգիական ծրագրերի իրագործման համար: Դա նվաստացուցիչ էր Իրանի համար, մի պետության, որը պատմության ընթացքում բազմիցս առաջատար դեր է կատարել մեր տարածաշրջանում և ինքնուրույնաբար տնօրինել իր քաղաքական, և շատ հաճախ նաև այլ երկրների և ժողովուրդների ճակատագիրը:

Շահի արտաքին քաղաքական կուրսը, ժանդարմի ֆունկցիաներ կատարելը և ԱՄՆ-ի կամակատար լինելը առաջ էր բերել Իրանի ազգային-հայրենասիրական ուժերի խոր դժգոհությունը և վրդովմունքը: Այդ քաղաքականության փոփոխությունը դարձավ կարևոր խթան Խոմեյնիի և նրա համախոհների համար շահական ռեժիմը և միապետությունը տապալելու գործում: Գալով իշխանության գլուխ Խոմեյնին անմիջապես հայտարարեց, որ Իրանը երբեք ատրճանակ չի լինի ամերիկյան իմպերիալիստների ձեռքում՝ ուղղված այլ ժողովուրդների դեմ: Այս բանաձևը խիստ կարևոր է Խոմեյնիի ֆենոմենն ըմբռնելու և գնահատելու տեսանկյունից: Իրանի Իսլամական Հանրապետության նոր արտաքին քաղաքական կուրսը, որը պաշտպանություն գտավ Իրանի տարբեր սոցիալ-հասարակական

ուժերի կողմից, փոխեց ուժերի հավասարակշռությունը և ստեղծեց նոր աշխարհաքաղաքական իրադրություն, որն ի նպաստ ԱՄՆ-ի չէր:

Երկրորդ - ներքին քաղաքական հարցերի բլոկը: Իրանում խոր դժգոհություն էր կուտակվել շահի ներքին քաղաքականության հանդեպ: Խոսքն այստեղ միայն սոցիալական բևեռացման և սոցիալ-տնտեսական դժվարությունների մասին չէր, այլ արևմտյան արժեքների և նրանց կողմից իրանական ավանդական արժեքների դուրս մղման մասին: Վեստերնիզացիայի հեղեղը, որ ներխուժել էր Իրան շահի կառավարման հատկապես վերջին տարիներին, խարխլում էր Իրանական ավանդական կառույցները, սովորույթները, կենցաղը, մարդկային և ընտանեկան հարաբերությունները: Իրանցին հոգեբանորեն ոչ միայն պատրաստ չէր դրան, այլև մերժում էր իր ազգային արժեքները իր համար խորթ արևմտյան արժեքներով փոխարինելու միտումները:

Դա դարձավ շահի ռեժիմից իրանցիների երես թեքելու գլխավոր պատճառներից մեկը: Իսկ Այաթոլլա Խոմեյնին, որ իր ձեռքը մշտապես պահում էր ժողովրդի զարկերակի վրա, ազգային ավանդական արժեքների պահպանումը և Իրանի վեստերնիզացիայի դեմ պատնեշ կառուցելը դարձրեց իր քաղաքականության կռվաններից մեկը, որը կազմում է Խոմեյնիի ֆենոմենի մյուս էական բաղադրատարրը:

Հասկանալի է, որ Իրանի Իսլամական Հանրապետության ստեղծումով այլևս տեղ չէր մնում Իրանի վեստերնիզացիայի համար, իսկ իրանական ավանդական հոգևոր-մշակութային և կրթական արժեքները ձեռք բերեցին հուսալի տանիք:

Երրորդ - Խոմեյնիի ֆենոմենի երրորդ բաղադրատարրը Իրանի զարգացման ուղու ընտրությունն է:

Այաթոլլա Խոմեյնին սկզբից ևեթ մերժում էր զարգացման արևմտյան, կապիտալիստական ուղին, գտնելով, որ դա չի կարող երջանկություն բերել մարդուն և չի համապատասխանում իրանցիների պատկերացումներին:

Սակայն նա ժխտական դիրք գրավեց նաև զարգացման սոցիալիստական, մասնավորապես նրա խորհրդային մոդելի նկատմամբ: Խոմեյնիի կարծիքով սոցիալիզմը, հակառակ բազում դեկլարացիաների, նույնպես ի վիճակի չեղավ մարդուն երջանկություն պարգևելու: Իսկ Խորհրդային Միությունում հաստատված ամբողջատիրական վարչակարգը, մանավանդ ստալինյան բռնատիրական վարչակարգը, որը տասնյակ միլիոնավոր անմեղ մարդկանց զոհվելու պատճառ հանդիսացավ, մեծապես հարված էր հասցրել սոցիալիզմին և վարկաբեկել այն որպես հասարակական ֆորմացիա:

Ժխտելով զարգացման թե կապիտալիստական և թե սոցիալիստա-

կան ուղիները, Խոմեյնին առաջադրեց իր մոդելը, որը խարսխված է իսլամի հիմնարար և անաղարտ սկզբունքների վրա: Այդ մոդելի մարմնավորումը հանդիսացավ Իրանի Իսլամական Հանրապետությունը:

Չորրորդ - Խոմեյնիի ֆենոմենի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նաև անդրադառնալ ազգային-էթնիկական և ոչ իսլամական կրոնական փոքրամասնությունների խնդրին:

Խոմեյնին, լինելով մեծ քաղաքագետ, լավ էր հասկանում, որ իր քաղաքականության և իր առաջադրած մոդելի մասին մարդիկ գաղափար կկազմեն, ելնելով նաև այն քաղաքականությունից, որ Իրանի նոր իշխանությունները կորդեգրեն Իրանի ոչ պարսիկ ազգաբնակչության նկատմամբ: Բացի դրանից, ազգային փոքրամասնությունների նկատմամբ ճիշտ քաղաքականությունը սերտորեն առնչվում է Իրանի ներքաղաքական կայունության խնդրի հետ: Ուստի Այաթոլլա Խոմեյնին հռչակեց Իրանում բնակվող բոլոր ազգությունների իրավահավասարության և կրոնական բոլոր կոնֆեսիաների ազատության մասին, եթե նրանք գործեն սահմանադրության շրջանակներում: Անձամբ Խոմեյնին շատ ուշադիր էր ազգային փոքրամասնությունների պահանջների նկատմամբ, մերժում էր նրանց նկատմամբ որևէ բռնության կիրառումը և նրանց դիտում էր որպես մեկ միասնական ընտանիքի զավակներ:

Կցանկանայինք վերոնշյալը փաստել Խոմեյնիի՝ իրանահայերի նկատմամբ որդեգրված դիրքորոշմամբ, հենվելով մեր անձնական փորձի վրա:

1979 թ. հունվար ամիսն էր, երբ տողերիս հեղինակը, որպես Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահ, գտնվում էր Լիբանանում, որտեղ ընթանում էր քաղաքացիական պատերազմ և վտանգի էր ենթարկված նաև լիբանանահայ համայնքը: Մեր նպատակն էր անհրաժեշտ օգնություն կազմակերպել հայ համայնքին և չեզոքացնել այն ուժերին, որոնք ճնշում էին գործադրում դրական չեզոքություն որդեգրած լիբանանահայ համայնքի վրա: Դա իրանական հեղափոխության վաղորդայնին էր: Բեյրութում և Լիբանանի այլ վայրերում կուտակվել էին զգալի թվով իրանահայեր, որոնք Իրանում ստեղծված անկայուն և տագնապալի վիճակի պատճառով, հեռացել էին Իրանից, լքելով իրենց տները, կայքն ու ունեցվածքը: Նրանց մեջ տարածվել էին լուրեր, որ եթե շահը տապալվի և իշխանությունն անցնի նոր ուժերի ձեռքը, ապա նրանք կարող են վատ վերաբերվել հայերին, հալածանքի ենթարկել նրանց և բռնագրավել նրանց գույքը: Մենք համոզված ենք, որ այդ ստահոդ լուրերը տարածվում էին շահի կողմնակիցների կողմից, նպատակ ունենալով հայերին օգտագործել

3088

ընդդեմ Խոմեյնիի կողմնակիցների, հակադրել նրանց միմյանց և շիկացնել առանց այն էլ գերլարված մթնոլորտը:

Իրանահայերը շատ մտահոգ էին և նրանց ներկայացուցիչներն ինձ դիմեցին խնդրանքով. արդյոք հնարավոր չէ՞ պարզություն մտցնել այս հարցի մեջ և իմանալ Խոմեյնիի և նրա կողմնակիցների իսկական մտադրությունների մասին: Ճիշտն ասած, ես նույնպես մտահոգվեցի և խոստացա նրանց ինչ-որ բան անել:

Ես իմ այդ մտահոգության մասին տեղյակ պահեցի Լիբանանի շիա համայնքի իմ բարեկամներին, որոնք պետական բարձր դիրք էին գրավում Լիբանանում: Նրանք խոստացան ինձ իմ մտահոգությունը փոխանցել Խոմեյնիին: Լիբանանի շիա համայնքի ղեկավարներն այդ ժամանակ չէին թաքցնում էին իրենց կապերը Խոմեյնիի հետ, որ դեռևս գտնվում էր Փարիզում և չէր վերադարձել Թեհրան, և բացեիբաց խոսում էին Խոմեյնիի հանդեպ իրենց համակրանքի և այն օգնության մասին, որ նրանք ստանում էին Այաթոլլայից: Նրանք միաժամանակ խոստացան հնարավորության դեպքում կազմակերպել իմ հանդիպումը Խոմեյնիի որևէ ազդեցիկ մերձավոր օգնականի հետ:

Եվ, իրոք, այդ հանդիպումը կայացավ 1979թ. հունվարի վերջին, Բեյրութում, Լիբանանի շիա համայնքի ականավոր ղեկավարներից մեկի (հետագայում Լիբանանի պառլամենտի նախագահ, որը երկրորդ դեմքն է Լիբանանի պետական աստիճանակարգում) և Ամալ ռազմաքաղաքական կազմակերպության ղեկավար Հուսեյն Հուսեյնիի բնակարանում: Հանդիպմանը եկածը Խոմեյնիի երիտասարդ կուսակից Մուստաֆա Չամբանն էր, որը շատ չանցած, Խոմեյնիի իշխանության գլուխ գալուց հետո, դարձավ Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության նախարարը, ապա նաև Հեղափոխական խորհրդի նախագահը: Մեր զրույցն անցավ շատ բարեկամական մթնոլորտում, որի ընթացքում նա ինձ հայտնեց, որ Այաթոլլային տեղյակ է պահվել իրանահայերի մտահոգության մասին: Այնուհետև նա ինձ փոխանցեց Այաթոլլա Խոմեյնիի հետևյալ բառերը, որը ես դեռևս այն ժամանակ, թարմ հիշողությամբ անմիջապես գրի եմ առել. «Մենք խոր հարգանք ենք տածում տաղանդավոր հայ ժողովրդի նկատմամբ: Մենք լավ ծանոթ ենք հայ ժողովրդի պատմությանը, այդ թվում և 1915թ. հայոց ցեղասպանությանը: Իրանը այն երկիրը չէ և պարսիկներն էլ այն ժողովուրդը չեն, որ հայերի գլխին նոր ցեղասպանություն կազմակերպեն: Ես լրիվ երաշխավորում եմ հայերի ապահովությունը որպես Իրանի արժանավոր և իրավահավասար քաղաքացիներ»:

Այաթոլլա Խոմեյնիի այս հեղինակավոր կարծիքի մասին ես հատնեցի իրանահայերին, որոնց ուրախությանը չափ ու սահման չկար: Եվ, իրոք, կարող ենք ասել, որ Այաթոլլան եղավ իր խոստման

տերը և հայերի կյանքի ու գործունեության համար ապահովվեցին բոլոր այն պայմանները, որոնք արձանագրված են Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության մեջ:

Այսօր նշելով Այաթոլլա Ռուհոլլա Խոմեյնիի ծննդյան հարյուրամյակը և արժանին մատուցելով նրա հիշատակին, միաժամանակ, առիթից օգտվելով, ցանկանում եմ մեր երախտագիտության խոսքն ուղղել Իրանի Իսլամական Հանրապետությանը, որը օգնության ձեռք մեկնեց տնտեսական ծանր պայմաններում գտնվող Հայաստանի Հանրապետությանը, որը տնտեսական շրջափակման է ենթարկվել Թուրքիայի և Ադրբեջանի կողմից: Շնորհիվ այդ աջակցության, Հայաստանը ելք ունեցավ դեպի արտաքին աշխարհ և կարողացավ մեղմացնել անցման շրջանի և շրջափակման բացասական հետևանքները: Համոզված ենք, որ բարեկամական հարաբերությունները, որ հաստատվել են Հայաստանի Հանրապետության և Այաթոլլա Խոմեյնիի գաղափարների մարմնացումն հանդիսացող Իրանի Իսլամական Հանրապետության միջև ոչ միայն կպահպանվեն, այլև ավելի կզարգանան և կխորանան, ընդգրկելով համագործակցության նոր ոլորտներ:

ԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ
«Հրաչյա Աճառյան»
համալսարանի ռեկտոր

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ (ՌԱՀ) ՀԱՅԱՑՔՆԵՐԻ

Մտավորականության եւ դասախոսական կազմի դերը երկրի առաջընթացի եւ զարգացման գործում ոչ մեկի համար գաղտնիք չէ:

Այս խավի ներկայացուցիչները, որոնց ձեռքում է ցանկացած երկրի բարօրությունն ու նպատակաուղղվածությունը համարվում են ստեղծագործական եւ նորարարության առաջնորդներ ու ռահվիրաներ: Այս խնդիրը հատկապես այն երկրներում, որոնք զարգացման ուղին են բռնել եւ վերափոխումների փուլն են թեւակոխում, առավել ակնառու է:

Իրանը 1979թվ. երբ Իրանը իսլամական հեղափոխության հաղթանակի շեմին էր գտնվում, այնպիսի մտավորականներով էր օժտված, որոնց հայացքները արեւմտամետ էին եւ նրանց ստեղծագործական դաշտը հիմնված էր զուտ արեւմտյան արժեքների վրա, որոնք ոչ մի առնչություն չունեին Իրանի արեւելյան մշակույթի արժեքներին:

Այսպիսի պայմաններում Իմամ Խոմեյնին պայքարի մեջ մտավ եւ Իրանի ողջ մտավորականությանը կոչ արեց, որպեսզի վերադառնան իրենց արմատներին:

Իմամ Խոմյնին ժողովրդի ճակատագիրը եւ երկրի համակարգի տնօրինումը, մարդկային հզոր բազմություններից հետո, համարում է կրթված խավի պարտականությունը, եւ՝ արեւմուտքի (Ամերիկա) նպատակներից մեկն էլ՝ այս կենտրոնների գրավումն ու իր իղձերի կատարումը, իսկ հարվածները, որոնք ցանկացած երկիր կարող է իր վրա ընդունել սույն խավերի միջոցով ամենասարսափելի եւ ամենաազդեցիկ են, քանի որ հիմնական խնդիրը կամա թե ակամա, հենց այստեղ է:

Իմամ Խոմեյնին այս առնչությամբ իր ելույթներից մեկում նշում է «Սեր (Իրան) համալսարանները անցյալում կառավարվում էին մի խումբ արեւմտամետ ու վարձկան անձանց ձեռքով, որոնք նախ գերակշխում էին մեր հավատարիմ ու հանձնառու գիտնականներին, իսկ հետո արեւմուտքի սերը սերմանելով երիտասարդների սրտերում՝ նրանց խումբ - խումբ արտերկիր էին ճանապարհում, որպեսզի կրթվեն ու դաստիրակվեն արեւմուտքի ոչ ազգային ոգով ու ետ վերադառնան»: Սա այն ողբերգությունն էր, որ վերջին դարում թեւածում էր

իսլամական երկրների վրա:

Այս ուղղությամբ Իսլամական հեղափոխության նպատակներից մեկը արեւմտամետ հայացքների վանումն էր մտավորականների եւ համալսարականների ոգուց, քանի որ ազատ ու անկախ երկրի ստեղծման միակ երաշխիքը համալսարանների եւ ազգային մշակույթի ոչ կախյալ գոյությունն է: Իսկ համալսարանների վերահսկումը, ազգային մշակույթի վերացումը եւ օտար մշակույթի սերմանումը ու զարգացումը լայն խավերի մեջ, Ամերիկայի բուն նպատակն էր: Բնական է, երբ երկրի մտավոր խավը տարվում է օտար մշակույթով, ժողովուրդը ինքնաբերաբար գնում է նրանց հետեւից, իսկ սա նշանակում է ազգային մշակույթի ոչնչացում եւ մշակույթի անկախության կորուստ:

Իսլամական հեղափոխության առաջնորդը համալսարանի դերը՝ երկրի ճակատագրում հույժ կարեւոր է համարում եւ նշում. «Համալսարանները կարող են լինել ազգի եւ՝ երջանկության, եւ՝ դժբախտության աղբյուրը: Համալսարանում է որոշվում ազգի ճակատագիրը: Լավ համալսարանը ազգին դարձնում է երջանիկ, իսկ վատ համալսարանը ետընթացն է ապահովվում: Համալսարանի ցանկացած փոփոխություն ազդում է հասարակության ընդհանուր կացության վրա, քանի որ հենց նա է համարվում մտավորականության դարբնոցը, իսկ մտավորականությունն էլ իր հերթին՝ երկրի զարգացման եւ առաջընթացի առաջատարը: Մտավորականության ազդեցությունը հասարակության մեջ ակնառու է, իսկ օտարից կախվածությունը, ներառյալ մշակութային կախվածությունը, որը հետագայում մյուս բնագավառների կախվածության պատճառ է դառնում, ընչազուրկ երկրների տառապանքների ակունքն է դառնում:

Իմամ Խոմեյնին այն գրչին, որը ի շահ երկրի է գրում, ավելի է կարեւորում, քան նահատակների արյունը եւ մտավորականությանն ու համալսարանականներին միշտ հորդորում է, որպեսզի գրելիս ուշադրություն դարձնեն այն հանգամանքին, որ նրանց գրիչն ու լեզուն Աստծո ներկայությունն են խորհրդանշում, իսկ մի այլ տեղ նշում է. «Եթե որեւէ համալսարան վերափոխվում է, ապա դա նպաստում է նաեւ երկրի վերափոխմանը, ուստի համալսարանները պետք է քաջ գիտակցեն, որ վերակառուցելով համալսարանը ապահովագրում են երկրի ապագան»:

Սույն հորդորները վկայում են, թե Իմամ Խոմեյնին ինչպիսի կարեւորություն է տալիս մտավորականությանը եւ պրոֆեսորադասախոսական կազմին: Նա համալսարանի առողջ զարգացման եւ նրանց շեղումները կանխելու վերաբերյալ բազմիցս արտահայտվել է:

«Անհրաժեշտ է կանխել համալսարանի շեղումը: Եթե դա նկատվում

է որեւէ բնագավառում, հարկավոր է անմիջապես կանխել, իսկ այս կենսական խնդիրը, առաջին հերթին, պետք է կանխվի ողջ ուսանողների հզոր ձեռքով»:

Գեղաշնորհ Իմամ Խոմեյնին մտավորականության դերը համալսարանի անկախացման եւ ինքնագործունեության համար կարեւորում եւ նշում է. «Համալսարանի վերածնման եւ ինքնակառավարման հաստատման ամենակարեւոր լծակներից են՝ գիտական եւ հետազոտական զարգացումը, հնարավորությունների կենտրոնացումը, ստեղծագործական մտքի բազմակողմանի քաջալերումը, փորձագետների, մասնագետների եւ բոլոր նրանց ովքեր ի փառս երկրի գոյատեւման ի վիճակի են պայքարելու ընդդեմ տգիտության ու խավարի պատրաստումը»:

Այսպիսով մտավորականության դիրքն ու դերը հասարակության զարգացման գործում չափազանց կարեւոր եւ անհերքելի է, իսկ Իմամ Խոմեյնին դա խորապես ընկալել է եւ քանիցս արտահայտվել:

Իմամ Խոմեյնին, որպես մի առաջնորդ, որը ի վիճակի եղավ Իրանի Իսլամական Հեղափոխությունը հասցնել հաղթական ավարտի, մտավորականության վերածնունդը իր պայքարի հիմքն էր ընդունել, եւ համոզված էր, որ ազգի բարօրությունն ու թշվառությունը, երկրի անկախությունն ու կախվածությունը եւ ազատությունն ու կաշկանդումը համալսարանական դաստիրակության ենթական է, իսկ այն ինչ ուսուցանվում է համալսարաններում ու գիտական կենտրոններում ուղղակի ազդում է ամբողջ հասարակության վրա:

Իմամ Խոմեյնին, կարճ ասած, համալսարանը անվանում է մարդկային դարբնոց, եւ համոզված է, որ իրական մտավորականները, որոնք պիտանի են երկրի զարգացման համար, համալսարաններում են կրթվում: Համալսարանի ճիշտ դաստիրակումը փրկում է հասարակարգը, իսկ հակառակը հասարակությունը դեպի անդունդ է առաջնորդում:

Այն մտավորականը, որն իր ակտիվ մասնակցությունը բերեց երկրի բարգավաճման եւ ներհամալսարանական կյանքում, ապացուցեց, որ ինչպես Իմամ Խոմեյնին էր ասում, Իրանի Իսլամական հեղափոխությունը առաջին հերթին մշակութային հեղափոխություն էր:

Դժվարությունները, որոնք ծառացել էին Իրանի նախահեղափոխական ժողովրդի առջեւ իրականում մշակույթի, ինչպես նաեւ ազգային ինքնությունը կորցրած մարդու դժվարություններ էին, ոչ թե տնտեսական: Նրանք ձեռնամուխ եղան հեղափոխության, որպեսզի փրկեն իրենց ինքնությունը: Ինքնություն, որը գալիս է մի հնամենի եւ քաղաքակիրթ պատմության խորքերից: Իսկ Իմամ Խոմեյնու հեղափոխությունը միտված էր վերականգնելու այս ինքնությունը եւ ազգին

վերադարձնելու դեպի իր արմատները:

Մտավորականությունը սույն մշակութային հեղափոխության դրոշակակիրն էր, իսկ ինչպես Իմամ Խոմեյնին էր ասում, որ, «Եթե վերակառուցվեն համալսարանները, կվերակառուցվի նաեւ երկիրը», նրանք ձեռնամուխ եղան արեւմտյան մտքի ու իդեաների արմատախիլման, եւ հաղթանակեցին:

Այսօր ի փառս Իմամ Խոմեյնու մտքերի ու հայացքների Իրանը օժտված է այնպիսի համալսարանով, որում թեւածում է իրանական մշակույթն ու քաղաքակրթությունը, որը ոչ միայն հինավուրց մշակույթի զարթոնքն է արձանագրում, այլ ըստ «անցյալը ապագա ճանապարհի կանթեղն է» թեւավոր խոսքի, գնում է դեպի լուսավոր ապագա:

ԻԳՈՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բարձր տեխնոլոգիաների
հիմնադրամի տնօրեն

ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆԻՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Իսլամական հեղափոխությունը Իրանում պատմականորեն համընկավ խորհրդային համակարգի գաղափարա-քաղաքական եւ տնտեսական թուլացման եւ անգլո-սաքսոնական պահպանողականության հետ, որը փոխարինման եկավ ԱՄՆ - ի եւ Անգլիայի ժամանակավոր դիրքերի կորուստներին: Ամերիկյան այսպես կոչված «վերադարձի» ժամանակաշրջանը, այսինքն «Ռեյգանիզմի» եւ «Տեյչերիզմի» շրջանը, բնութագրվում է գաղափարախոսության դաժան պայքարի եւ գաղափարա - ուժային ռեժիմի նոր ալիքի սկզբով, որը ողղակիորեն կամ օբեյկտիվորեն պահանջ է ներկայացնում աշխարհի պետա-հասարակական այլընտրանքային դերի վերաբերյալ:

Արեւմուտքի հայացքը ուղղված Իրանա - իսլամական հեղափոխությանը, որպես տափակ եւ անհամ նացիոնալիզմի, արագորեն փոխվեց եւ Արեւմուտքը հասկացավ, որ գործ ունի բավականին խորը հասարակա - քաղաքական երեւույթի հետ, որը ներկայացնում է պահանջներ հասարակա - քաղաքական այլընտրանքային համակարգերի համաշխարհային նոր ձեւեր: Ատլանտիզմը աշխարհում իր քաղաքական եւ տնտեսական իշխանության գագաթնակետում ընդհարվեց պահպանողական-հեղափոխական ավանդական իրականությանը, որի դիմաց անհրաժեշտ էր մշակել պայքարի բացարձակապես նոր եղանակներ:

Մինչ 70-ական թվականների վերջերը երկու «բեւեռների» գեոքաղաքական հակասությունները համահարաբերական գաղափարական դուալիզմում էին, որը բացառում էր ցանկացած լուրջ այլընտրանք: Ծայրահեղ ձախ կամ աջ ռեժիմները, որոնք հակադրված էին երկու առաջատար «բեւեռներին», իրենցից ներկայացնում են երկու «բեւեռներից» մեկի միայն պալեատիվ շեղումը: Սույն վարչակարգերը չէին կարող գոյատեւել առանց վերոհիշյալ առաջատար «բեւեռների» եւ նրանց քննարկմանը, քանի որ որպես այլընտրանք ոչ մի հիմք չունեին:

Իրանում իսլամական հեղափոխության պատմական նշանակությունը նախ բաղկացած է իսկական այլընտրանքի ստեղծումով, ինչպես կոմունիստական տոտալիտարիզմը. այնպես եւ լիբերալ-տոտալիտարիզմը, իրենցից ներկայացնում են իմպերիալիստական էքսպանսիան

խոնարհված ձեւերով: Իրանում ստեղծվեց «երրորդ ուղու» հասարակությունը, իշխանությունը եւ գաղափարախոսությունը, որը պատմականորեն մարտահրավեր նետեց երկու իշխող գաղափարախոսություններին: Երկրում իմամի իրանա-շիաթական դոկտրինայի հիման վրա բավականին կարճ ժամանակահատվածում հաստատվեց պետական կառուցվածքը, որպես քաղաքական ավանդույթ եւ «երրորդ ուղղի»-ի գաղափարախոսությամբ հասարակակարգ, որտեղ ատլանտիզմը զգաց XX - դարի վերջում ամենաշատ վտանգը, ինչպես հայտնի է ԱՄՆ-ն եւ իր դաշնակիցները բավականին հաջողություններով համագործակցում են ամենատարբեր վարչակարգերում, որոնք բավականին հեռու են գտնվում լիբրալիստական արժեքներից: Տեղի է ունենում համագործակցություն բավականին ռադիկալ վարչակարգերի հետ, որտեղ կիրառվում է քաղաքական եւ կրոնական ռադիկալիզմը եւ նացիոնալիզմը: Իսլամում այնպիսի հասարկական - քաղաքական հոսքերի հետ ինչպիսին է վահաբիզմը, որի գաղափարախոսությունը թույլատրում է ամենառադիկալ ձեւերի կիրառումը քաղաքականության մեջ, որը ըստ էության հանդիսանում է ամերիկյան հետաքրքրությունների ուղեցույցը տարածաշրջանային հակամարտություններում: Դրանից առավել արեւմտյան երկրների բլոկը բոլորովին շահագրգռված է մի շարք ռադիկալ- կրոնական եւ նացիոնալիստական շարժումների եւ կազմակերպությունների գործողություններով եւ նմանապես ռադիկալ - քաղաքական վարչակարգերով:

Այսինքն պայքարը տեղի է ունենում ոչ թե արտահայտման ձեւով, այլ այլընտրանքի իսկական գաղափարախոսության լիբերալ - տոտալիտարիզմով:

Իրանի Իսլամականի Հանրապետության արտաքին քաղաքականության դիրքորոշումը այն դեպքում պարտության կմատնվեր, եթե «երրորդ ուղղի»-ի սկզբունքները հաջորդաբար չիրականային սոցիալ-տնտեսական բնագավառում: Մի քանի ձգձգված «անցման շրջաններից» հետո, որը մասամբ պայմանավորված էր Իրաքյան ծանր պատերազմով, Իրանը շիյեթի ֆեղի հիմունքներով եւ հեղափոխության սկզբունքներով հաջողությամբ իրագործեց «երրորդ ուղղու» հիմնական սկզբունքները, որը մշակվել են Իմամ Խոմեյնու անմիջական ղեկավարությամբ: Երկրում նպատակաուղղված ստեղծվեց բազմաշերտ տնտեսություն, որը ուներ բավականին կայուն հասարակական պաշտպանության համակարգ: Անցկացվեց կառուցողական քաղաքականություն ուղղված արդյունաբերության եւ ինֆրակառուցվածքային ճյուղերի հիմնական կառույցների ստեղծմանը:

Ալի Աքբար Հաշեմիյե Ռաֆսանջանու նախագահության օրոք երկրում հաջողությամբ անցկացվեցին տնտեսական բարեփոխումներ,

որի գլխավոր արդյունքը եղավ բազմամիլիոնանոց միջին խավի Իրանի հայրենասիրական ուժերի հենակետի ձեւավորումը: Մերձավոր եւ միջին արեւելքի ոչ մի երկրի չի հաջողվել, որ ընդամենը 10 տարվա ընթացքում, այսինքն 1989 թ.-ից պատերազմի ավարտից հետո կարողանա իրականացնի եւ ստեղծի այսպիսի հաստատած տնտեսությամբ եւ տեխնոլոգիայով արդիականացված հասարակարգ:

Իմպերիալիզմը ընդհարվելով այսպիսի բացառիկությանը, այդպես էլ չկարողացավ համապատասխան եզրակացությունների հանգել ստեղծված իրավիճակից եւ շարունակում է կիրառել կործանարար ձեւերը Իրանի նկատմամբ: Գոյություն ունեն հավաստի նշաններ, որոնք ապացուցում են այն, որ իմպերիալիզմը Իրանի նկատմամբ կիրառում է այն կործանարար ձեւերը, որը կիրառել է Սովետական Միության դեմ: Նախաձեռնելով անջատողական շարժումներ մարզերում, ռադիկալ ծայրահեղական կազմակերպությունների հիմնում երկրի ներսում եւ նրա սահմաններից դուրս, ստեղծում է դավանափոխական կարեւորագույն մարմիններ, որի շուրջը պետք է ձեւավորվի օպոզիցիոն շերտը: Կիրառվում են տնտեսական սանկցիաներ եւ գեոտնտեսական կոպիտ պայքար: Բնորոշիչ է, որ այսպես կոչված«ազդման ուղղակի միջոցները» կիրառվում են Իրանի փաստացի արտաքին քաղաքականության կապերի խզման եւ քաղաքականության, տեխնոլոգիաների եւ ներդրումների մեկուսացմանը: Մեծ Բրիտանիայի հետ վերջերս վերականգնած դիվանագիտական հարաբերությունը՝ իրականում քաղաքական շրջափակման խզման եզրահանգումն է Եվրոպայում: Չնայած տնտեսական լուրջ խնդիրներին, որ առաջացել են հիմնականում համաշխարհային նավթային շուկայի անկայունության հետեւանքով, Իրանը իրականացնում է գեոտնտեսական նախագծումներ Կենտրոնական Ասիայի, Անդրկովկասյան, Բալկանյան եւ արաբական երկրների տարածաշրջաններում եւ նույնպես Իրանի համար առաջնային նշանակություն ունեցող «հյուսիսային» ուղղության՝ Ռուսաստանի հետ: Իմպերիալիզմը ընդհարվեց Իրանի հասարակական եւ քաղաքական կյանքում երկու սկզբունքային ուղղություններին՝ իրանական մտավոր ընտրախավի ունակությանը ներքին քաղաքականությունում ճկուն փոփոխություններ կատարելու եւ Իրանում միջին խավի գաղափարի աճումը ընտրախավի շրջանում, որպես մեծ տերություն եւ գեոքաղաքական «բեւռի»:

Իմամ Խոմեյնու եւ Իրանի ղեկավարության ռադիկալ հակասիոնիստական դիրքորոշումը երկար ժամանակ ընկալվում էր, որպես արաբական եւ իսլամական երկրներին Իրանի կողմը հրապուրելու ձգտում: Թեհրանում արաբական եւ իսլամական երկրների համա-

խմբման գաղափարը միշտ դիտվում է որպես արտաքին քաղաքականության առաջնային ուղղություններից մեկը: Ցավոք խեղաթյուր աշխարհը անմիջապես չընկալեց, որ մարտահրավեր էր նետված ոչ միայն թշնամի երկրին, այլ հակամարդկային կրոնա-ազգային գերազանցելիության գաղափարախոսությանը: Աշխարհի ոչ մի կրոնում գոյություն չունի կրոնա-ազգային գերազանցելիության գաղափարախոսությունը եւ միայն սիոնիզմը, որպես նացիզմի նախահայր, օգտագործում է հրեականության որոշակի խոտորումներ իրականացնելու գերազանցելիության գաղափարախոսությունը: Իրանի մտավոր ընտրախավը սիոնիզմը դիտում է ոչ որպես հայրենադարձների գաղափարախոսություն, այլ որպես հարձակողական, նվաճողական գաղափարախոսություն, որը իր էությամբ հակամարդկային եւ հակակրոնական է:

Ժամանակը ցույց տվեց, որ սովետական գեոքաղաքական «բեւեռի» անկումով Իսրայելը եւ սիոնիզմը ակտիվորեն խրախուսում է այն երկրներին եւ վարչակարգերին, որոնք հակադրված են ոչ միայն արաբական երկրների, այլեւ Իրանի, Ռուսաստանի, Հայաստանի եւ նմանապես Չինաստանի դեմ: Այդ կապակցությամբ, ներկայումս Մոսկվայում ստեղծվել է ուժեղագույն եւ աննախադեպ հակաիրանական լոբբի, որը իրականացնում է ոչ թէ «պաշտպանական» քաղաքականություն, այլ քաղաքականության, տնտեսության եւ քաղաքակրթության ոչնչացում լայնածավալ տարածությամբ:

Յուրաքանչյուր երկրի եւ ազգի պատմական որոշակի ժամանակաշրջաններում անհրաժեշտ են այնպիսի անհատներ, ինչպիսին է Իմամ Խոմեյնին: Նա անկասկած հանդիսանում է ոչ միայն Իրանի պատմության, այլ համաշխարհային պատմության խոշորագույն դեմքերից մեկը, որը իր ժողովուրդին առաջարկեց բացարձակապես նոր գաղափար պետական եւ հասարակական կառույցի մասին: Եվ ի տարբերություն դասակարգային երկրների եւ այլ գաղափարների՝ «տնտեսությունը» առաջարկվեց եւ իրականացվեց քաղաքակիրթ համակարգում, որը հիմնված է իրանա-արիա-շիաթի խորը ավանդույթներով:

ՌԱՖԱՅԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴԵՐԸ ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Իման Խոմեյնիի աշխատությունների ընթերցումը հանգեցրեց ինձ անսպասելի մի եզրակացության. մեր երկրների միջև ակնհայտ են փուլերով շեղված զուգահեռներ, որոնք լուրջ մտորելու տեղիք են տալիս: Իման Խոմեյնիի ասույթներում, խրատներում եւ, հատկապես նրա կտակում արտահայտված է նույն հոգսն ու անհանգստությունը նախահեղափոխական եւ ապագա Իրանի համար, որն այսօր հուզում է մեզ, այս տեսակետից հետաքրքիր է այն տեղը, որն անկախության վերջնական կայացման գործընթացում Իմամը հատկացնում է կրթությանը եւ մշակույթին: Ահավասիկ ասույթներից մի քանիսը.

• «Մեր մեծ իսլամական հեղափոխությունը ավելի շատ բարոյական եւ հոգեւոր էր, քան քաղաքական ու հասարակական»: Այսինքն Իրանին, որպես նավթային կցորդի շահագործող գերտերությունների լուծը թոթափելը դեռ անկախության համար պայքարի ավարտը չէ. առաջիկայում լուծվելիք կարեւորագույն խնդիրներ կան...

• «Մեր ժողովրդի ամենամեծ դժբախտությունը մտավոր կախվածությունն է արեւմուտքից» եւ՝

• «Ներմուծվող արեւմտյան տիպի ազատությունը այլասերում է մեր երիտասարդությունը՝ այն դատապարտվում է իսլամով եւ բանականությամբ»:

Հաջորդ ասույթը մեզ եւս խորհելու նյութ է տալիս.

• «Վտանգավոր ազատությունները պետք է սահմանափակել»: Ես կավելացնեի՝ օրենքով: Նա չի մերժում արեւմուտքի նվաճումները անխտիր կերպով:

• «Մենք ընդունում ենք, արեւմուտքի նվաճումները, սակայն չենք ընդունում արեւմտյան անբարոյականացումը, որից իրենք էլ են դժգոհում»: Ու ճշտում է.

• «Դաստիրակությունը եւ բարոյական մաքրումը՝ լուսավորությունից կարեւոր են», ընդ որում, իր համոզմամբ.

• «Դպրոցական շրջանը ավելի կարեւոր է, քան համալսարանականը, քանի որ երեխան այդ շրջանում է զարգանում մտավորապես»: Հաջորդ ասույթն, ըստ իս, առանցքային է.

• «Յուրաքանչյուր հասարակության անկախությունը եւ սուվերենությունը ապահովվում են անկախ մշակույթով», եւ մեր օրերի ճիչը.

«Մշակութային դեգրադացիան քայքայում է երկիրը»:

• «Գաղութային մշակույթը տալիս է երկրին գաղութային երիտասարդություն»...

Ցավոք, մեզ մոտ, առայժմ, հակառակն է...

• «Մենք կինոյին դեմ չենք»: - Ասում է Իմամը, - «Դեմ ենք այլասերմանը»: Գիտության մասին.

• «Եթե մեր երկիրը նվաճի գիտությունը, ապա ոչ մի տերություն չի կարողանա թելադրել մեզ իր կամքը»: Ավաղ՝ մենք հայերս, փութաջան քայքայում ենք մեր գիտությունը...

Ըստ Իման Խոմեյնիի Ամերիկան զանգվածային լրատվական, առավելապես ռադիոի, հեռուստատեսության, կինոյի միջոցներով քայքայում է ժողովրդի բարոյականությունը, ազգային արժեքները եւ ինքնատիպությունը, դարձնելով նրան անտարբեր հայրենիքի նկատմամբ: Մասնավորապես այդ այլասերող ազդեցությանն են վերագրում այն դժվարությունները, որոնք կրեց իրանական բանակը՝ Իրաքի դեմ պատերազմում: Այն նույն բանակը, որը համարվում էր ուժեղագույնը ռեգիոնում: Ու, եթե չլիներ համաժողովրդական կամավորական շարժումը, երկիրը կհայտնվեր ծանր վիճակում, սակայն իմամը հեռու է կույր ատելությունից.

«Եթե Ամերիկան եւ սովետական միությունը չխառնվեն մեր ներքին գործերին եւ գերադասեն բարի հարաբերություններ, մենք կվերականգնենք նրանց հետ կապերը»:

Դառնանք մեր տարաբախտ հայրենիքին: Այսօրվա մեր վիճակը որոշ իմաստով հիշեցնում է Իրանը՝ իսլամական Հեղափոխության նախաշեմին. դուրս պրծանք Սովետական կոմունիստական գաղափարական մամլիչի տակից, ստացանք անկախ պետության կարգավիճակ, սակայն տեղնուտեղը ընկանք տնտեսական դաժան կախվածության մեջ: Բայց դա դժբախտության կեսն է . ի վերջո տնտեսապես կատարյալ անկախ չեն անգամ գերտերությունները. գայլերն էլ են կախված ոչխարների հոտից: Ամենավտանգավորը կազմալուծված տնտեսությամբ պայմանավորված ծանրագույն սոցիալական վիճակին գումարվող ու երիտասարդ հոգիները այլասերող, չակերտավոր, միջին վիճակագրական մշակույթի էքսպանսիան է, դա անկախության ու ազատության կործանման սկիզբն է: Իրոք, եթե երիտասարդը կլանում է հեռուստաէկրաններից հեղեղվող անճաշակ արվեստի նմուշներ, դաժանությամբ ու սեռական տեսարաններով հագեցած ֆիլմեր (այնպես, որ վախենում ես երեխայի ներկայությամբ միացնել հեռուստացույցը), կտրվում ազգային արվեստից ու մշակույթից, երբ երիտասարդները ժամանակակից

երեւալու ձգտումով կապկորեն ընդօրինակում են արտաքին տեսքն ու վարքը, նորելուկ երգահանները շտամպում են միօրական ու միօրինակ երգեր, որոնք, մի քանի օր անց, ինքը հեղինակը կդժվարանա վերարտադրել, երբ ձայնը եւ շնորհքը փոխարինվում են մերկ ազդրերով կամ մազակալած գլխով ու մոլագար շարժումներով, երբ տարիքավորի նկատմամբ նախկինում ազգային հատկանիշ հանդիսացող հարգալից վերաբերմունքը տեղի է տալիս լպիրշության հասնող անշնորքության, ապա հայրենիքին կապող քիչ բան է մնում ամենուր նույն չակերտավոր մշակույթն է: Չկա մեր ընթերցասեր երիտասարդությունը, այն փոխարինվել է էկրանասերով: Մեռնում է հայրենասիրությունը. համեմատեք 65-ի կամ 88-ի այսօրվա քաղաքանապես ու հայրենասիրական առումով իներտ սերունդը: Հոգեւորը գիջել է իր տեղը նյութապաշտության, իսկ այս դեպքում սկսում է աշխատել ազգակործան «որտեղ հաց, այնտեղ կաց» կարգախոսը: Այսինքն, անկախ ենք այնքանով, որ կարող ենք ազատ հեռանալ երկրից: Ու հեռանում են... շարվեշարան...

Դա արդեն ռեալ սպառնալիք է երկրի սուվերենությանը: Իրանը նման իրավիճակում գտել է ազգային ու կրոնական առանձնահատկություններով թելադրված իր լուծումը: Մենք պետք է գտնենք մերը: Ու, քանի որ խնդրի բուն էությունը նույնն է, ապա հարեւան Իրանի փորձը արժանի է սեւեռուն ուշադրության եւ ուսումնասիրության:

ԳԱՌՆԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ
Իրանագիտության կովկասյան
կենտրոնի տնօրեն

ԿՆՈՋ ՏԵՂԸ ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ (ՌԱՀ) ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Իմամ Խոմեյնու մասին խոսելը չափազանց դժվար է: Խոսել մի այնպիսի անձնավորության վերաբերյալ, ով կանգնած է պետության գագաթնակետին, XX դարի պատմության կերտողների դասին է պատկանում, իսկապես դժվար է: Այն բոլոր ստեղծագործությունները, որոնք մինչեւ այժմ հրատարակվել են գրքի, հոդվածի, տեսաժապավենի, ձայներիզի, ելույթի տեսքով, այնքան բազմաթիվ ու զանազան են, որ քեզանից անկախ ընկնում ես այս խոշոր անհատականության խոր մտքի եւ հայացքների գիրկը, անհատականություն, որ ընթացիկ դարի խոշորագույն հեղափոխություններից մեկի ծագման պատճառը դարձավ:

Ինձ համար, որպես մի հայ գրող եւ հետազոտող, չափազանց դժվար է խոսել իսլամ առաջնորդի մտքերի մասին: Նրա մասին խոսելու համար հարկավոր է ճանաչել իրանի հինավուրց պատմությունը, իրազեկ լինել իսլամի կրոնին, որը, բարդ լինելով հանդերձ շատ պարզ է, եւ վերջապես քաջատեղյակ լինել Իրանի մուսուլման ժողովուրդի բարքերին, ավանդույթներին ու մտավոր կարողություններին: Սակայն այն պարտքի զգացումը, որն ունեմ Իրանի ժողովրդի եւ մեր հարավային հարեւան երկրի 1979թ. հեղափոխության նկատմամբ, հարկ համարեցի սույն հավաքի ընթացքում, որը կազմակերպվել է վեհափառ Իմամ Խոմեյնու ծննդյան 100 - ամյակի կապակցությամբ, հակիրճ ներկայացնել Իրանի պատմության ամենախոշոր ու սխրագործ դեմքերից մեկի տեսակետների մի չնչին մասը: Իմ կողմից ներկայացվելիք թեման վերաբերում է կնոջ քաղաքական կերպարի ազդեցությանը՝ իսլամական հեղափոխության հաղթանակին, մասնավորապես եւ նրա տեղը Իմամ Խոմեյնու հայացքներում հատկապես: Լիահույս եմ, որ այս սեղմ ժամկետում ինձ կհաջողվի ինչ որ չափ ձեզ ներկայացնել նրա հայացքների մի մասը միայն:

Ընթացիկ դարը, որին ընդամենը մի քանի ամիս է մնացել, հարուստ էր յուրահատկություններով: Նրանցից մեկը վերաբերում է կնոջ կարեւորության եւ կանանց մասին արծածվող բազմաթիվ հարցերին: Կանանց հետ կապված հարցերը, այս առնչությամբ պատմական հետամնացության խնդրի լուծումը, կանանց հասարակական

իրավունքների վերականգնումը այնքան է կարեւոր, լուրջ ու ճակատագրական, որքան նուրբ, ստույգ եւ ճշգրիտ, իսկ ցանկացած անուշադրություն, պարզամտություն, լոգունգաբանություն,եւ քաղաքական խաղ կարող է ծանր ճգնաժամեր ծնել, որոնք էլ իրենց հերթին շեղումների եւ քայքայման պատճառ կդառնան: Կնոջ հետ կապված զանազան բարդությունների ի հայտ գալու միակ պատճառը արդի հասարակություններում, թերեւս կրոնական մշակույթի նկատմամբ ճիշտ ձեւավորված մտքի բացակայությունն է: Իրանում սույն բարդությունների ընդհանուր հատկանիշը ոչ այլ ինչ է, եթե՝ ոչ մտավոր-մշակութային ճգնաժամ, իսկ կնոջ հարցի շուրջ քննարկումները՝ ցանկալիին հասնելու համար հենց այս տեսանկյունից են կարեւորվում: Այլ կերպ ասած այս ճգնաժամը լուծելու համար նախ հարկավոր է ըմբռնել նրա էությունը, ճշգրիտ մշակութային քայլերի միջոցով լուծել այն եւ այսպիսով ճանապարհ բացել բազմաթիվ այլ խոչընդոտները լուծելու համար: Կնոջ հրաշագործ դերը մարդու թաքնված ունակությունները ի հայտ բերելու գործում նրա խոշորագույն հատկությունն ու արժանիքն է, իսկ կնոջ ազդեցությունը հասարակության մեջ բխում է հենց այս հատկանիշներից:

Ի հեճուկս այն մտքի, որ գուցե մեզանից ոմանք փայփայում են, կինը իսլամի հայացքներում մի վեհ արարած է, որն ի վիճակի է եւ՝ իրեն, եւ՝ մարդկային հասարակությունը դեպի երջանկություն առաջնորդել: Իսլամը այսպիսի հայացքով է նայում կնոջը, այն էակին, որն իր ուղղակի ներկայությամբ, եւ, որպես տղամարդու արժանի կողակից, այնպիսի զավակներ՝ տաղանդավոր տղաներ ու աղջիկներ՝ ծնել, որոնք մարդկության ապագան են կերտելու:

Կնոջ տեղը եւ դերը, որպես հասարակության ամենակարկառուն խավի, բոլոր տեսանկյուններից, ընդմիշտ իսլամի ուշադրության կենտրոնում է եղել: Հոգեւոր կտրվածքի հետ զուգահեռ, իսլամը կնոջ առարկայական եւ հասարակական տեղն էլ է որոշել, եւ նրա վերաբերյալ համապատասխան կանոնադրություններ եւ օրենքներ է սահմանել: Որպես օրինակ կարելի է նշել «Հեջաբ» - ը: Դժբախտաբար արեւմուտքում «Հեջաբ»-ի նկատմամբ հակառակ պատկերացումը կա, մինչդեռ դա իսլամի ամենահասարակական վճիռներից մեկն է, որ կնոջ ներկայության անհրաժեշտությունը հասարակության մեջ հաստատում եւ ամրագրում է:

Իսլամը կնոջ ներկայությունը հասարակական տարբեր ոլորտներում շեշտում է եւ այս առթիվ անհրաժեշտ կանխատեսումները արել է. Կնոջ ներկայությունը իսլամի հասարակական հարաբերություններում, արծարծվում է որպես անբիծ համակրանքի եւ առաքինության առանցք, իսկ նրա էության մերժումը անհարիր է:

Իրանի Իսլամական Հեղափոխությունը Իրանի ժողովրդի եւ որոշ այլ հասարակությունների մշակութային, քաղաքական եւ հասարակական հարաբերություններում հսկայական վերափոխումների եւ նորանոր տեսակետների առաջացման պատճառ դարձավ:

Մշակութային բարեփոխության նշանակալից ձեռքբերումներից մեկը կնոջ կարգավիճակի եւ դերի վերածնունդն էր հասարակության մեջ:

Իրանի կանայք իսլամական շարժման հենց առաջին պահից հաստատվեցին իսլամական հանրապետության կառուցման եւ զարգացման տարբեր ոլորտներում, իսկ հետագայում արդեն նրանց ընդգրկումը աշխատանքային ասպարեզներում ակնառու դարձավ: Կանանց ներկայությունը այնքան զգալի էր ու սրտաբուխ, որ Իմամ Խոմեյնին նրանց անվանեց «Շարժման ղեկավար »եւ« Բարեգործություններնի ակունք», եւ նրանց ներկայությունը զանազան ոլորտներում՝ իսլամական հանրապետության պարծանք:

Այս տեսակետի բյուրեղացումը, Իրանի Իսլամական Հեղափոխության առաջնորդի խոսքերում շոշափելի է. «Ազգերը պարտական են տղամարդկանց, իսկ կանանց՝ առավել եւս: Կանայք են շունչ տվել ու դաստիրակել հասարակության քաջարի զավակներին: Ղորանը մարդաստեղծ հեքիմ է, կինը՝ նույնպես:Նրանց պարտականությունը մարդ ստեղծելն է: Եթե մարդաստեղծ կանանց խլեն հասարակությունից, ապա ազգերը պարտության կմատնվեն եւ կոչնչանան: Այո, կպարտվեն եւ կոչնչանան: Կանայք են զորացնում եւ հզորացնում ազգերին: Կանայք իսլամի գլխավորությամբ նույնիսկ պատերազմել են տղամարդկանց կողքին: Կնոջ դիրքը վեհ է: Նրանք բարձրաստիճան են: Կինը իսլամի տեսանկյունից վեհաշուք է»:

Իմամի ելույթներում բազմիցս կարելի է հանդիպել այնպիսի արտահայտությունների, որոնցում կինը գնահատվում է ըստ արժանվույն: Օրինակ.

«Կինը հավասար է տղամարդու հետ: Կինը, ինչպես տղամարդը ազատ է իր ճակատագիրը տնօրինելու, իր գործունեության ոլորտը ընտրելու», կամ.

«Ըստ իսլամի կինը իրավունք ունի մասնակցելու զարգացման բոլոր բնագավառների աշխատանքներին այնպես, ինչպես տղամարդը: Կինը պետք է մասնակցի երկրի ճակատագրի կառուցման գործընթացներին», կամ . . .

«Իսլամի համակարգում, կինը որպես մարդկային էակ կարող է իր ակտիվ մասնակցությունը բերել, իսլամական հասարակարգի ստեղծման գործում».

Պատվիրակության կազմը, որ տարիներ առաջ ներկայացավ

նախկին Սովետական Միության ղեկավար «Գորբաչով» -ին հանձնելու նրան իմամի պատմական ուղերձը, վառ ապացույցն է այն բանի, թե Խոմեյնին ինչքան բարձր էր գնահատում կնոջ դերը իսլամական հասարակության մեջ: Պետք է տեսնել, թե Իմամ Խոմեյնին, վերոհիշյալ պատվիրակության կազմով, որը բաղկացած էր հոգեւորական դասից, համալսարականներից եւ «կին» ներկայացուցիչներից, ինչպիսի խորհրդանշական ոճով էր կանխագուշակում արեւելյան բլոկի փլուզումը այս երեք խավերի մասնակցությամբ:

Բոլոր դեպքերում իմամի ակնհայտ դիրքորոշումները եւ ելույթները կանանց իրավունքների վերաբերյալ հավաստում են, որ նա, մի կողմից, ձանձրացել ու զայրացել է այն իրողությունից, որ իբր թե, որոշ մուսուլման երկրներում կնոջ իրավունքները սահմանափակ են, որ կինը արհամարված է, իսկ մյուս կողմից չի ընդունում նաեւ արեւմտյան կնոջ իրավունքները պաշտպանող հավակնորդների ծայրահեղ դիրքորոշումները, որոնք պարզապես մերժում են կնոջ բնական բնույթն ու արժանիքները: Նրա տեսանկյունից կինը մարդ կոչեցյալի դաստիարակն է, նրա երազանքը իրականացնողի խորհրդանիշ:

Միգուցե լսել եք նրա հանրահայտ ասացվածքը.

«Կնոջ գրկից տղամարդն է համբարձվում»:

Ինչպես նկատեցիք, իսլամի հզոր առաջնորդներից մեկի տեսակետները կնոջ նուրբ ու զգայուն կերպարի վերաբերյալ, գուցե ոմանց համար նորույթ լինի, եւ իր բովանդակությամբ տեղավորված չլինի մեր հոդվածում: Սակայն հուսով եմ, որ քիչ չէ նաեւ հետաքրքրասերների թիվը, որոնք անկախ կրոնական ազգային եւ քաղաքական պատկանելությունից կզբաղվեն Իրանի իսլամական հեղափոխության առաջնորդի ստեղծագործությունների ուսումնասիրմամբ եւ արդարացի դատողություններ կանեն:

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ

ՄՈՀՍԵՆ ԱԲՈՒԹԱԼԵԲԻ
ԻԻՀ դեսպանության
մշակույթի կենտրոնի ղեկավար

ՄԱՐԴԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԵՀԱՆՁՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հանուն Աստծո, որ արարեց կյանքը,
Արարեց լեզուն՝ իմաստավորելու կյանքը:

Ես իմ հերթին Իմամ Խոմեյնու ծննդյան 100- ամյակի կապակցությամբ իմ ջերմագին շնորհավորանքներն ու շնորհակալություններն եմ հայտնում գիտության, գրականության նվիրյալներին ու սիրահարներին, մշակույթի ու արվեստի գործիչներին, մարդկային մշակներին եւ Ձեզ՝ Ազգային ակադեմիայի հարգարժան, իմաստուն գիտնական Ֆադեյ Սարգսյանին եւ ԻԻՀ դեսպանությանը:

ՀՀ ԳԱԱ նախագահության աջակցությունը եւ համագործակցությունը՝ այս սրբազան նիստը կազմակերպելու գործում մի ավետաբեր քայլ է, որն անշուշտ կնպաստի Իրան - Հայաստան մշակութային եւ երկկողմ հետաքրքրություն առաջացնող ոլորտների առավել զարգացմանը:

Այսօր Իմամ Խոմեյնու ծննդյան 100- ամյակն է: Անկասկած մեկ դար առաջ ոչ ոք այս լուսավոր աստղի՝ Իմամի հայտնությունը, որը աշխարհ եկավ ճեղքելու մթությունն ու տգիտությունը, եւ նոր պատուհան բացելու դեպի պատմություն, չէր պատկերացնում: Իմամ Խոմեյնին, որպես մի անփոխարինելի եւ ականավոր դեմք, Իրանի արդի պատմության, եւ ընդհանրապես վերջին դարաշրջանում մնայուն անուն է: Խոսել օվկիանոսի մասին վեր է մի չնչին կաթիլի ուժերից, ինչպես ծովը չի տեղավորի մի նեղլիկ սափորում, սակայն Աստծո օգնությամբ, ուզում ենք ճաշակել այդ ծովից:

Մարդը Աստծո արարածն է: Հողը, երկինքն ու երկիրը, ծովը, սարերն ու անտառները, ստեղծվել են նրա համար: Մարդը միակ էակն է, որի համար ստեղծվել են մյուս բոլոր կենդանիները: Կարճ ասած, կենսական աշխարհը ստեղծվել է մարդու ստեղծագործության հիման վրա, Արարիչը հենց արարչական իսկ պահից իր նշաններով ու ներշնչանքներով մարդուն երջանկության ուղու վրա է դրել: Աստծո փառաբանումը, կատարելության հասնելը, արարչի փոխանորդությունը երկրի վրա մարդ արարածին ստեղծելու նպատակն է:

Մարդը այնպիսի վեհությամբ է օժտված, որին առաջնորդելու համար, ծնրադրության ձեւը ուսանելու համար եւ նրան կատարելության աստիճանի հասցնելու համար առաքյալներ օծվեցին: Մարդու դիրքը այնքան հզոր է, որ Աստված նրան հրավիրում է ընկերակցության, նրան անվանում՝ Ազնվագույն արարած եւ կեցության ու հանդերձանքի ճշմարտության հասնելու նպատակով ողջ աշխարհը նրան է տրամադրում, որպեսի իր օրապահիկը հայթհայթի ու փրկության արժանանա:

Նախքան տարբեր ուսմունքների ի հայտ գալը, մարդը ինչ - որ կերպ կրոնապաշտ էր, եւ ընդհանրապես մարդուն մյուս էակներից զանազանելու գլխավոր գործոնը կրոնն է: Պատմական հնագույն հուշարձանները, այդ թվում՝ Եգիպտոսի՝ բուրգերը, սեպագիր արձանագրությունները եւ հնդկական «Հանճարեղ ստեղծագործությունները», որոնք մեզ են հասել քաղաքակիրթ մարդկությունից, ակնառու գաղափարներ, իղձեր եւ կրոնական գործունեություններ են պարունակում իրենց մեջ: Այս բոլորը մարդկային վեհանձնության ու դիրքի ճանաչման նպատակներն են հետապնդում: Լավ ու վատ մարդը, լավ ու վատ խոսքը, արարքը եւ միտքը, լավության ու վատության չափանիշները, հանդերձյալ աշխարհի ավետումը անմեղորեն եւ ահեղ դատաստանում պատժվելու սարսափը մեղավորներին յուրահատուկ ձեւով են նկարագրել բոլոր կրոններում, որպեսզի կարողանանք պատասխանել այն հարցերին թե՝ որտեղից ենք եկել, ինչու ենք եկել եւ ուր ենք գնալու:

Մարդ արարածը աշխարհում հաստատված բոլոր ուսմունքների եւ կրոնների հիմնական առանցքն է: Ձգտել է իր գաղափարախոսությամբ նախ եւ առաջ ճանաչվել, իսկ հետո իր ուժերի եւ ունակությունների սահմաններում ճանաչել եւ ճանաչեցնել աշխարհը: Բոլոր կրոնները, գաղափարախոսությունները եւ ուսմունքներն ունեն մի ընդհանրություն եւ դա մարդու մշակումն է: Իսլամ կրոնը ունենալով բազմաթիվ ընդհանրություններ մյուս կրոնների եւ հատկապես քրիստոնեության հետ, հիմնական շեշտը դնում է մարդ արարածի ինքնությունը ուսումնասիրելու, եւ նրան հատուկ ուշադրություն դարձնելու վրա: Ղորանը՝ մուսուլմանների սուրբ գիրքը բազմիցս անդրադառնալով պատմական իրադարձություններին, դեպքերին եւ ակնարկներին, հետեւյալ միտքն է արտահայտում. «Բարեգութ Աստված Ղորանը ուսուցանեց, մարդ արարածին ստեղծեց, խոսելու ձիրքով օծեց նրան, արեւը ու լուսինը արարեց՝ տրամաբանական հաշվարկներով: Բույսը, ծառը եւ աստղերը երկրպագում են նրան, երկինքը ստեղծեց, ամեն ինչում մակարդակ սահմանեց: Մի այլ տեղում մարդու առավելությունը մյուս մարդու նկատմամբ երկնային բարեպաշտության կետ համարեց: Մարդու՝ իր կողմից իր ճակատագիրը տնօրինելու սկզբունքը, ոչ այլ

ինչ է, եթե ոչ մարդկային վեհանձնության գնահատում: Իսլամի կրոնը, որ կրոն է բնության ու էության, եւ իր օրենքների ու վճիռների տեսանկյունից չի տարբերվում մարդկային աստվածատուր բնությից, աներկբայորեն համապատասխանում է մարդու էությանը: Ղորանը խստագույնս դատապարտում է ազգային եւ էթնիկական խտրականությունները, որոնք տարածված են բազմաթիվ հասարակություններում, եւ փոխարենը խրախուսում է մարդկային իրավունքների հավասարությունը: Ղորանում ասված է.«Մարդիկ, մենք ձեզ արարել ենք, որպես տղամարդ եւ կին, հետո ձեզ խումբ - խումբ բաժանել, հետո տոհմ - տոհմ, որպեսզի ճանաչում ձեռք բերեք, թե, հիրավի, ձեզանից ամենապատվականները եւ ամենաարժանավորները՝ ամենաբարեպաշտներն են:

Բռնակալ ու կրոնական իշխանավորները պատմության ընթացքում ձգտել են իրենց ձեռքն առնել երկնային ողջ պարգեւները, նույնիսկ մարդ արարածին դարձնել իրենց գերին ու ստրուկը: Մաշկի գույնը, ցեղը, մինչեւիսկ կրոնը, մարդն ինքը, եւ վերջապես դրախտային արժեքները նրանց ձեռքում փոխարկվեցին գործիքների:

Այս գործոնները II համաշխարհային պատերազմից հետո, ծավալապաշտ ուժերի կամքով առավել ուժգին թափ ստացան: Իրան աշխարհն անգամ զերծ չմնաց հարվածներից:

Իմամ Խոմեյնին այնպիսի իրավիճակում ձեռնամուխ եղավ իր քայլերի իրականացմանը, որ ոչ ոք նման ավարտ չէր պատկերացնում: Նա շնորհիվ կրոնական պատվիրանների օժանդակեց, որպեսզի ժողովուրդը, իսկ արդյունքում հասարակությունը, ճանաչի իր արժանի տեղը, արքնանա թմբի, Աստծո կամքը արտացոլի իր կամքում եւ վերջապես կատարի իր մարդկային պարտականությունները: Իմամ Խոմեյնին մարդու արժանապատվությունը տեսնում է ազատության մեջ եւ նշում. «Միաստվածության սկզբունքը մեզ հուշում է, որ մարդկությունը իրեն պիտի հանձնի միայն տիրոջ, եւ ոչ ոքի հլու հնազանդ չդառնա, բացի տիրոջից: Ոչ մի մարդ արարած իրավունք չունի որեւէ մարդու ստիպել, որպեսզի իրեն գերի դառնա: Ոչ ոք իրավունք չունի որեւէ մեկին, հասարակությանը կամ ազգին զրկել ազատությունից, եւ իր հարաբերությունները նրանց հետ հաստատել այնպես, ինչպես ինքն է կամենում»:

Իմամ Խոմեյնին գտնում է, որ մարդու արժանապատվությունը նրա կերպարի գնահատման մեջ է: Նա մարդուն հիշատակում է, որպես լույս, որպես աստվածային «Այե»:

Իմամը աշխարհի եւ մարդու մասին այսպես է ասում.«Ողջ աշխարհը Աստծո անունով է: Աշխարհի բոլոր արարածները Աստծո կնիքով են դրոշմված: Ողջ տիեզերքը Աստծո ձեռքով է արարվել, եւ այս բոլորը

լույսի ու Տիրոջ արտացոլումն է, Աստծո ճշմարիտ գոյությունն է . . . Լույսը, որ կա Տիրոջն է: Այն ինչ հայտնի է լույս է: Մարդը ինքը հայտնություն է: Մարդը լույս է»:

Իմամի ըմբռնումը քաղաքականությունից, պայքարից ու մարտնչելուց բխում են լույսի կենսաղբյուրից, եւ կրոնամիստիկական խորունկ ճանաչումից, եւ հենց այս պատճառով անձնուրացությունը ամենառաջնակարգ քայլն է համարում: Իմամի տեսանկյունից իշխանությունը առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում: Իշխանությունը եւ հասարակական արդարությունը միջոց են մարդուն վեհ դիրքերին հասցնելու համար: Մարգարեները եկան, որպեսզի մարդուն Աստծո կերպարանք տան, ամեն ինչ սրբացնեն եւ այն, ինչ տեսանելի է, լույսի վերածեն:

Իմամը մարդու եւ մարդկային խմբակցությունների դերը իշխանություն իրականացնելու մեջ չափազանց կարեւորում է: Նա Իրանի իշխանության վերաբերյալ նշում է .«Այստեղ իշխում է ժողովրդի ձայնը: Այստեղ ժողովուրդը ինքն է իշխում: Իշխանավորին ժողովուրդն է կարգում, ուստի ոչ ոք իրավունք չունի խախտելու ժողովրդի կամքը: Մեր ողջ կարողությունը ժողովուրդն է»:

Իմամի տեսակետները մարդու, մարդկային վեհության, նրա ինքնահաստատման, ազատության, ինքնորոշման եւ ճակատագրի նկատմամբ իսլամական հեղափոխության շնորհիվ ամբողջությամբ իրականացան: Սա տեսնելով, ողջ ժողովուրդը շրջապատեց Իմամի լույս կանթեղը եւ սկզբից մինչեւ վերջ նրա հավատարիմ գաղափարակիցը դարձավ: Իմամը իշխում էր մարդկանց սրտերը եւ հենց այս պատճառով նրա անունը եւ հիշատակը միշտ վառ կմնա միլիոնավոր հավատացյալների եւ ընչազուրկների սրտերում: Բացի դա Իմամի հայացքները եւ գաղափարները, որպես աշխարհի ամենաժողովրդավար առաջնորդներից մեկը, կլինեն աշխարհի ողջ մտավորականության եւ տեսաբանների ուշադրության կենտրոնում: Իմամ Խոմեյնին մի երեւույթ է, որի ազդեցությունը ոչ միայն ներկա, այլ նաեւ ապագա սերունդների վրա անհերքելի է:

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Այսօր, երբ երկու երկրների տասնյակ տարիների բարձունքից հետադարձ հայացք ենք նետում Իրանի Իսլամական Հեղափոխության փրկության իրադրաձություններին եւ նրա առաջնորդ Իմամ Այաթոլլա Խոմեյնու գործունեությանը, հիրավի կարող ենք արձանագրել, որ այն XX դարի նշանավոր իրադարձություններից մեկն էր: Հեղափոխության գաղափարախոսն ու ղեկավարը՝ Իմամ Խոմեյնին, շատ բարձր է գնահատել այն, ասելով, որ «Այս հեղափոխությունն իր բովանդակությամբ եղել է լավագույնը եւ մեծագույնը»:

Մեր հարավային մեծ հարեւան Իրանի ժողովուրդը հեղափոխական եւ ազատագրական մեծ պայքարի հիանալի ավանդույթներ ունի: Ուստի, երբ 1953թ. ամերիկյան օգնությամբ Իրանի շահը ջախջախեց ընդդիմությանը եւ իր ձեռքում կենտրոնացրեց անսահմանափակ իշխանություն, որի արդյունքում այդ հարուստ երկիրն աստիճանաբար վերածվում էր կիսագաղութի, Իրանի ժողովուրդը համառ պայքար մղեց այդ քաղաքականության դեմ: Վարչակարգի հակառակորդներին ամենաբիրտ եղանակներով ոչնչացնում էր ՍԱՎԱԿ- ը: Ամերկացիներն աստիճանաբար իրանից դուրս մղեցին անգլիացիներին եւ փաստորեն իրենց վերահսկողության տակ առան երկրի հարստությունները, մասնավորապես նավթի շահագործումը միաժամանակ, Իրանին վերապահելով ժանդարմի դեր Պարսից ծոցի տարածաշրջանում:

Կամենալով արգելակել կոմունիստական գաղափարների մուտքը Իրանի շահը ԱՄՆ-ի նախագահ Քենեդիի խորհրդով ձեռնամուխ եղավ հեղափոխությունը վերեւից իրականացնելուն: Այսպես կոչված՝ ճերմակ հեղափոխության կարգախոսներն դարձան «Պայքար խաների դեմ, կալվածատերերի դեմ», «Հող ֆերմերներին»: 1962թ. հունվարին ժողովրդի օժանդակությունն ստանալու նպատակով, հօգուտ բարեփոխությունների հանրաքվե անցկացնելու փորձ արվեց: Կառավարությունը հանդես եկավ «Բարենորոգումներին՝ այո, դիկտատուրային՝ ոչ» կարգախոսով, սակայն չնայած կարգախոսի գայթակղությանը, ժողովուրդը հանրաքվեն տապալեց: Դրան մասնակցեցին միայն իշխանությունների գործակալները:

Հանդես գալով քարոզներով, Իմամ Խոմեյնին Իրանում կատարվող

բոլոր հանցագործությունների գլխավոր մեղավոր էր համարում շահին, դիտում էր նրան որպես Իսրայելի վստահված անձ եւ կոչ էր անում տապալել նրա իշխանությունը: 1963թ. հունվարի 3- ին իմամ Խոմեյնին պատմական ճառ արտասանեց Ֆեյզիեի հոգեւոր սեմինարիայում, որը խորդադի 15-ի ապստամբության սկիզբը հանդիսացավ: Խոմեյնին ձերբակալվեց եւ նետվեց Կասրի բանտը: Ձերբակալվեցին եւ նրա կողմնակիցները: Դրան ի պատասխան Ղոմում ժողովուրդը ոտքի ելավ: Ժողովրդի արդար բողոքին իշխանությունները պատասխանեցին գնդացիրների կրակով: Ելույթը ճնշվեց, ապստամբական շարժումը տեղափոխվեց Թեհրան, Մեշհեդ, Շիրազ եւ այլուր: Ապստամբությունը տանկերով ճնշեցին, սակայն Իրանի Իսլամական Հեղափոխության սերմերն արդեն շաղ էին տրված: Ժողովուրդը նահանջել էր, սակայն վերջնականապես պարտված չէր:

Իրանի շահը եւ նրա կառավարությունը գնալով դառնում էին ԱՄՆ-ի արբանյակներ: Բանտից ազատված Իմամ Խոմեյնին շահի ծննդյան օրը արտասանած ճառում վերլուծելով ստեղծված կացությունը, օտարերկրյա հզոր պետությունների խաղացած դերը Իրանի կյանքում, նշում էր, որ ԱՄՆ-ը միջամտում է Իրանի ներքին գործերին, ցույց էր տալիս շահի երկերեսանիությունը, ամերիկացիներին առանձնաշնորհումներ տալու հետեւանքները երկրի համար: Ճառում նաեւ ասվում էր, որ «Ամերիկան ավելի վատն է, քան Անգլիան, իսկ Սովետները ավելի վատը այս երկուսից»: Դրան հետեւեցին Այաթոլլա Խոմեյնու եւ նրա որդու ձերբակալությունները եւ այնուհետեւ արտաքսումը Թուրքիա, որտեղ նրան 11 ամիս արգելվում է զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հետո շահի միջնորդությամբ Խոմեյնին արտաքսվում է Իրաք հեռահար նպատակով: Եթե Իմամը համագործակցի Իրանի նկատմամբ թշնամաբար տրամադրված Իրաքի ղեկավարության հետ, ապա կարելի է նրան վարկաբեկել Իրանի ժողովրդի աչքում, իսկ չհամագործակցելու դեպքում կառավարության կարծիքով նա առանձին հոգսեր պատճառել չի կարողանա: Եվ իրոք, Իրաքի իշխանությունները պատրաստ էին նրան օգնել դրամով, նրան վերցնել իրենց ծառայության մեջ, ինչը Այաթոլլա Խոմեյնու համար քաղաքական մահ կնշանակեր, սակայն հեղափոխության ապագա առաջնորդը հրաժարվում է համագործակցությունից, հասկացնելով, որ ինքը պայքարում է շահի վարչակարգի եւ ոչ թե Իրանի պետության դեմ, ուստի եւ ոչ մի կերպ քաղաքական պայքարի մանրադրամ դառնալ չի ցանկանում:

Թվում էր, թե շահական հալածանքներից իրանի ժողովուրդը վերջնականապես ընկճված էր եւ հնազանդված: 1977թ. ԱՄՆ-ի պրեզիդենտ Քարտերը գրում էր, որ Իրանը կայունության կղզի է

աշխարհի առավել անհանգիստ անկյուններից մեկում, բայց ընդամենը մեկ տարի անց դարձավ իսլամական երկրների առաջամարտիկը: Շահը իրականում հստակ չէր պատկերացնում երկրի կացությունը, կատարվող գործընթացները: 1970- 1977թթ. կառավարությունը ԱՄՆ-ից գնում է 26 միլիարդ դոլարի զենք եւ զինամթերք: Երկիր են հրավիրվում 60000 խորհրդականներ, մեծ մասը ԱՄՆ-ից: Չնայաց օրական արդյունահանվում էր 6 միլիոն բարրել նավթ, սակայն ճանապարհները ասֆալտապատ չէին, էլեկտրաֆիկացված չէր երկրի մեծ մասը, քաղաքների բնակչության նշանակալից մասը ապրում էր թիթեղից պատրաստված հոլիկներում: Երկրում գնալով ուժեղանում էր սոցիալական բողոքը:

1967թ. հունիսի 7- ի ուղերձում, կապված արաբա - իսրայելական 6-օրյա պատերազմի հետ, Այաթօլլա Խոմեյնին արգելում է քաղաքական եւ առեւտրական կապերն Իսրայելի հետ, իսրայելական ապրանքների օգտագործումը, որը ծանր հարված է հասցնում իրանա - իսրայելական ընդլայնվող կապերին: Զայրացած այս ամենից, շահը փորձում է Խոմեյնուն տեղափոխել Հնդկաստան, բայց չի կարողանում: 1967թ. հուլիսի 17-ին Իրաքում իշխանության գլուխ եկած բաասականները խեթ աչքով են նայում Իմամի գործունեությանը: Շաթ - օլ Արաբի վեճերի հետ կապված վատանում են Իրաքի ԲԱԱՍ-ի շահական վարչակարգի հարաբերությունները, որի արդյունքում որոշվում է իրանցիներին վտարել Իրաքից: Միաժամանակ փորձում են Իմամ Խոմեյնուն օգտագործել Իրանի դեմ պայքարում: Վերջինս հավատարիմ մնալով իր սկզբունքներին, քննադատում է Իրաքի իշխանությունների կողմից իրանցիներին արտաքսելու քաղաքականությունը, հրաժարվում է նրանց հետ համագործակցել եւ հրատարակում է «Վելայաթ է Ֆակիհ» կամ «Իսլամական կառավարում» գիրքը, որն իր վրա է հրավիրում գիտնականների ուշադրությունը: Այս աշխատությունը իսլամական երկրների համար մի տեսակ կյանքի դասագիրք դարձավ: Իսրայելական հատուկ ծառայությունները աշխարհով մեկ փնտրում էին այդ գիրքը, փորձելով այն ոչնչացնել: Խոմեյնին գրքում տալիս էր շարժման նպատակներն ու պայքարի պատմությունը, իսլամական կառավարման իրավական եւ մտավոր հիմնավորումը, տեսական փաստարկներ կապված ղեկավարության մեթոդների կառուցվածքին:

Ժողովրդական շարժումն Իրանում ղեկավարում էր անկուսակցական հոգեւորականությունը: Ըստ էության դրանից զատ չկար քաղաքական որեւէ ուժ, որն իր ձեռքն առներ պայքարի դրոշը: Հեղինակավոր կուսակցություններից Թուդեն, ըստ էության, դադարեցրել էր շահի դեմ եւ իր որոշ կազմակերպությունները տեղափոխել էր արտասահման: Կազմակերպությունն ապրում էր ներքին խլրտումների շրջան: Նրա

որոշ ներկայացուցիչներ անգամ մտել էին իշխանությունների կառուցվածքի մեջ: Ազգային ճակատը հայտնվել էր մեկուսացման մեջ: Ծնունդ էին առել ներքին վեճեր: Քարոզը տարվում էր հիմնականում արտասահմանյան ուսանողական խմբերի միջոցով: Չնայած ղեկավարների դիրքորոշմանը, նրա ներկայացուցիչների նշանակալից մասը հարեց Իմամի շարժմանը: Իրանի ազատագրական շարժումը պաշտպանում էր Խորդադի 15- ի ապստամբությունը: Այն հաջողություն ուներ համալսարաններում եւ արտասահմանում: Մոջահեդինների ժողովրդական մարտիկների կազմակերպությունը նպատակ ուներ ռազմական պայքար ծավալել շահի վարչակարգի դեմ: Այն էկլեկտիկ բնույթ ուներ: Իրենց ավելի ուշ հայտարարում էին Իսլամիստներ, սակայն որպես դեղամիջոց սոցիալական բոլոր դժբախտությունների դեմ իրենց անդամներին մարքսիզմ էին սովորեցնում: Պարտիզան - ֆեդայիների կուսակցությունը ստեղծվել էր երկու ոչ մեծ պրոկոմունիստական խմբավորումներից: քաղաքական հավատամքը զինված բախումն էր: ՍԱՎԱԿ-ը շուտով այն հայտնաբերեց, ղեկավարներին մահապատժի ենթարկեցին, մի մասը համագործակցեց իշխանությունների հետ, իսկ շարժումը ցրվեց: Իսլամական խմբավորում եւ Իսլամական ժողովրդական կուսակցությունները պաշտպանում էին Իմամի շարժումը: Խոջաթիայի ընկերությունը մեծ չէր եւ պայքարում էր Բեխայիտների դեմ: Նա հանդես էր գալիս պետական գործերին ամեն մի միջամտության դեմ: Սրանց անվանում էին «Քաղաքական հաճոյախոսությունների կուսակցություն»: Երեւի նրա շարքերում պակասում էր միայն շահը: ՍԱՎԱԿ-ը սրան օգնում էր, սակայն հեղափոխությունից առաջ նրա անդամները հարեցին Իմամ Խոմեյնուն: Պայքարը Բեխայիտների դեմ շարունակվում էր նաեւ հետագայում:

Շարժման մեջ մեծ դեր էին խաղում կրոնական ինտելեկտուալները, մուսուլմանական համալսարանական համայնքները, հոգեւոր կենտրոնները, անհատները եւ այլն: Փորձելով շարժմանը հակադրել նոր ուժ, շահը հիմնում է Իրանական ազգի վերածնության կուսակցությունը եւ հաստատում միակուսակցական կառավարում: Շահի հայտարարությամբ բոլորը կարող էին դառնալ իր կուսակցության անդամ, իսկ ովքեր դեմ են, կարող են անձնագիր ստանալ եւ գնալ արտասահման, Իմամ Խոմեյնին արգելեց մուսուլմաններին մտնել այդ կուսակցության մեջ եւ մի քանի տարի անց վերջինիցս միայն անունը մնաց:

1975թ. Ալժիրյան համաձայնագրով, որը կնքվեց շահի եւ Սադամ Հոսեյնի միջեւ, Իրանի եւ Իրաքի հարաբերությունները ինչ- որ չափով կարգավորվեցին: Դա բարդացրեց Իմամի գործունեությունը: Այսու-

հանդերձ այնքան ակտիվ էր նրա հակաշահական պայքարը, որ շահը Իրաքում Իրանի դեսպանից ստացած զեկուցագրի վրա մակագրեց «Փակել դրա բերանը»:

Ինչպես հատուկ է մեծ քաղաքագետներին, Այաթօլլա Խոմեյնին տեսնում էր մոտալուտ հեղափոխությունը: 1977թ. օգոստոսին նա հայտարարեց, որ ներքին ու արտաքին պայմանները գործելու զարմանալի հնարավորություններ են տալիս ակադեմիական եւ մշակութային շրջաններին, հայրենասերներին, ուսանողներին ինչպես Իրանում, այնպես էլ արտասահմանում: Սպանվեց Իմամի ավագ որդին՝ Հաջի աղա Մուսթաֆա Խոմեյնին 47 տարեկանում: Սա հանգեցնում է խլրտումների եւ ելույթների: Շարժում է սկսվում Ղոմում, Թավրիզում, Յազդում, Շիրազում, Սպահանում եւ Թեհրանում: Շարժումը կասեցնել չհաջողվեց, ուստի մտցվեց ռազմական դրություն: Հովեյդայի կառավարությունն ընկավ: Դեպքերն արագորեն հաջորդում էին մեկը մյուսին: Իրաքի իշխանության ճնշման ներքո Իմամը Նաջաֆից մեկնում է Քուվեյտ, որը Իրանի ճնշման տակ հրաժարվեց նրան ընդունել: Չընդունեցին, ըստ էության, Լիբանանը եւ Սիրիան: Իմամ Խոմեյնին ստիպված եղավ մեկնել Փարիզ:

Իրանում հեղեղուկ վիճակ ստեղծվեց: Շերիֆ - իմամի կառավարությունը գոյատեւեց երկու ամիս մի փոքր ավելի: Նույնքան անփառունակ գտնվեց Ազհարի կառավարությունը: Ամերիկյան եւ անգլիական խորհրդականների առաջարկած՝ շարժումը ճնշելու ոչ մի պլան չգործեց: Անճարակ գտնվեց Շապուհ Բախտիարիի կառավարությունը: Ոչինչ չփոխեց կացության մեջ ԱՄՆ-ի գեներալ Հայզերի գալուստը Իրան:

1978թ. Այաթօլլա Խոմեյնին կազմակերպեց հեղափոխական խորհուրդ, իսկ 1979թ. հունվարի 16-ին շահը ժողովրդական ճնշման ներքո փախավ երկրից: Գեներալ Հայզերի փորձը՝ վիճակը շտկել իրանական բանակի ուժերով, ձախողվեց: Սակայն անհրաժեշտ էր, որ հեղափոխության ղեկավարը վերադառնա հայրենիք: Չնայած սպառնալիքներին, թե Իմամի ինքնաթիռը կպայթեցնեն, Բախտիրաիի կառավարության կողմից օդանավակայանները փակելուն, Այաթօլլա Խոմեյնին 1979թ. փետրվարի 1-ին վերադարձավ Իրան: Կառավարությունը ժողովրդի հզոր ճնշման ներքո ստիպված էր թույլատրել նրա մուտքը երկիր: Հեղափոխության առաջնորդին դիմավորելու դուրս եկան մոտավորապես 4-6 միլիոն մարդ: Իմամը հայտարարեց, որ կառավարություն է նշանակում ժողովրդի աջակցությամբ եւ մի քանի օր անց ճարտարագետ Բազարգանը նշանակվեց ժամանակավոր հեղափոխական կառավարության վարչապետ: Կառավարության առջեւ խնդիր էր դրված նախապատրաստելու հանրաքվեն եւ

ընտրությունները:

Անհաջող անցան հակահեղափոխական ուժերը համախմբելու փորձերը: Բանակը, մասնավորապես ռազմա- օդային ուժերը, երդում տվեցին Իմամ Խոմեյնուն: Ապստամբեց Թեհրանի «Հոմաֆարան» ավիաբազան, որին ժողովուրդը պաշտպանեց: Շահական գվարդիան չնայած գործադրած ջանքերին ոչնչի չհասավ: Մեկ օր անց ժողովուրդը գրավեց ոստիկանական տեղամասերը: Տապալվեց Բախտիրաիի հեղաշրջման փորձը: Փողոց դուրս եկան թեհրանցիները Իմամ Խոմեյնու կոչով եւ հաջորդ օրը շարժումը հաղթեց: Հաղթեց հեղափոխությունը: ԱՄՆ-ի նշանավոր մասնագետները չգիտեին ինչպես արժեքավորել իսլամական հեղափոխությունը: Մի քանի ժամվա վեճերից հետո ԱՄՆ -ի նախագահին ներկայացված զեկույցում ասվում էր, որ հեղափոխության շարժիչ ուժը իսլամական արմատականությունն է: Առաջին անգամ իսլամը հանդես էր գալիս որպես պատմական դոմինանտ: XX դարի բոլոր մյուս հեղափոխություններն, ըստ էության պատճենել էին Ռուսաստանի փորձը, իսկ իրանական հեղափոխությունը, ի զարմանս Վաշինգտոնի եւ Մոսկվայի, իր բոլոր կարգախոսները վերցրել էր Ղորանից: Խոմեյնին հայտարարեց, որ «Իսլամը քաղաքական կրոն է, որն ունի կառավարում: Իսլամում ավելի շատ քաղաքական հրահանգներ կան, քան հոգեւոր»:

Իրանի Իսլամական Հեղափոխությունը ծանր հարված հասցրեց ԱՄՆ-ի շահերին իր հակառակորդ ԽՍՀՄ-ի սահմանագծում: Այն նշանակալից ազդեցություն ունեցավ համաշխարհային ազատագրական շարժման վրա: Ընկավ Նիկարագուայի՝ ԱՄՆ-ից կախյալ վարչակարգը: ԽՍՀՄ-ը զորք մտցրեց Աֆղանստան՝ ճնշելու համար իսլամական վերածնունդը: Երկու գերտերությունների միջեւ ազդեցության գոտիների բաժանված աշխարհը գտնվում էր ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի դիկտատի ներքո: Իսլամական հեղափոխությունը հռչակեց՝ ոչ Արեւմուք եւ ոչ Արեւելք կարգախոսը, որը Վաշինգտոնում եւ Մոսկվայում խորհելու առիթ տվեց:

Իրանի Իսլամական Հեղափոխությունը թուլացրեց ԱՄՆ-ի դիրքերը, սակայն այն միաժամանակ զինաթափեց նաեւ կոմունիստներին, որոնք հավակնում էին պայքարելու իմպերիալիզմի դեմ: Հասկանալի է, որ այդ պատճառով էլ հեղափոխության դեմ թշնամական դիրք գրավեցին ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան եւ ԽՍՀՄ-ը: Երկու գերտերությունները սկսեցին զինել Իրաքին: Դրան պատասխան հնչեց իմամի կարգախոսը՝ «Արյունը հաղթում է թրին»: Մինչդեռ հեղափոխության թշնամիները ուղիներ էին որոնում կործանելու այն: Մասնագետներ էին ուղարկում երկրի հետամնաց շրջանները, կառուցվում էին ճանապարհները, էլեկտրակայաններ, բարելավվում էր ջրամատակարարումը, հիմնվում

էին նոր համալսարաններ, արդյունաբերական ձեռնարկություններ: Հակառակորդը փորձեց շարժման մեջ դնել հինգերորդ շարասյունը: Համախոհներ գտնվեցին Բազարգանի կառավարության մեջ, ելույթներ եղան Քրդստանում եւ Գոնբատում: ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի դեսպանները ՍԱՎԱԿ-ի անդամների օժանդակությամբ փորձում էին կազմակերպել հակահեղափոխական շարժում: Արհեստականորեն իջեցրին մի քանի անգամ նավթի գինը: Կազմակերպվեց տեռոր: Սակայն ժողովրդի 98%-ը հանրաքվեի ժամանակ այո ասաց հեղափոխությանը:

Բազարգանի կառավարությունը փորձեց լեզու գտնել ԱՄՆ-ի հետ: Բանակցությունները Բժեզինսկու հետ առաջ բերեցին տարերային ուսանողական ելույթներ, որոնց ընթացքում գրավվեց ԱՄՆ-ի դեսպանությունը: Իրանի կառավարության ձեռքում հայտնվեցին դեսպանությունում պահվող շուրջ 50 հատոր կազմող գաղտնի փաստաթղթեր: Դեսպանության գրավումը կատարվեց 1978թ. նոյեմբերի 4- ին: Բոլորը սպասում էին ԱՄՆ-ի հարվածին: Սակայն ուղղակի ներխուժումն անհնարին էր եւ այդ լավ էր հասկանում հեղափոխության առաջնորդը: Գերի վերցված դեսպանության աշխատակիցները միայն 444 օր անց հետ վերադարձվեցին ԱՄՆ-ին: Անդրադառնալով այս դեպքերին, Իմամը հայտարարեց, որ ուսանողների կողմից դեսպանության գրավումը ավելի մեծ հաղթանակ էր, քան առաջինը:

Դեսպանության գրավմանը հաջորդեցին ԱՄՆ-ի բոյկոտը եւ տնտեսական սանկցիաները: Փորձ արվեց ազատել պադանտներին: Սակայն Դաշտ է - Քեբիր անապատում իջած ինքնաթիռները փոթորիկի պատճառով մասամբ իրար բախվելով ջախջախվեցին կամ էլ առաջադրանքը կատարել չկարողացան: Մնացածները վերադարձան «Նիմից» ավիակիր: Ալժիրի միջնորդությամբ կնքվեց պայմանագիր-համաձայնագիր ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ, որով ԱՄՆ-ը պարտավորվում էր չմիջամտել Իրանի ներքին գործերին եւ ապա սառեցնել իրանական ակտիվները, որը չկատարվեց: Փաստորեն ԱՄՆ-ի կառավարությունը ստիպված էր ճանաչել հեղափոխության հաղթանակը: Հեղափոխության հաղթարշավը չկանգնեցրին ոչ պրեզիդենտ Աբուլ - Հասան Բանի Սադրը(ընտրվել էր 1979թ. հունվարի 25-ին), որը փորձեց ջլատել հոգեւորականությանը, Իրաքի ներխուժման ժամանակ խանգարել զորահավաքին, իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ստեղծումը, եւ ոչ էլ Մոջահեդին խալկի՝ ժողովրդին անհնազանդության մղելու կոչերը, Իմամը Բանի Սադրին հեռացրեց գլխավոր հրամանատարի պաշտոնից, իսկ Մոջահեդին Խալկի առաջ բերած ելույթը ճնշվեց ընդամենը մի քանի ժամում: Չօգնեց նաեւ ահաբեկչությունը, որին զոհ գնացին պետական բազմաթիվ գործիչներ: Ի հակադրություն ԱՄՆ-ի եվրոպական պետությունները իրատեսորեն էին

նայում Իրանում կատարվող իրադարձություններին: Մնալով մենակ, ԱՄՆ-ը խաղացրեց իրաքյան խաղաթուղթը: Մի կողմից, կարծես ԱՄՆ-ը չի մասնակցում պատերազմին, իսկ մյուս կողմից երկու իսլամական երկրներ կռվում են միմյանց դեմ: Իրաքը Մոսկվայի դաշնակիցն էր, ուստի պատերազմի մեղքը ինչ որ չափով ընկնում էր նաեւ նրա վրա: 8-ամյա պատերազմը, որ որակվեց ժամանակակիցների կողմից որպես մոռացված պատերազմ, մեծ դժբախտություններ բերեց Իրանի ժողովրդին: Իրան ներխուժած իրաքյան զորքերը հույս ունեին արագ շահել պատերազմը, սակայն հանդիպեցին Իրանի ժողովրդի վճռական դիմադրությանը: Այդ պայքարը պայքար էր փաստորեն հեղափոխության համար, նրա վերջնական հաղթանակի համար: Իրանին փորձեցին նվաստացուցիչ զինադադար պարտադրել, սակայն Իմամ Խոմեյնին դրան չգնաց: Իրաքին չօգնեցին ոչ Ֆրանսիական ինքնաթիռները, ոչ խորհրդային ՄԻԳ-29 - ները, ոչ ամերկյան զենքը ոչ էլ տեխնոլոգիայի - վաճառքը Իրաքին:Իրանը հաղթանակով դուրս եկավ պատերազմից:Ազգային միասնությունը հաղթեց: Ցնվեցին հետեւյալ թեւավոր արտահայտությունները՝ «Մեր երիտասարդության արյունը հաղթեց գնդացիրներին», «Հաղթանակը նահատակի մահ ձգտող ժողովրդինն է»:

Խաղաղության հաստատումից հետո եղբայրական Իրանը իր մեծ առաջնորդի ղեկավարությամբ ձեռնամուխ եղավ պատերազմի վերքերի բուժմանը եւ տնտեսության վերականգնմանն ու զարգացմանը: Իմամ Խոմեյնին կառավարությանը դիմեց 5 կետից բաղկացած ուղերձով, որտեղ տրվում էր հետագա վերակառուցման պլանը: Փաստորեն շարունակվում էր խաղաղ հեղափոխությունը: Իմամի կողմից ստեղծվեց հանձնաժողով Սահմանադրության ուսումնասիրման եւ փոփոխման համար 8 սկզբունքային կետերի հիման վրա: Շուտով Իրանի ժողովուրդը ստացավ Սահմանադրություն, իսկ ժողովուրդը իր տքնաջան աշխատանքով բուժեց պատերազմի վերքերը: Այսօր հեղափոխության ծնունդ Իրանի Իսլամական Հանապետությունը շարունակում է Իմամ Խոմեյնու կտակած քաղաքականությունը, զարգացնում է իր տնտեսությունը եւ ամրապնդում իր կապերը հարեւան երկրների հետ:

Ավարտելով իմ ելույթը, կամենում եմ ջերմորեն շնորհավորել իրանական ժողովրդին՝ հոգեւոր ղեկավար եւ հեղափոխության մեծ առաջնորդ Իմամ Այաթոլլա Խոմեյնու ծննդյան հոբելյանի առթիվ ցանկանալ մեր եղբայրական ժողովրդին մեծամեծ հաջողություններ բոլոր բնագավառներում:

ԱՐՇԱՎԻՐ ԳԱԲՐԻԷՅԱՆ
Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների
Հայկական Կենտրոնի Գործադիր տնօրեն

ԽՈՍՔԻ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ

Համեմատական վերլուծության փորձ

Իմամ Խոմեյնուն դուրս բերել կրոնական պարունակից եւ ըստ այդ խոսել նրա խոսքի ազատության մասին՝ թերի եւ սխալ պիտի լինի, որովհետեւ կրոնական մի ամբողջ աշխարահայացք է խարսխված հոգեւոր առաջնորդի կենսափիլիսոփայության ընդերքում: Արդարորեն դրա վրա է կառուցվում մեր հասարակության մարդ-մարդ հորիզոնական փոխհարաբերությունը, որը պետք է տեսնել եւ ընկալել նաեւ ուղղահայաց Աստված - մարդ հարաբերության լայն շրջագծում:Դրա մասին ահա մի դիպուկ արտահայտություն. «Ազատությունները պետք է լինեն շինարար, որպեսզի կարողանան մարդուն բարձրացնեն այն վեհ աստիճանին, ինչպես աստված ինքն է ցանկացել: Այլ կերպ ասած՝ ազատությունը պետք է մարդուն երկրի վրա հասցնի Աստծո տեղապահի»: Ահավասիկ՝ երկու հիմնական մտածումներ հիմքը կկազմեն այս փիլիսոփայության. նշված երկու աստիճանները ուրիշ բան չեն, եթե ոչ՝ վերեւ նշված հորիզոնական վեհ աստիճանին եւ ուղղահայաց Աստծո տեղապահի աստիճանի հարաբերությունները:

Մեր տարածաշրջանը տարբեր կրոնների, մշակույթների, ավանդույթների եւ քաղաքակրթությունների համակեցության տիպար եւ եզակի հանդիսաբեմ է, ուր երկխոսությունը նախապայման է՝ մեզ տանելու գերագույն բարու ճանապարհով: Կան այս բոլորի նախադրյալները, թե սրանք անուրջ են ու ցանկալի երազ միայն: Թողնենք մի կողմ պատմությունը՝ իր ժամանակափորձով եւ գտնենք այն, որն իբրեւ հիմնաքար կարող է ծառայել ամենատարբեր ժողովրդների միջեւ երկխոսության, որոնց միակ «Աստվածը երբեք հակամարդկային, հակահայրենիք եւ հակաերկիր սադրանքներ թույլ չի տա»:

Պիտի ցանկալի այս ելույթով անդրադառնալ քրիստոնեական կրոնի եւ Իմամ Խոմեյնու խոսք ու գաղափարների, հասկացությունների վրա սեւեռված հայացքներին, փորձելով անգամ միացնել այս երկուսը մեկի մեջ՝ խոսք-հասկացության մեջ, երբ նկատի ունենաք, որ գաղափարը չարտասանված խոսքն է. իսկ խոսքը՝ արտաբերված մտածումը կամ գաղափարը:

Աշխարհի գեղեցիկ ստեղծագործության գեղեցկագույն տարրը

մարդը եղավ՝ դառնալով դրա բարձրակետը, կարգվելով տեր եւ իշխան բոլոր արարածների վրա, որովհետեւ նա Աստծո նմանությամբ ստեղծվեց, նրան տրվեց ամեն ինչ՝ աճելու, ծնելու, բազմանալու, առատանալու եւ ստեղծագործելու կարողություն. բայց նա մյուսներից զատորոշվեց մի այլ զորությամբ, մի այլ գեղեցկությամբ՝ բանականությամբ:

ԻԻՀ հենվելով աստվածային՝ իսլամական օրենքներին անվերապահորեն շեշտում է մարդու ազատության, խոսքի եւ գաղափարի ազատության սկզբունքները: Սահմանադրության 56 -րդ հոդվածը այսպես է սահմանում. «Աշխարհի եւ մարդկության բացարձակ իշխանությունը պատկանում է Աստծուն, նա է մարդուն, հասարակության մեջ իր ճակատագիրը տնօրինող կարգել, եւ ոչ ոք իրավասու չէ այս իրավունքը խլել մարդուց եւ դա օգտագործել հանուն իր շահերի»: Վերջին հաշվով, բնազդն ու անգիտակից մղումները չեն, որ կառավարում են աշխարհը, այլ միտքն ու բանականությունը, որոնք մարդուն միայն տրվեցին, վայելելու գեղեցկությունն ու ուրախությունը իրեն հանձնված, իսկ ավելի ուշ՝ իր արարած ստեղծագործություններին եւ հետեւաբար ազատություն կոչված այն բացառիկ շնորհը, որով մարդը կդառնար լիիրավ տերն ու պատասխանատուն իր բոլոր արարքներին՝ տերը փրկության եւ հավերժության խորհրդին:

Իմամ Խոմեյնին ազատությունը համարում է մի երկնային բարիք, որ Աստված ինքն է պարգեւել մարդկանց. «Ազատությունն այն ամենավեհ բարիքներից մեկն է, որ Աստված պարգեւել է համայն մարդկությանը: Յուրաքանչյուր ոք ամենազոր Արարչի կողմից իրավունք ունի ազատ ապրելու եւ ազատ տնօրինելու իր խոսքը, իր գաղափարները եւ հայացքները»:

Ազատության ամենավեհ սկզբունքից է բխում նաեւ օրենքը, որը ուրիշ բան չէ, եթե ոչ՝ մի պատվեր, հրահանգ, հորդոր կամ խրատ, վերեւից ներքեւ իջնող. դրա նպատակն այլ բան չէ, քան մարդու ազատագրությունը բռնությունից, այսինքն մարդ անհատի փրկությունը՝ կրոնական բացառությամբ:

«Այն կառավարությունները, որոնք մարդու ազատության սկզբունքի իրավունքը մարդկության համար ճանաչել են որպես մի աստվածային պարգեւ, եւ իրենց գործունեությունը ծավալել երկնային օրենքների շրջանակներում, որը ողջ մարդկության կյանքն է ընդգրկում, իրավունք ունեն հավակնելու ազատության գաղափարին՝ իրենց հասարակություններում, այլապես մարդկությունը, որպես մի արարած, որպես մի էակ, որ ինքն է օրենքներ մշակում, իրեն լիարժեք չճանաչելու պատճառով, ի վիճակի չէ մշակելու լիարժեք օրենք եւ որոշելու ազատության արժանի տեղն ու եզրերը»:

Ըստ Իմամ Խոմեյնու՝ այն երկիրն է քաղաքակիրթ, որի ժողովուրդը

օժտված է խոսքի եւ մտքի ազատությամբ, որում ոչ ոք չի կարող սահմանափակել այդ իրավունքը:

Աստված իր խոսքով ստեղծեց տիեզերքը. խոսեց ստեղծագործության բոլոր հանգրվաններում եւ հետագա բոլոր ժամանակահոլովույթում, իր կամքն ու պատգամը տալու մարդուն. այնպես ինչպես Աստված մերձեցավ մարդուն, նույն գաղտնիքը տվեց նրան, գնալու իր նմանին եւ լինելու նրա հետ: «Այս ազատությունը, որը արարիչն ինքը իսլամի եւ օրենքների շրջանակներում սահմանել է մարդու համար, ամբողջությամբ ուղղված է մարդու զարգացմանը եւ վեհությունը՝ դեպի բարձրյալ Աստված»:

Խոսքը գաղափարներ եւ լոգունգներ տարածելու ամենից արագ եւ ազդու միջոցն է, խոսքը այն աշխարհն է, որտեղ նկարվում են անցյալը, ներկան ու ապագան. խոսքը առաջին այն ամուր գետինն է, ուր առաջին անգամ ժողովուրդ եւ ղեկավար միմյանց են հանդիպելու, ուր տեր ու ծառա միասին են գործելու: Այնտեղ ուր խոսող ու խոսակից չկա: Այսպես է խոսում մեր մտածող դեմքերից Ն.Լամբրոնացին. «Նա, որ խոսում է մեկի հետ՝ խոսում է այն պատճառով, որ իր ունկնդիր - խոսակիցը ունի իր աչքերի առաջ. եւ գիտե թե ինչ է խոսում նրա հետ...»: Խոսքը մարդկային հարաբերության ամենից ազդու եւ անմիջական միջոցն է, մարդու ամբողջ խորհուրդները եւ մտածումները խտացնող իմաստությունն է, այս պատճառով էլ մտածել՝ նշանակում է խոսել:

Աստծո մարդու ձայնին ունկնդիր լինելու սկզբունքները հավասարապես շեշտվում են երկու կրոնների մեջ. «Խնդրեցեք Աստծուց եւ նա կտա ձեզ, փնտրեցեք եւ կգտնեք, բախեցեք, եւ կբացվի ձեր առաջ. որովհետեւ ով խնդրում է՝ ստանում է, ով փնտրում՝ գտնում է, ով բախում է՝ դուռը բացվում է նրա առաջ»:

Գրիչ ու լեզու մարդուն արտահայտիչ էակ դարձնող ուժեր են. «Տես թե ինչպես ձիերի բերանը սանձ ենք դնում, որպեսզի մեզ ենթարկվեն... կամ դիտե նավերին. որքան ալ մեծ լինեն եւ ինչպիսի ուժեղ քամիներից էլ քշվեն, փոքրիկ մի ղեկ նրանց ուղղում է այնտեղ, որտեղ նավավարը փափագում է տանել: Նույնպես էլ լեզուն»: Սակայն մարդն է տերը իր լեզվին «Գիտեք, թե փոքրիկ կայծը մի հսկա անտառ կարող է հրդեհել: Լեզուն էլ կրակ է»:

«Նրանք ովքեր գրիչ են վերցնում միշտ պետք է նկատի ունենան, որ իրենց գրիչը եւ լեզուն Աստծո ներկայության ներքո է գտնվում: Եթե գրողը, մտավորականը կամ գիտնականը, մշակութային եւ քաղաքական գործիչը գիտակցի, որ Աստված ունկնդիր է իր խոսքին եւ ընթերցում է իր գրածը, ապա երբեք հակամարդկային, հակահայրենիք եւ հակաերկիր սադրանքներ թույլ չի տա»: Հետեւաբար, Աստվածային շնչով գրված ամեն գիրք այլ բան չէ, եթե ոչ Աստծո խոսքի

առկայությունը, հետեւաբար Աստծո կամքին տիրապետումը:

Քրիստոնեական վարդապետությունը մարդ անհատի դաստիարակությամբ բծախնդիր, մարդուն կատարյալ ու նոր մարդ դարձնելու մտահոգությունը թելադրության ու հորդորի է վերածում. «Նա որ գիտի իր խոսքերը կշռել՝ կատարյալ մարդ է, ինքզինքին իշխելու կարող»: Եւ տեսեք զգուշացումը Խոմեյնու. «Գրիչը ազատ է գրելու, այլ ոչ թե սադրանքներ հրահարելու մեջ: Յուրաքանչյուր ոք ազատ է գրելու, այլ ոչ թե սադրանքներ հրահարելու մեջ: Յուրաքանչյուր ոք ազատ է արտահայտվել ինչպես կամենում է, սակայն ազատ չէ դավադրություն կազմակերպել»: Լեզուն գործիք է ճշմարտությունը խոսելու, ինչպես մարդկային արարքները՝ արդարությունը գործադրելու:

Ուրիշները մերժելու, ինքզինք պարտադրելու ամբարտավան հպարտությունն է, որ պատճառ է դառնում հակամարտությանց եւ բախումների, երբ ոտնակոխվում են մարդու եւ ժողովուրդների իրավունքները:

Իրանի հոգեւոր առաջնորդը բազմիցս իր խոսքերում շեշտում է մարդու, նրա խոսքի ու գաղափարի ազատությունը: Նա դեռ իսլամական հեղափոխության շեմին կառավարության կարեւորագույն պարտքն է համարել արագ կերպով ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց առկայության դեպքում մարդը կարողանա ազատորեն մասնակցել ընտրություններին, ունենա ազատ մամուլ, որը իրազեկ կպահի մարդուն ճշմարտության եւ այլ իրադարձությունների մասին: Հեղափոխության հաղթանակից հետո էլ Իմամ Խոմեյնին կրկին անգամ շեշտեց գրական կազմակերպությունների եւ մամուլի ազատությունը, ինչպես նաեւ խոսքի եւ գաղափարի ազատ արտահայտվելու իրավունքի մասին:

Այստեղ ես ուզում եմ թվարկել մի քանի օրինակ, որոնք վկայությունն են այս ասվածի: Այսօր Իրանի Իսլամական Հանրապետությունում հրատարակվում է 1500 անուն թերթ 500-600 հազար տպաքանակով. խորհրդարանում ներկա են փոքրամասնությունների ներկայացուցիչները. ամենափայլուն ապացույցներից մեկն էլ տարեկան գումարված բազմաթիվ, բազմաթեմա համաժողովներն ու խորհրդաժողովներն են, որտեղ աշխարհի ամենատարբեր ժողովուրդների ներկայացուցիչները ազատություն եւ հնարավորություն ունեն խոսելու եւ արտահայտվելու ամենատարբեր նյութերի շուրջ:

Այս բոլորով, պետք է վանել այն մտածումը, որ հոգեւորն ու կրոնականը նեղմիտ ու կարճատես են դարձնում մարդկանց, թե նման իրավիճակում մարդը կղզիանում ու ճահճանում է. մինչդեռ հակառակն է ճիշտ. հոգեւորն ու կրոնը լուսավորում են մարդու միտքը եւ նրան հասցնում ազատության այն բարձրակետին, որը պատասխանատվության, պայքարի եւ հանձնառության կյանքն է:

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ
ԵՊՀ արեւելագիտության
ֆակուլտետի դեկան

ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ ՊՈԵԶԻԱՆ

Իրանի Իսլամական Հեղափոխության առաջնորդ Իմամ Խոմեյնուն ներկայացնելիս պետք է հաշվի առնել եւս մի շատ կարեւոր հանգամանք՝ նրա մարդկային նկարագրի ընդհանրությունը, նրա ողջ էությանը հասու լինելու համար չպետք է սահմանափակվել սովորական հատկանիշների ամփոփումով:

Այսօր ուզում ենք օգտվել ընձեռնված առիթից եւ համառոտ ներկայացնել վեհափառի հատկանիշներից մեկը, որի մասին թերեւս քիչ է խոսվել՝ դա պոեզիայի խորին գնահատումն ու ընդկալումն է նրա կողմից:

Իմամ Խոմեյնու պատանեկության եւ երիտասարդության շրջանից՝ 16- 18 տարեկան, մեզ են հասել որոշ ձեռագրեր ու նշումներ, որոնցում նա արձագանքել է հանրաճանաչ բանաստեղծներ Միրզա Աշրաֆ էյդին Ղազվինի /Նասիմ Շոմալ/ եւ Մալեքոլշոառայի քաղաքական եւ կրոնամիստիկական ստեղծագործություններին: Սույն նմուշները փաստում են, որ բանաստեղծական ձիրքը Իմամ Խոմեյնու մոտ դրսեվորվել է դեռ պատանի հասակից եւ պայմանավորված չէ նրա տարեց հասակով, այսպես ասած«Ներունական պատանեկությամբ»:

Եթե անգամ հպանցիկ հայացք նետենք նրա բանաստեղծությունների բովանդակության եւ խորության վրա, կարող ենք եզրակացնել, որ բանաստեղծություն հորինելը Իմամ Խոմեյնու մեջ հոգեկան բնույթ է ունեցել՝ մի բան, որը հատկապես զգալի է նրա գազելներում:

Իմամ Խոմեյնու բանաստեղծությունների մեծ մասը ծայրաստիճան զբաղվածության եւ բազում ճամբորդությունների պատճառով անհետացել է, եւ այն ինչից պարսից լեզվի ուսանողները եւ Իմամին սիրողները տեղյակ են ավելի շատ վերաբերում է նրա վերջին տարիների ստեղծագործություններին, որոնք գրված են դասական գազելի կաղապարներով:

Իմամ Խոմեյնու գազելների շարքը բացի սույն դրսեւորումներից օժտված է նաեւ այլ հատկանիշներով, որոնք նրան զանազանում են մյուս իրանական բանաստեղծներից: Իմամը միեւնույն ժամանակ եւ խոշոր բանաստեղծ է, եւ՝ կրոնի՝ միաստվածության ու հանդերձյալ աշխարհի քաջ գիտակ, որը շատ կողմերով ուշագրավ է եւ արժանի է օրինակման:

Այս առնչությամբ նկատենք, որ այն ինչ տեղ է գտել նրա բանաստեղծություններում ազնիվ պոռթկման արդյունք է, իրականության արտացոլք, ուր հավատքից ու նվիրումից շեղման ոչ մի հետք չես գտնի: Քերթողական նրա ստեղծագործությունները, խտանում են այն կարեւոր շրջանակներում, որոնք ժամանակին օգտագործվել են միստիկ բանաստեղծությունների եւ բանաստեղծ միստիկների կողմից:

Իմամի բանաստեղծությունը Աստծո մեջ ընկղման, տիրոջը նշմարելու եւ բարձրյալի նիրվանական խաղաղությանը հասնելու մի հաջող փորձ է, անդուլ ձգտում ու պատգամ: Հիշենք Հաֆեզին.

Ամեն պահ ու Ամեն վայրկյան քո պատկերն եմ տեսնում իմ մեջ...

Այժմ դառնանք Խոմեյնուն, ուր կարելի է ներքին հարազատություն նկատել միայն նախորդի մտորումների հետ.

Իմամ Խոմեյնին հաճախ, երբ ծանր աշխատանքներից հետո ժամանակ էր գտնում հանգստանալու, չափածո խոսքերով «Ջուր էր

هر دم از روی تو نقشی زنـدم راه خیال با که گویم که در این پرده چها می بینم

کس ندیدست زمشک ختن و نافه چیـــن آنچه من هر سحـر از باد صبا می بینم

լցնում» իր ներսում բորբոքվող կրակի վրա, եւ խոսքի էր բռնվում «Երկնային սիրուհու»՝ Աստծո հետ:

Բանաստեղծությունը իմամի ամենանվիրական զգացումների արտացոլքն է, ներքին հուզմունքների ճիչը, մտերմիկ զրույցը առ Աստված:

Իմամ Խոմեյնին, ինչպես նշեցինք, իր ստեղծագործություններում օգտվել է նախորդների արտահայտություններից ու ոճային դրսեւորումներից, սակայն դրանցով բոլորովին այլ նպատակներ է իրականացրել: Համաձայն բանաստեղծական կայուն չափանիշների ու կաղապարների, պարսից պոեզիան ըստ ժամանակագրության բաժանվում է 4 տարբեր ոճերի՝ խորասանյան, իրաքյան, հնդկական եւ վերադարձի: Թեեւ այս բաժանումը չի կատարվել մաթեմաթիկական ճշգրիտ հաշվարկներով, սակայն օժտված է այնպիսի հատկանիշներով, որոնցով կարելի է որոշել բանաստեղծական այս կամ այն ոճը, գրական դպրոցն ու ուղղությունը: Այս առումով Իմամի ստեղծագործությունները ճիշտ կլինի վերագրել իրաքյան գրական ավանդներին: Իրաքյան ոճի հատկանիշների շարքում պետք է հիշատակել խոսքի գեղեցկությունը, նորարության ձգտումը արվեստի որոշակի մակարդակի պահպանումը, ակնարկների, փոխաբերությունների եւ բարձր մտքերի օգտագործումը, որոնք հաճախ պաճուճված են արաբերեն բառերով: Այս ամենը ի վերջո հանգեցրել են նրան, որ Իմամ Խոմեյնին առանձնակի ուշադրություն ու հարգանք է տածել դեպի

Խաջե Հաֆեզ Շիրազին, Հաֆեզի երկնային գազելները:

Հաֆեզն ասում է.

Հիշում եմ այնժամ, երբ քո քաղում էր իմ տունը, -

Իսկ Իման Խոմեյնին գրում է.

Երանի այն օրը, երբ քո քաղում իմ տունը լինի,

Մեջն էլ մուրազիս արցունքն ու խնդությունը լինի:

Իման Խոմեյնու հակումը դեպի Հաֆեզ պատճառաբանվում է նրա գազելների միստիկական ու փիլիսոփայական ընդգրկումների առկայությամբ:

Հաֆեզի ստեղծագործությունները շարժման արտահայտությունն է դեպի վեր, եւ դեպի հարատեւման բարձունքը, իսկ բաղձալի նպատակին հասնելը՝ մարդու տեղաշարժի ուղեցույցը:

Այսպես է անվանում զուտ այն պատճառով, որ առաջին անգամ է իրանյան Իրաք կոչվող Ռեյ, Իսֆահան, Ադրբեջան եւ Ֆարս տարածաշրջանների բանաստեղծների միջոցով:

Իման Խոմեյնին իր բառն ու բանը հյուսում է նմանակելով Հաֆեզի հենց սույն տեսակետը:

Հիշենք Իման Խոմեյնու ստեղծագործությունների ցանկը՝ «Անէության սկզբունքը», «Վայելչության շեմը», «Արեւի դեմքը», «Տաճարը», «Միացումի տարափը» և այլն, որոնք բոլորն էլ սկիզբ են առնում նյութական աշխարհից եւ տարածվում դեպի հոգեկան եւ երկնային անէությունը:

Այսպիսով, նրանք, ովքեր ըստ ամենայնի ընբռնել են Հաֆեզի բանաստեղծությունը, կարող են հասու լինել նաեւ Իման Խոմեյնու բանաստեղծական աշխարհին:

Այլ խոսքով ասած, Իման Խոմեյնին այնպիսի մի շարժում սկսեց, որը տարբեր բնագավառներում, ներառյալ գրականության մեջ, հսկա հեղաշրջման հանգեցրեց եւ հարկադրեց գրողներին ու բանաստեղծներին, որպեսզի իրենց ստեղծագործություններում դատապարտեն կյանքի անբարոյականն ու բռնությունը, նյութական գռեհկությունն ու ստորությունները: Այսպիսով սկիզբ առավ հեղափոխական գաղափարախոսության այն շարքը, որը ծայրեծայր հեղեղեց կյանքի բոլոր սահմանները, նպաստեց մարդու վերափոխմանը, վեհի ու ազնիվի հաստատմանը:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
ՀՀ ԱԳ փոխնախարար

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991-1998 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 21-ին Հայաստանի անկախության հռչակումից հետո երեք ամիս անց, Իրանի Իսլամական Հանրապետությունը 1991թ. դեկտեմբերի 25-ին պաշտոնապես ճանաչեց Հայաստանի անկախությունը: Ելնելով իրենց աշխարհագրական և տարածաշրջանում երկրաքաղաքական շահերից, երկու սահմանակից պետությունները եռանդուն քայլեր կատարեցին միմյանց հետ տնտեսական, քաղաքական և մշակութային հարաբերություններ զարգացնելու ուղղությամբ, որոնք խարսխված էին լինելու ազգային շահերի, փոխադարձ հարգանքի, միմյանց ներքին գործերին չմիջամտելու հիմնարար սկզբունքների վրա:

Մասնավորապես Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքը, նրա ներկա իրողությունները, հատկապես Ադրբեջանի և Թուրքիայի կողմից տրանսպորտային շրջափակումը, Հայաստանի ռազմավարական գործընկեր Ռուսաստանի հետ ընդհանուր սահմանի բացակայությունը, այդ տարիներին Վրաստանում տեղ գտած ապակայունացումը և մի շարք այլ գործոններ ի սկզբանե թելադրեցին, որպեսզի Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մեջ Իրանի հետ հարաբերություններին տրվեն առաջնայնություն և հույժ կարևորություն: Դա Հայաստանի համար կենսական անհրաժեշտություն էր նաև այն առումով, որ անկախության ձեռք բերումով Հայաստանն Իրանի հետ հայտնվել էր նույն տարածաշրջանում և օրակարգի հրատապ հարց էր դառնում նորանկախ պետության ընդգրկումը տարածաշրջանային քաղաքական կյանքի մեջ: Դա ինքնստինքյան նշանակում էր, որ այսուհետև Հայաստանն ու Իրանը ունենալու են բազմաթիվ ընդհանուր, այդ թվում նաև ռազմավարական շահեր, առանձին դեպքերում նույնիսկ համանման խնդիրներ:

Իրանի հետ երկարաժամկետ, ռազմավարական բնույթի հարաբերությունների ծրագրեր մշակելիս նկատի էին առնվում մի շարք կարևորագույն հանգամանքներ: Նախ այն, որ այդ հարաբերություններն ունեն լավ պատմական հիմք /երեք հազարամյակ շարունակ Հայաստանի պատմությունը սերտորեն շաղկապված է եղել Իրանի պատմական զարգացման հետ՝ առանձին դարաշրջաններում նույնիսկ

ապրելով գերազանցապես Իրանի քաղաքական և կուլտուրական շահերով/: Այնուհետև, տնտեսական և քաղաքական առումով Իրանի Իսլամական Հանրապետությունը կենսունակ պետություն է: Իր առանձնահատուկ դիրքով, վիթխարի տարածքով, համաշխարհային նշանակություն ունեցող իր կոմունիկացիաներով նա հանդիսանում է տարածաշրջանի կարևորագույն պետական կազմավորումներից մեկը, եթե ոչ ամենակարևորագույնը: Շնորհիվ այն բանի, որ Իրանի հարավային և հյուսիսային ափերը ողողում են Պարսից ծոցը, Օմանի ծովը և Կասպից ծովը, Իրանը դառնում է մի յուրահատուկ կապող օղակ ոչ միայն իր սահմանակից պետությունների, այլև ամբողջ տարածաշրջանների՝ Կովկասի, Միջին Ասիայի, Հնդկական թերակղզու, արաբական աշխարհի միջև: Նա համաշխարհային մասշտաբով մի տարանցիկ կամուրջ է, աշխարհի կարևորագույն ռազմավարական շրջաններից մեկը: Այդ երկիրն ունի ոչ միայն վիթխարի կենսական տարածություն, պատկառելի բնական ու մարդկային ռեսուրսներ, այլև հսկայական տնտեսական ու ռազմական ներուժ: Վերջապես կարևոր հանգամանք է նաև այն իրողությունը, որ Հայաստանի և Իրանի միջև գոյություն չունի որևէ տարածքային կամ էթնիկական հիմնախնդիր կամ վեճ:

Անշուշտ այս բոլորը բանալի է հասկանալու համար, թե ո՞րն էր լինելու Իրանի դերն անկախ Հայաստանի կյանքում: Իրանը նախ և առաջ պատուհան է Հայաստանի համար՝ բացված դեպի արտաքին աշխարհ: Ընդորում, դա մշտական, կայուն և անփոփոխելի արժեք է:

Իսկ ինչպիսի՞ տեղ կարող է ունենալ սահմանակից անկախ պետություն Հայաստանը Իրանի երկրաքաղաքական և ռազմավարական ծրագրերում:

Գաղտնիք չէ, որ Խորհրդային Միության փլուզման հետևանքով Իրանի Իսլամական հանրապետության սահմանակից վիթխարի տարածքներ ունեցող երկրամասում՝ Անդրկովկասում և միջին ասիայում ստեղծվեց երկրաքաղաքական վակում, որը գնալով ավելի ու ավելի էր մեծանում շնորհիվ այն բանի, որ Ռուսաստանում սոցիալական ճգնաժամը գնալով ավելի էր ծավալվում: Դա անխուսափելիորեն Թեհրանում առաջ էր բերելու այդ վակումը լցնելու ձգտում, առավել ևս, որ ստեղծված նոր իրադրությունը Իրանին վերածելու էր տարածաշրջանում կարևորագույն երկրաքաղաքական խաղի մասնակիցներից մեկի: Չի կարելի հաշվից դուրս թողնել նաև այն հանգամանքը, որ Անդրկովկասի նորանկախ պետական կազմավորումների նկատմամբ Իրանը պատմական առումով չէր կարող չունենալ կայսերապաշտական, կամ թեկուզ ուժգին տարածաշրջանային ձգտումներ, սեփականկարևորության ու արժեքականության զգացումներ, ինչպես նաև տնտեսական, մշակութային և կրոնական հետաքրքրություններ: Կասկածից վեր է, որ այսրկովկասում Թուրքիան և Իրանը հանդիսանում են ոչ միայն կարևոր գեոստրատեգիական գործող անձինք, այլև յուրահատուկ երկրաքաղաքական կենտրոններ, նաև այն առումով, որ նրանց ներքին իրադրությունը ծայրահեղ կարևոր է ողջ տարածաշրջանի ճակատագրի համար:

Անվարան կարելի է ասել, որ ներկա իրադրության պայմաններում Իրանի պետական շահերը պահանջում են ամրապնդել Հայաստանի անկախությունը, ընդգրկել իր տարածաշրջանային քաղաքականության ոլորտը, օգտագործել նրա ճյուղավորված կապերը ԱՊՀ երկրների, մասնավորապես Ռուսաստանի հետ, օգտվել հայ սփյուռքի աջակցությունից՝ Արևմուտքում իրանամետ իմիջ ստեղծելու համար, համագործակցել հայաստանի հետ ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում և այլն:

Հայ-իրանական հարաբերություններն սկսվեցին զերոյական կետից, որովհետև Հայաստանում խորհրդային կարգերի ժամանակ երկու երկրների միջև տնտեսական և քաղաքական հարաբերություններն, ըստ էության, խզված են եղել: Հայաստանն ու Իրանը այդ 70 տարիների ընթացքում գործնականում չեն ունեցել շփման եզրեր:

1992թ. փետրվարի 8-ին Թեհրանում ստորագրված հռչակագիրը Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական հանրապետության միջև հարաբերությունների սկզբունքների ու նպատակների մասին հանդիսացավ կողմերի միջև հարաբերությունները կարգավորող առաջին փաստաթուղթը:

Երկու երկրների հարաբերությունների հետագա զարգացման գործում շրջադարձային նշանակություն ունեցավ 1992թ. մայիսի 6-8-ին՝ ՀՀ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և նրան ուղեկցող պատվիրակության այցն ԻԻՀ: Այդ այցի ժամանակ ՀՀ Նախագահի և ԻԻՀ Նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի միջև ստորագրվեց համատեղ հայտարարություն «համագործակցության, բարեկամության և բարիդրացիության մասին«, որը դարձավ երկու երկրների միջպետական հարաբերությունների հիմքում ընկած կարևորագույն փաստաթուղթը: Դրանով երկկողմ հարաբերությունները դրվում էին պետական բարձր մակարդակի վրա: Փաստաթղթում նշվում էր, որ Հայաստանի հանրապետությունը և Իրանի Իսլամական հանրապետությունը որպես իրավահավասար երկու բարեկամ և դրացի պետություններ, կզարգացնեն երկկողմանի հարաբերությունները: Երկու պետությունները՝ ելնելով միմյանց ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, ներքին գործերին չմիջամտելու,

ուժային սպառնալիքից ձեռնպահ մնալու, տարածայնությունները խաղաղ ճանապարհով լուծելու, փոխադարձ շահորի, միջազգային պարտավորությունների նկատմամբ հարգանքի սկզբունքներից, ձեռնամուխ կլինեն իրենց հարաբերությունների զարգացմանը:

Համատեղ հայտարարության մեջ հատուկ շեշտվում էր, որ երկու պետությունները միմյանց ընդհանուր սահմանները դիտում են որպես խաղաղության սահմաններ: Հաշվի առնելով յուրաքանչյուր երկրում գոյություն ունեցող հնարավորությունները, երկկողմանի հարաբերություններն էլ ավելի զարգացնելու նպատակով, կողմերը համաձայնվում էին պատրաստել և կնքել համագործակցության երկարաժամկետ համաձայնագրեր և առավելագույնս օգտագործել միմյանց հնարավորությունները և ներուժը:

1992թ. ապրիլին Երևանում՝ հանդիսավոր պայմաններում, տեղի ունեցավ ԻԻՀ դեսպանության պաշտոնական բացումը: Գործերի ժամանակավոր հավատարմատարի պաշտոնը ստանձնեց իրանական փորձառու դիվանագետ Բահրամ Ղասեմին, որին հետագայում փոխարինեցին Ահմադ Սոբհանին և ՀՀ-ում ԻԻՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպան Համիդ Ռեզա Նիքքար Էսֆահանին:

Թեհրանում Հայաստանի Հանրապետության դեսպանության պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1992թ. դեկտեմբերի 22-ին: Հայկական դիվանագիտական առաքելությունը նույն թվականի սեպտեմբերից ղեկավարում էր գործերի հավատարմատար Վահան Բայբուրդյանը /1994թ. նոյեմբերից նա նշանակվեց ԻԻՀ-ում ՀՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպան/:

1992թ. երկու երկրների միջև ստորագրվեցին մի շարք համաձայնագրեր ու պայմանագրեր, որոնք կոչված էին ստեղծել հարաբերությունների իրավական դաշտ: Ընդորում 1992-1998 թվականների ընթացքում դրանց ընդհանուր թիվն անցավ 200-ից:

Հենց սկզբից հայ-իրանական համագործակցության ամենածավալուն ու ակտիվ բնագավառները դարձան առևտուրն ու տնտեսությունը: Դա բնավ պատահական չէր: Հայաստանի դաժան շրջափակման և տնտեսական դժվարությունների պայմաններում Իրանի հետ համագործակցության մեջ Հայաստանը տեսնում էր տնտեսական առկա խնդիրների լուծման կարևորագույն ուղիներից մեկը: Այդ գործը կայուն հիմքերի վրա դնելու և արդյունավետ կերպով զարգացնելու նպատակով 1992թ. նոյեմբերին ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծվեց «Հայ-իրանական հարաբերությունները համակարգող պետական հանձնախումբ», որը գլխավորեց ՀՀ փոխնախագահ ագիկ Հարությունյանը: Այդ հանձնախումբը և Թեհրանում ՀՀ դեսպանությունը հիանալի համագործակցում էին: Միաժամանակ Թեհրանում

ստեղծվեց «Իրան-Հայաստան առևտրական պալատ» Իրանահայ Լևոն Ահարոնյանի գլխավորությամբ: Այդ պալատի մեջ ընդգրկվեցին ինչպես հայ, այնպես էլ իրանցի մեծ թվով գործարարներ:

Միանգամայն ակնհայտ էր, որ հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների սկզբնավորման ու ծավալման համար անհրաժեշտ էր սահմանային Արաքս գետի վրա կառուցել Հայաստանն Իրանի հետ կապող կամուրջ: Այն կոչված էր ոչ միայն իրականացնել երկու երկրների միջև մարդկանց ու բեռների փոխադրումներ, այլև լուծել Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող մի խնդիր. ճեղքել ցամաքային ճանապարհների շրջափակումը դեպի արտաքին աշխարհ դուրս գալու համար: Այդ խնդիրը գեթ ժամանակավորապես լուծելու համար 1992թ. մայիսին Մեղրու շրջանի Ագարակ ավանի դիմաց տեղադրվեց զինվորական նավակամուրջ /պոնտոնային նավակամուրջ/, որն իսկապես Հայաստանի համար դարձավ «կյանքի ճանապարհ«, իսկապես փրկության ուղի: Իզուր չէ, որ հայ ժողովուրդն այն անվանեց «հույսի կամուրջ»: Հիրավի, դա իսկապես մի արյունատար անոթ էր,որը կոչված էր սնել հետզհետե հյուծված մարմինը՝ շրջափակման ենթարկված Հայաստանը: Այդ կարևորագույն իրադարձության գնահատականը տալիս անհրաժեշտ է անպայման շեշտել այն իրողությունը, որ դարավոր հարևան և բարեկամ Իրանը և նրա առաքինի ու ազնիվ ժողովուրդը եղբայրական օգնության ձեռք մեկնեց հայ ժողովրդին և նրա մանուկ հանրապետությանը, ճեղքելու համար շրջափակման խեղդող օղակը: Բայց դա դեռ ծրագրի սկիզբն էր: ՀՀ և ԻԻՀ կառավարությունների միջև 1992թ. մայիսի 14-ին կնքված միջպետական համաձայնագրի համաձայն, կողմերը ձեռնամուխ եղան համատեղ մշտական կամրջի նախագծման և կառուցման աշխատանքներին: 1996թ. հունվարի 9-ին Հայաստանի և Իրանի պատասխանատու գործիչները հանդիսավոր պայմաններում կատարեցին գեղեցկության տիպար հանդիսացող այդ մշտական կամրջի բացումը: Անդրադառնալով այդ կամուրջի նշանակությանը, ՀՀ նախկին Նախագահը նշել է. «Անկախության առաջին դժվարին տարիներին կյանքը մեզ ստիպեց փնտրել այլընտրանքներ, որպեսզի կարողանանք ապրել ու գոյատևել, և մենք այն գտանք- ես նկատի ունեմ հարաբերությունները Իրանի հետ: Մենք սկսեցինք զերոյից, իսկ այսօր Իրանը մեզ համար առաջին տնտեսական գործընկերն է: Եվ եթե այսօր այնտեղ սահմանային կամուրջը փակվի, մեկ ամիս հետո այստեղ գները կկրկնապատկվեն«:

Կամրջի շահագործման հանձնումից հետո սահմանի վրա գտնվող միջազգային անցումային կետի գործունեությունը անընդհատ կերպով աշխուժացավ, կտրուկ ավելացավ բեռնատար ավտոմեքե-

նաների երթևեկությունը, սկսվեց նաև Հայաստանի տարածքով իրանական բեռնատար մեքենաների տրանզիտային անցումը դեպի Սև ծով և հակառակ ուղղությամբ:

Այսպիսով մշտական կամրջի շահագործման հանձնումը նոր հզոր լիցք հաղորդեց հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերություններին: Հայաստանն ու Իրանը դարձան միմյանց համար կարևորագույն առևտրական գործընկերներ: 1997 թվականին՝ 1994թ. համեմատությամբ, Հայաստանի ապրանքաշրջանառությունն Իրանի հետ ավելացավ մոտ երեք անգամ՝ գումարային առումով հասնելով տարեկան 20 միլիոն ամերիկյան դոլարի: Իրանը դարձավ Հայաստանի համար թիվ առաջին առևտրական գործընկերը, նրա արտաքին տնտեսական կապերի մեջ հաստատուն կերպով զբաղեցնելով առաջին տեղը /Ռուսաստանն անցավ երկրորդ տեղը/: Մեղրիի շրջանում և Նորադուզում գործող միջազգային անցումային կետերը և երկու երկրների սահմանային մաքսատներն աշխատում էին մեծ ծանրաբեռնվածությամբ: Հայաստանում և Իրանում իրար հետևից բացվում էին մասնավոր ու պետական կամ խառը առևտրական ընկերությունների մասնաճյուղեր, Երևանում և Թեհրանում կազմակերպվեցին մի քանի առևտրաարդյունաբերական ցուցահանդեսներ: Կողմերի միջև առևտրատնտեսական հարաբերություններում նորը նաև այն էր, որ Իրանի մի շարք նահանգների /Արևելյան և Արևմտյան Ադրբեջան, Արդեբիլի, Իլյանի, Քերմանի, Սպահանի նահանգներ և այլն/ գործարար շրջաններն ուղիղ և չմիջնորդավորված կապերի մեջ մտան Հայաստանի հետ: Առևտրի այդ ձևը գործում էր մեծ արդյունավետությամբ: Վերընթաց գծով էր զարգանում նաև սահմանային առևտուրը: Հայաստանի կառավարությունը չափազանց կարևոր նշանակություն էր տալիս սահմանակից Ատրպատականի հետ տնտեսական հարաբերությունների զարգացմանը: Նկատի ունենալով, որ Ղարաբաղյան պատերազմի հետևանքով այդ երկրամասում Հայաստանի նկատմամբ առկա էր անվստահության ու կասկածամտության մթնոլորտ, Թեհրանում ՀՀ դեսպանությունը ծավալեց եռանդուն գործունեություն նման մթնոլորտը վերացնելու և Իրանի այդ բարեբեր ու տնտեսական մեծ ներուժ և հսկայական տարածքային չափեր ունեցող երկրամասը Հայաստանի հետ առևտրատնտեսական կապերով շաղկապելու համար: Այդ գործում կարևոր և շնորհակալ դեր խաղաց նաև Արևելյան Ադրբեջանի նահանգապետ Աբդուլ Ալի Զադեն: Նրա ջանքերով դեռ 1993թ. յգոստոսին Երևան մեկնեց հիշյալ նահանգի պատվիրակությունը՝ փոխնահանգապետ Մոհամմադ Ալի Խաթիբիի գլխավորությամբ: Շնորհիվ երկուստեք գործադրած ջանքերի, ի վերջո սառույցը կոտրվեց և մեծ թվով ազգությամբ ազերի գործարար մարդիկ

և վաճառականներ Հայաստանի հետ ծավալեցին լայն գործունեություն:

Կարևոր է նշել, որ Հայաստանի շուկան, իր հնարավորությունների սահմանափակ լինելով հանդերձ, ԱՄՆ-ի կողմից տնտեսական շրջափակման մեջ գտնվող Իրանի համար գնալով ավելի էր արժեքավորվում, մանավանդ որ իրանական ներքին շուկան արդեն ձեռք էր բերել կրիտիկական զանգված և կարիք ուներ արտաքին նոր շուկաների:

1996-1997 թվականներին Հայաստան-Իրան առևտրատնտեսական հարաբերությունների մեջ տեղի ունեցան նաև որակական փոփոխություններ: Եթե անցյալում այդ բնագավառում համագործակցությունը սահմանափակվում էր լոկ պարզ ապրանքափոխանակության շրջանակներում, ապա այժմ զարգացումն ընդգրկել էր նաև ինֆրաստրուկտուրայի բնագավառը:

Առհասարակ արդեն 1997 թվականին կյանքը հրամայական խնդիր էր դնում վերացարկվել պարզ առևտուր վարելու քաղաքականությունից՝ որպես համագործակցության գերադաս սկզբունք, և երկու երկրների կապերը դիտարկել տնտեսական ինտեգրացման տեսանկյունից՝ հենված փոխզարգացման վրա: Այլ կերպ ասած, անհրաժեշտություն էր զգացվում տնտեսական հարաբերություններն առևտրի ոլորտից ավելի մեծ չափով տեղափոխել արտադրատնտեսական համագործակցության ոլորտ, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության բնագավառներ, խորացնել համագործակցությունը գիտության, նորագույն տեխնոլոգիաների, արդյունաբերական սարքավորումների, տեխնիկական գիտելիքների փոխանակման բնագավառում:

Այդ ուղղությամբ առաջին խոշոր քայլը հանդիսացավ Իրան-Հայաստան բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի շինարարությունն ու շահագործման հանձնելը /1997թ./: Առհասարակ պետք է նշել, որ հայ-իրանական տնտեսական հարաբերություններում հեռանկարային բնագավառներից մեկը դարձավ համագործակցությունը էներգետիկայի և տրանսպորտի բնագավառներում: 1995թ. կնքվեց համաձայնագիր Իրան-Հայաստան կամ Թավրիզ-Մեղրի գազամուղ կառուցելու վերաբերյալ, որը շահագործման հանձնումից հետո Հայաստանի համար կարող է հանդիսանալ էներգետիկ անկախության կարևորագույն գործոն: Այդ նույն թվականին կնքվեց համաձայնագիր Արաքս գետի վրա համատեղ հիդրոէլեկտրակայանի կառուցման վերաբերյալ: Մինչև 1993թ. երկու երկրների միջև օդային կապն իրականացվում էր իրանական «Արիաթուր«օդային ընկերության կողմից: 1993 թվականից սկսեց գործել Երևան-Թեհրան-Երևան օդային կանոնավոր թռիչքը, որն

իրագործվում է «Հայկական ավիաուղիներ» օդային ընկերության կողմից: 1996 թվականից Թեհրան-Երևան-Թեհրան չվերթով թռիչքներ սկսեցին կատարել նաև իրանական «Քասպիան էյրլայնզ» ավիաընկերության ինքնաթիռները: Բացի այդ, հայկական և իրանական տրանսպորտային ընկերությունների կողմից Երևանի և Թեհրանի միջև բացվեց կանոնավոր ավտոբուսային երթևեկություն:

Կողմերի միջև պայմանավորվածության համաձայն, Իրանը սկսեց իր մասնակցությունը բերել Մեղրի-Երևան ավտոմայրուղու վերակառուցման ու բարեկարգման աշխատանքներին, այն հաշվով, որ առաջիկայում այդ ճանապարհը դառնալու է միջազգային ճանապարհ, որի միջոցով Իրանը կապվելու է Սև ծովի Փոթի նավահանգստի հետ: Ներկայումս իրանական կողմը իր մասնակցությունն է բերում Քաջարանի մոտ թունելի կառուցմանը, որն էապես կկարճացնի ճանապարհը և այն կդարձնի անվտանգ՝ երթևեկության համար:

Ի դեպ, Թեհրանում որոշակի շահագրգռվածություն ու հետաքրքրություն են դրսևորում Վրաստանի Բաթումի նավահանգստում Հայաստանի մասնակցությամբ երկաթուղային լաստանավի շինարարության նկատմամբ, որը հնարավորություն կտա իրականացնել բազմամոդել փոխադրումներ՝ Կոնստանցա կամ Վառնա-Փոթի-Հայաստան-Իրան երթուղով:

1993 թվականից սկսած Իրանը Հայաստանի համար խաղում էր նաև տարանցիկ կամրջի դեր, Պարսից ծոցի ավազանի երկրներից, մասնավորապես Արաբական Միացյալ Էմիրություններից, Հնդկաստանից, Պակիստանից, Հարավ-Արևելյան Ասիայի և Հեռավոր Արևելքի երկրներից, ինչպես նաև Թուրքիայից Հայաստան բեռների խոշոր զանգվածներ տեղափոխելու համար:

Մեր խորին համոզմամբ, ՀՀ և ԻԻՀ միջև հարաբերությունների հետագա զարգացման ճանապարհին այսուհետև ևս ռազմավարական կարևորագույն ուղղություններից մեկը հանդիսանալու է կոմունիկացիաների և հաղորդակցության ճանապարհների հարաճուն զարգացումը:

Շոշափելի ձեռքբերումներ արձանագրվեցին նաև կապի բնագավառում: 1993 թվականից սկսեց գործել Իրան-Հայաստան ավտոմատ հեռախոսային կապը, որը գնալով կատարելագործվում ու տեխնիկապես նորացվում է: Նախագծեր կան Հայաստանն օպտիկա-թելքային հեռախոսային գծով Իրանի տարածքի վրայով կապելու Եվրոպայի և Ասիայի հետ:

1992-1998 թվականների ընթացքում որոշ հաջողություններ ձեռք բերվեցին նաև արդյունաբերության գծով համագործակցության բնագավառում: Տեղի ունեցավ առանձին ձեռնարկությունների արդյունաբերական հզորությունների կոոպերացում, ստեղծվեցին բազմաթիվ համատեղ ձեռնարկություններ և այլն: 1997թ. տվյալներով Հայաստանում գործում էին 250 համատեղ հայ-իրանական ընկերություններ:

Երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը հատկապես դրական լիցք հաղորդեց Երևանում իրանական հայտնի բանկերից մեկի՝ «Բանքե մելլաթի«բաժանմունքի ստեղծումը:

Գյուղատնտեսության բնագավառում հայ-իրանական համագործակցությունը սկսվել էր դեռևս 1992 թվականից: Հայ մասնագետներին հատկապես հետաքրքրում էր Իրանի ձեռք բերած հաջողությունները ոռոգման համակարգի բնագավառում: Իրանական փորձը ուսումնասիրելու նպատակով անցած մի քանի տարիների ընթացքում Իրան են այցելել բազմաթիվ պատվիրակություններ: Հատկապես արդյունավետ էր 1998թ. հունիսին հայկական պատվիրակության այցն այն ժամանակվա գյուղատնտեսության նախարար Վ.Մովսիսյանի գլխավորությամբ:

Անցած մի քանի տարիների ընթացքում խոշոր ձեռքբերումներ են արձանագրվել նաև հայ-իրանական գիտական և մշակութային համագործակցության բնագավառում: Հայերն ու իրանցիները հզոր մշակույթ ունեցող ժողովուրդներ են, և նրանց միջև մշակութային համագործակցությունը փոխադարձաբար կարող է հարստացնել երկու ժողովուրդներին և նպաստել ստեղծելու նոր որակներ ու արժեքներ: Երկու երկրների միջև գիտական և մշակութային հարաբերությունների հիմքը 1992թ. մայիսի 7-ին՝ կողմերի միջև ստորագրված համաձայնագրով:

Հայաստանի և Իրանի միջև երկկողմ գիտամշակութային կապերը զարգանում էին պայմանագրային հիմքի վրա, կատարվում էին գիտության և մշակույթի գործիչների փոխայցելություններ, կազմակերպվում էին մշակութային բազմաթիվ միջոցառումներ, փառատոներ և այլն: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Թեհրանի «Իսլամական ազատ համալսարանում«բացվեց հայագիտական բաժին, իսկ Երևանի Հրաչյա Աճառյանի անվան համալսարանում պարսից լեզվի և գրականության բաժին: 1997թ. իրանական կողմի հրավերով ԻԻՀ այցելեց ՀՀ Ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ֆ. Խարգսյանը, որն իր այցի ժամանակ պայմանավորվածություններ ձեռք բերեց երկու երկրների գիտատեխնիկական ներուժի համագործակցությունը ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է 1992-1998 թվականների ընթացքում Իրան-Հայաստան քաղաքական հարաբերություններին, ապա դրանք զարգանում էին կայուն և հավասարակշռված հիմքի վրա: Հայաստանի

պետական հեղինակությունը Իրանի Իսլամական Հանրապետությունում քայլ առ քայլ մեծանում էր: Հարաճուն կերպով մեծանում էր նաև հավատն ու վստահությունը միմյանց նկատմամբ: Այդ տարիներին մեր երկու երկրների միջև քաղաքական հարաբերությունների բնագավառում տիրապետող մթնոլորտը միշտ եղել է բարեկամությունը, անկեղծությունը և կառուցողական ոգին: Երկու կողմերն էլ գործնականում ապացուցել են, որ լի են քաղաքական կամքով ու վճռականությամբ մեր պետությունների միջև բարեկամական փոխշահավետ կապերը զարգացնելու ուղղությամբ:

Այսօրվա իրողությունների համատեքստում Հայաստանի և Իրանի երկարաժամկետ շահերն համընկնում են, որը կայուն հող է ստեղծում իրական ռազմավարական գործակցության զարգացման համար:

Մեր կարծիքով այսօր առկա են Իրանի հետ քաղաքական հարաբերությունների զարգացման խոշոր, չօգտագործված ռեզերվներ:

Հայաստան-Իրան զարգացումների ապագայի մասին խոսելիս, մեր կարծիքով լուծման ենթակա կարևորագույն հարցերից մեկը հանդիսանալու է Հայաստանը Իրանի հետ կապող երկաթուղագծի շինարարությունը: աղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետությունը զուրկ է արտաքին աշխարհ դուրս գալու համար հարմար կոմունիկացիաներից: Այդ բնական անհարմարությանն ավելանում է նաև նրա հարևանների կողմից քաղաքական նպատակներով իրագործվող տրանսպորտային արհեստական շրջափակման մշտական հավանականությունը: Նման պայմաններում, անշուշտ, կենսական անհրաժեշտություն է դառնում Իրանը Հայաստանի հետ կապող երկաթուղագծի շինարարությունը, որն ի վիճակի կլինի Հայաստանի համար արտաքին աշխարհի հետ ապահովել հուսալի տրանսպորտային կապ: Նպատակահարմար է կառուցել Ջուլֆա-Մեղրի /64կմ/ կամ Մեղրի-Ալամդար /45կմ/ երկաթուղագիծը:Այնուհետև այդ գիծը Մեղրիից կարող է շարունակվել դեպի Երասխավան կամ Ջերմուկ՝ Մարտունի-Շորժա գծին միանալու պայմանով:

Միանգամայն ակնհայտ է, որ երկաթուղային այդ ծրագրի իրականացման դեպքում Հայաստանը հնարավորություն կստանա իրանական երկաթուղային ցանցի օգնությամբ ոչ միայն մուտք գործել դեպի հուսալի կոմունիկացիաները և դուրս գալ «լայն աշխարհ«, մասնավորապես դեպի Պարսից ծոց և Միջին Ասիա, այլև ընդհանրապես բացառել իր տրանսպորտային հավանական շրջափակումները: Նույնիսկ Հայաստանի երկաթուղիների ապաշրջափակման դեպքում այդ երկաթուղագիծը կարող է դառնալ այլընտրանքային և ապահովել Հայաստանի տրանսպորտային անկախությունը:

Ենթադրում ենք, որ նշված երկաթուղագծի շինարարությունը

տնտեսական, քաղաքական և ռազմավարական առումով ձեռնտու է նաև Իրանին, որովհետև նա շահագրգռված է ստեղծել Իրանը Սև ծովի ավազանին կապող ցամաքային կոմունիկացիաների մի ցանց:

Հանրագումարի բերելով վերևում ասվածը, անհրաժեշտ է շեշտել, Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի Հանրապետության տնտեսական և քաղաքական հարաբերությունների զարգացումը հայ ժողովրդի ազգային ու պետական շահերի տեսակետից ունի կենսական նշանակություն: Այդ հարաբերությունները հեռանկարային են և խոստումնալից: Ուստի անհրաժեշտ է ամեն կերպ ծավալել Հայաստանի հարավային հարևանի հետ ակտիվ կառուցողական քաղաքականություն: Իրանն այսօր կարևոր գործոն է Հայաստանի առջև դրված բազմակողմ ազգային շահերի ապահովման գործընթացում և կարելի է անվարան ասել, որ նրա այդ դերն ապագայում գնալով մեծանալու է:

ԱՐԱ ՊԱՊՅԱՆ
ԱԳՆ մամլո խոսնակ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Երիտասարդությունը, որպես մարդկության ապագա սերունդ, առավել լուսավոր գալիքի ստեղծման գործում չափազանց մեծ դեր ունի: Ուստի նրանց ներկայիս մտածելակերպը, հակումները եւ կողմնորոշումները յուրահատուկ կարեւորություն ունեն, իսկ նրանց աշխարահայացքի ճիշտ ձեւավորումը, ինչպես նաեւ էության խոր վերլուծումը եւ կողմնորոշվելու ընթացքը դեպի արժանի հասարակության ստեղծումը պարզապես անհրաժեշտ է: Իրանը որպես մի երկիր, որի ընդհանուր բնակչության կեսը մինչեւ 25 տարեկան երիտասարդներն ու պատանիներն են կազմում առավել ուշադրության եւ խնամքի կարիք ունեն, իսկ Իմամ Խոմեյնին քաջ գիտակցելով այս հարցի հույժ կարեւորությունը իր զրույցներում եւ ելույթներում բազմիցս անդրադարձել է երիտասարդների դեմ ծառացած խնդիրներին:

Եթե երիտասարդները ճիշտ դաստիրակվեն, ապա երկրի ապագան երաշխավորված կլինի եւ նրա զարգացումները ճիշտ ուղիով կընթանան: Վեհափառ Խոմեյնին իր ուղերձներում երիտասարդներին վերաբերվող սկզբունքներից մեկը հատուկ շեշտում էր, եւ դա մարդկային վեհ արժեքների անկախ պահպանումն էր: Նա այս առնչությամբ նշում է. «Երիտասարդներից, աղջիկներից ու պատանիներից պահանջում եմ, որպեսզի բարձր դասեն մարդկային վեհ արժեքները եւ ազատությունն ու անկախությունը, նույնիսկ եթե դա առլեցուն է տանջանքներով ու զրկանքներով, այլապես պճնանքների, խրախճանքների, սանձազերծությունների եւ անառակությունների զոհ կդառնան: Խուսափեն այնպիսի հասարակական անբարո կենտրոններից, որոնք արեւմուտքն է մատուցում բովանդակ աշխարհին»: Վեհափառը ճիշտ էր ըմբռնել, որ Իրանի իսլամական հեղափոխության թշնամիները երկիրը պղծելու նպատակով առաջին հերթին երիտասարդներին են թիրախ դարձրել, քանզի, երբ երիտասարդը շեղվեց ճշմարիտ ուղղուց եւ տարվեց նյութական ու անբարոյական վաղանցիկ հաճույքներով, հայրենիքը նրա համար այլեւս գոյություն չունի, իսկ երկրի գաղութացման դռները արդեն բաց են կեղեքիչների առջեւ:

Իմամը այս առթիվ ասում է. «Նրանք, ովքեր նպատակ ունեին մեզ

թուլացնելու, տարիների եւ հատկապես այս վերջին հիսուն տարվա ընթացքում անտարբերություն սերմանեցին մեր երիտասարդների մեջ»:

Մի այլ տեղ այսպես է նշում. «Գաղութատեր գործակալներն ու նրանց աջակցողները գիտակցում են, որ ճանաչելով ազգերին եւ հատկապես կրթված երիտասարդներին, որոնք, քիչ թե շատ իրազեկ են իրենց հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին, ընբռնում են իրենց ազգային շահը, գաղութատեր կեղեքիչների անկման նշանակությունը, ավելի դյուրին կլինի տարբեր խաբուսիկ հնարքներով թունավորել ու բթացնել նրանց մտքերը: Նրանք քաջ գիտակցում են, որ եթե կարողանան երիտասարդներին շեղել ճշմարիտ ու ազգանպաստ ուղուց, ապա ի վիճակի կլինեն իրագործելու իրենց չարաբաստիկ մկրտումները: Ուստի ջանում են նախ եւ առաջ շարքից հանել նրանց կրթական օջախները, որոնց առաքելությունը հասարակության վերակառուցումն է»:

Նա երիտասարդներին հորդորում էր. «Դուք, քաջարի երիտասարդներ, սիրելի աշակերտներ, դուք իմ հույսն ու ավետիքն եք: Դուք Իրանի, որ ծայրում էլ կաք, պետք է արթուն լինեք եւ սթափ վիճակում պաշտպանեք ձեր իրավունքները: Ձեր կարողությամբ ու հզորությամբ երկիրը պետք է վերածնվի»:

Այսպիսով, ըստ Իմամ Խոմեյնու, երիտասարդների դաստիարակությունը երկրի վերականգնման գործում շատ կարեւոր է: Նրանք պետք է կրթվեն ու դաստիարակվեն մարդկային բարոյականության եւ իսլամի սկզբունքներով:

Նա շեշտում է. «Այս անուշիկ երիտասարդությունը, որ ապագայում պետք է պահի, պահպանի եւ կառավարի մեր երկիրը, հարկավոր է, որպեսզի ճիշտ դաստիարակվի: Իսլամը, առավել քան որեւէ բան, երիտասարդության հղկման ու դաստիարակման վրա է ուշադրություն դարձնում: Հիրավի, ինչ փոփոխություն էլ որ կրի երիտասարդությունը՝ թե՛ դրական եւ թե՛ բացասական, նրա ազդեցությունը հասարակության վրա ակնառու է»: Երիտասարդի դրական կատարելության մասին, Խոմեյնին նշում է. «Այն վերափոխումը, որ տեղի է ունեցել երիտասարդության շրջապատում ավելի կարեւոր է քան ամբողջ երկրում, քանզի այս վերափոխումը իսլամական հեղափոխության ներկա փուլի երաշխիքն էր: Իսլամական հեղափոխությունը (հեղափոխության պահին) այսօրվա սերունդն է իրագործել, իսկ երիտասարդները (ապագա սերունդը) պետք է պահեն եւ ամրապնդեն նրա հիմքերը»: Մյուս կողմից հարվածը, որ երկիրը ընդունեց որոշ երիտասարդների կողմից, ըստ Իմամ Խոմեյնու ամենակարեւոր հարվածներից մեկն էր:

«Այս խումբ երիտասարդները իրենց ողջ արժանապատվությունը

զոհել էին հանուն արեւմուտքի, եւ սա մեր պարտությունների շարքում ամենածանր հոգեկան պարտությունն էր»:

Այսպիսով Իմամը ամենադժվարին պարտականությունը դնում է երիտասարդության ուսերին ու հրամայում. «Դուք երիտասարդներդ երկրի, որ ծայրում էլ լինեք ամենալուրջ պարտականություններն ունեք

- Պաշտպանել հայրենիքը եւ նրա անկախությունը, որը իսլամի պարտադիր պարտքն է .

- Մարդկային համայնքներին ծանոթացնել իսլամի պարտականությունների հետ թե՝ իշխանության ձեւի եւ արդարության տարածման, թե՝ մուսուլմանների հետ վեհ վերաբերմունքի, եւ թե՝ մուսուլմանների պետական գանձարանի նկատմամբ վեհ գործառնության տեսանկյունից:

Իմամ Խոմեյնու տեսանկյունից երիտասարդին պետք է առաջնորդել ճանաչելով նրա հոգու ուժը եւ կորովը, որպեսզի նրա կրթման եւ դաստիարակության ընթացքը ճիշտ հարթության վրա դրվի, քանզի երկիրը երիտասարդներով պետք է վերակառուցվի:

Այս տեսակետից իսլամական հեղափոխության առաջին նպատակը համալսարանների եւ մյուս կրթադաստիրակչական կենտրոնների վերակառուցումն էր: Համալսարանները, որպես երիտասարդին դաստիարակող հիմնական կենտրոններ, նրանց կրթում, դաստիարակում եւ հանձնում են հասարակությանը: Նախահեղափոխական ժամանակաշրջանում կեղեքիչները եւ իսլամական հեղափոխության թշնամիները ձգտում էին ներազդել ուսուցման ծրագրերի ընթացքի վրա, երիտասարդներին գրավել դեպի արեւմտյան մշակույթ, նրանց կտրել արմատներից, եւ այսպիսով հասնել իրենց նպատակին:

Իմամը այս առնչությամբ նշում է. «Բոլորս գիտենք, որ երկրի, ազգի եւ համակարգի ճակատագիրը, մարդկության հոծ բազմություններից հետո, կրթված երիտասարդների ձեռքում է, իսկ կեղեքիչների բուն նպատակը՝ տիրանալ հենց այս օջախներին»:

Երիտասարդ սերունդը երկիրը կառուցելու եւ նրա ապագան երաշխավորելու նպատակով պետք է վերակառուցվի: Այս տեսանկյունից Իմամ Խոմեյնին համալսարանը համարում է մարդաստեղծ գործարան, ուր երիտասարդը պետք է իսկական մարդ դառնա՝ մարդկային ամենավեհ արժանիքներով օժտված, որ Աստված ինքն է պարգեւել մարդկությանը, եւ նրան առաջնորդի դեպի հասարակություն:

Վերջում պետք է նշել, որ Իմամ Խոմեյնին լավագույնս կարողացավ երիտասարդի տեղը եւ կարեւորությունը ներկայացնել հասարակությանը եւ նրանց, որպես մտավոր եւ ֆիզիկական հզոր ներուժ,

օգտագործել հեղափոխության զարգացման եւ հարատեւման գործում: Այսօր Իրանի Իսլամական Հանրապետությունը հանձինս Իմամ Խոմեյնու մտքերի եւ հայացքների օժտված է երիտասարդ մտավորականներով, որոնք իրենց ողջ էությամբ զգացել են արեւմտյան վնասաբեր հարվածները եւ լեցուն են պարտքի զգացումով:

ՌՈՒԲԵՆ ԱՆԳԱԼԱԴՅԱՆ
Մշակույթի գծով
վարչապետի խորհրդական

ԱՅԱԹՈԼԼԱ ԽՈՄԵՅՆԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Անհավատալի, բայց փաստ է, որ XX դարը ոչ միայն մրցունակությունը բարձրացրեց քրիստոնեական տարանուն եկեղեցիների միջեւ, այլեւ այն իր ազդեցությունը ունեցավ բուդայիզմի, դայոիզմի եւ իսլամի վրա:

XX դարում գեղարվեստական մշակույթում նոր ձեւերի փնտրումը գիտա-տեխնիկական հեղափոխության հետ զուգահեռ սպառազինում է կյանքի կառավարումը: Հասարակության գլոբալ կառավարումը հանգեցնում է այն բանին, որ մարդը կորցնում է ազատ ընտրելու իրավունքը, սպառողական շուկայում վերածվում է այնպիսի մի գործիքի, որը պետք է օգտագործի այն ինչը առաջարկվում է նրան լավ ձեւավորված գովազդային գաղափարախոսության ձեւով: Այդ գաղափարախոսությունը ստեղծում է մեծ քանակությամբ սպառողներ, որի ընթացքը խիստ անհատական բնույթ է կրում: Ես մինչեւ անգամ այն անհատական ընթացք կանվանեի:

Ժամանակակից մարդու հոգեւոր որոնումները բավականին նուրբ թելերով կապված է անցյալի իսկական բարձր մտքերով:

Մարդկության պատմության մեջ տեղի ունեցավ նոր շրջադարձ, որը զարգացման նոր ընթացք թեւակոխեց հենց XX դարի սկզբին:

Տարբեր փիլիսոփայական հոսքերով, գրականության գլուխ գործոցներով (այդ թվում եւ «Ավեստայով») նոր մտածելակերպի սինթեզով հետաքրքրվողների փորձը մեզ հուշում են, որ գեղագիտական եւ փիլիսոփայական դարի մտքերը բավականին ուժեղ ճգնաժամերի են դիմակայել:

XX դարի գաղափարախոսությունը շնորհիվ խոշոր հայտնությունների՝ հոգեբանության, գենետիկայի, տնտեսագիտության, կապի եւ այլ բնագավառներում, բավականին փոփոխությունների է ենթարկվել: Մարդկության պատմությունը դեռ չգիտեր, որ հնարավոր է ունենալ այդպիսի ինտերնացիոնալ զգացողականություն, կենցաղ, ճաշակ, գեղարվեստական կարծիքներ եւ այլն:

Աշխարհը պտտվում է մի մեծ փոսում, որից պետք է վերցնել ոչ միայն նրա ներքին ազատությունը, այլեւ ամենագլխավորը՝ պատկերացումները: Մարդկանց մասսայական խմբեր սկսեցին հետաքրքրվել բազմազան կրոնական ուսմունքներով: Այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ հավատքները սկսել են մոտենալ եւ այն հասցրեց նրան, որ Արեւմուտք եւ Արեւելք քաղաքական բեւեռները միմյանցից հեռացան: Այս հանգամանքը հիշեցնում է մարդկության պարադոքսային փնտրտուքը իրավաբանական եւ բարոյա-հոգեբանական բնագավառում մի կողմից՝ հավասարում մարդկության, ազգերի եւ ազգությունների եւ մյուս կողմից՝ գենետիկայի միջեւ:

Այս շարքում պետք է քննարկվեն քաղաքական եւ կրոնական համակարգերի վեճերը, որոնք սնվում են տարբեր փիլիսոփայական կոնցեպցիաներից: Այդ քաղաքական համակարգերը տարբեր ժողովուրդների կյանքը կազմակերպում են տարբեր եղանակներով: Արեւմտյան հասարակության սպառողականությունը սպառման համար եզրահանգեց նրան, որ ամբողջ մշակույթը կառուցված է բացարձակապես կյանքի նյութական հիմքի վրա: Մարմնի պաշտամունքը եւ ի հետեւումն դրան բարոյական փոխհարաբերությունը մարդկանց միջեւ (եւ ոչ միայն կնոջ եւ տղամարդու միջեւ) բացահայտ բնույթ է կրում, որը դեմ է կյանքի ընկալման արեւելյան տեսակետին:

Ներկայում գոյություն ունի երկու հասարակություն՝ արեւմտյան եւ արեւելյան: Արդեն 40-50 տարի է ինչ նրանք ոչ միայն հետաքրքրվում են սեփական կյանքի կազմակերպման հիմնադրույթների ըմբռնումով, այլ նրա ներսում գտնվող ամենակարեւոր արժեքներով: Իմիջայլոց պատասխանատվության եւ բարոյականության, երջանկության եւ սոցիալական արդարության հանրային հասկացողությունը այնպես հրապուրեցին արեւմտյան մտածողներին կոմունիստական եղբայրության ուտոպիայի գաղափարներին, որի իրականացումը անհնար էր արեւմուտքի եւ արեւելքի հասարակության եւ մշակույթի հիմնական ուղղությունների եւ տնտեսական զարգացման կոպիտ մրցակցության պայմաններում:

Այաթոլլա Խոմեյնու ջանքը՝ հասկանալ եւ գործնականորեն կիրառել արեւելքի գաղափարները բարոյականության եւ կյանքի նորմատիվները, հակադրել արեւմտյան ազատամիտ եւ ազգային հոգու միասնություն ունեցող մարդու օրինակին հանգեցրեց այն մտքին, որ առանց ազգին դիմելու, առանց նրա հոգեւոր առաջնորդի՝ այս պարագայում իսլամի առաջնորդի, անհնարին է ձեւավորել իրանական հասարակարգը: Եվ այսպիսով արեւմտյան հասարակության ընդերքում հասունացավ այդ հակադրությունը, քանի որ հատկապես իր կյանքի վերջին ժամանակաշրջանը վտարանդիության մեջ՝ Ֆրանսիայում անցկացրեց գալիք իրանկան Իսլամական հեղափոխության առաջնորդը: Արեւմուտքը նրա կողմից ընդունվեց, որպես դադարկ, ավելորդ մտքերի, բայց մեխանիկական կյանքը լավ

ներդրած միջավայր: Հատկապես արեւմուտքում նա ավելի սուր ընկալեց արեւելքի հոգու մեծությունը, իսլամի գործառնականությունը, որպես հասարակության միակ կազմակերպիչ ուժի: Անկասկած Իրանը, հնագույն մեծ մշակույթի երկիրը, իր նշանավոր որդու ուղեցույց աստղն էր, որի նպատակն էր գործնականորեն ստեղծել աշխարհի դեմքը, Իրանի օրինակով ցույց տալ նոր հասարակության կազմակերպման ձեւը, նրա մշակութային եւ հոգեւոր արժեքները: Իմամ Խոմեյնու հոգում հասունացած հակամարտությունները, իրական կյանքում վերածվեց հեղափոխության, իրանական ժողովուրդը հավատաց եւ հետեւեց նրան: Իրանական հեղափոխությունը ներկայացրեց իր սեփական ազգի արժեքները, անկախությունը եւ իռացիոնալիզմը, համեմատելով այն ժամանակակից աշխարհի արեւմտյան ռացիոնալիզմի սեփական աշխարհահայացքին եւ նույնպես կամքին: Իմամ Խոմեյնու հասկացողությամբ իրանական ժողովուրդի յուրօրինակությունը միակ գործոնն է ժամանակակից հակադրությունների առկայությամբ արեւմտյան տերությունների բարոյազուրկ խաղերի դեմ, որը աշխարհ շահագործելով ղեկավարում է աշխարհին:

Անգլիացի նշանավոր պատմաբան Թոյնբը ասում է՝ Իսլամը նման է կոմունիզմին, որը իր ճանապարհը հարթել է վերափոխումների ծրագրերի ժամանակակից քրիստոնեության փորձի հիման վրա նպատակադնելով զերծ մնալ չարաշահումներից եւ խախտումներից: Այդ տեղի է ունեցել իսլամի հաստատման սկզբում, բայց այն կարող է վերագրվել եւ մեր օրերի իրավիճակին: Թոյնբը կոնկրետ ասում է եւ ներկայիս արեւմտյան արժեքների վնասների՝ մասնավորապես արեւմտյան նացիոնալիզմի մասին: Թոյնբը իր «Իսլամը եւ արեւմուտքը» հայտնի հոդվածում գրում է՝ Հարց է առաջանում ինչպիսին կլինեն արեւմտյան նեղճակատ քաղաքականության գաղափարները իսլամի աշխարհում, որտեղ որ պահպանվում են ավանդական սովորությունները, համարելով, որ աշխարհի բոլոր մուսուլմանները անկախ ազգային պատկանելությունից, մաշկի գույնից եւ լեզվից եղբայրներ են: Հավանաբար այս մտորումները եւ այն մտքերը, որ ընդունելի են իրանական հեղափոխության կողմից, կարող են վիճաբանության առարկա դառնալ, բայց փաստը մնում է փաստ, որ գոյություն ունեն անհամապատասխանություն արեւելքի եւ արեւմուտքի, նրանց հասարակության դերի եւ արժեքների ընկալումների միջեւ: Դա հավանաբար առավել կասստկանա: Հակամարտությունը առկա է: Իրանական հեղափոխության առաջնորդ Այաթոլլա Խոմեյնին համարում էր, որ աստվածապաշտ հասարակարգը կարող է հակադրվել վերջնականապես բացահայտ եւ կասկածելի բարոյական

արեւմտյան հասարակության անձնապաշտության դեմ, որտեղ դրամի արժեքը ավելի բարձր է քան դրամի ֆունկցիոնալ արժեք: Գործուն ֆինանսական աշխարհը, որը մտածված է, հասարակության մեջ որպես բոլոր տեսակի ծառայությունների իրական կազմակերպությունը (արեւմտյան հասարակության մեջ ցանկացած ցանկություն ունի իր սպառողը եւ այնպես է ստացվում, որ ունի շարունակություն) անկասկած ունի նեգատիվ երեւույթների բավականին ուղեբեռ:

1979 թվականին Իրանի իսլամական հեղափոխության անվանի առաջնորդը Իրանի նորագույն պատմության մեջ եւ ամենայն հավանականությամբ ամբողջ իսլամի տարածքաշրջանում, Արեւելք - Արեւմուտքի փոխընկալման համակարգում որոշիչ դեր է կատարել: Իմամ Խոմեյնու գաղափարախոսության տեսակետը ուղղված էր ոչ դուրեկան ժամանակակից քաղաքակրթության դեմ, նրա սրընթաց զարգացմանը, որտեղ անձի անձապաշտությանն է հատկացված գործունեության ամբողջ դաշտը: Ժամանակակից Իրանի եւ նրա հոգեւոր առաջնորդ Այաթոլլա Խոմեյնու այս վիթխարի փորձի հետեւանքները մարդկությունը դեռ կզգա եւ կըմբռնի: Բայց Իմամ Խոմեյնին ձեռնոց շպրտեց արեւմտյան գաղափարախոսության մեքենային, առավել եւս նրա արժեքների համակարգին, ամբողջ աշխարհաընկալման հասարակական շերտին, որը սնվում է XX դարից: Դա բավականին համարձակ եւ բազմամտքանի քայլ էր: Բայց յուրաքանչյուր հեղափոխությունից հետո գալիս է ավելի խորը եւ հանգիստ խորհելու ժամանակը՝ երկխոսությունը: Դա անհրաժեշտ է, որպեսզի առավել լավ ընկալվի երկրի բազմաբնույթ կյանքը, հասկանալի լինի ամբողջ պատասխանտվությունը, որը մենք կրում ենք մեր ապագա սերունդների առջեւ:

Ա.Գ.ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ
Պատմ. գիտ. թեկնածու
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԽՈՄԵՅՆՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՆԵՐԸ

Իրանի իսլամական հեղափոխությունը, իրավամբ, XX դ. վերջին քառորդի միջազգային կյանքի ամենաակնառու և ամենանշանակալի իրադարձություններից է: Հեղափոխության հաղթանակը, շնորհիվ որի Իրանում վերացվեց հազարամյակների պատմություն ունեցող շահական կառույցը, երկիրն ազատագրեց օտար ազդեցությունից և Իրանում հաստատվեց միանգամայն նոր տիպի հասարակարգ, որն արդյունք էր հեղափոխության գաղափարախոս և առաջնորդ Այաթոլլա Խոմեյնու գլխավորությամբ իրանական ժողովրդի անձնազոհ ու համառ պայքարի:

Իմամ Խոմեյնու տնտեսական և քաղաքական կոնցեպցիաները իրենց լավագույն արտահայտությունն են գտել իսլամական պետության նրա դոկտրինայի՝ «Վելայաթ-ե Ֆաղիհի» մեջ, որը և դարձավ հեղափոխության և Իսլամական հանրապետության ստեղծման գաղափարախոսական հիմքը:

Իսլամական պետության գաղափարը Խոմեյնու մոտ ծագել և ձևավորվել էր դեռևս շատ վաղ՝ Իրաքում վտարանդիության մեջ գտնված տարիներին: Իսլամական հասարակության սոցիալ-քաղաքական կառուցվածքի և երկրի կառավարման ձևի մասին Խոմեյնու ըմբռնումները, պատկերացումներն ու տեսակետները շարադրված են դեռևս Նեջեֆում կարդացած նրա դասախոսությունների շարքում, գրավոր և բանավոր բազմաթիվ ելույթներում, որոնց հիման վրա և վերջնականապես մշակվեց իսլամական կառավարման դոկտրինան, որը կազմում է Խոմեյնու «Քաշֆ-օլ-Ասրար», «Իսլամական կառավարում կամ վելայաթ-ե ֆաղիհ», «Թահրիր-օլ-վասիլե» հիմնարար աշխատությունների բովանդակությունը:

Իսլամական պետության ստեղծման գաղափարը անմիջապես ներշնչված էր շահի և օտար պետությունների որոշակի քաղաքականության հետևանքով Իրանի ներքին կյանքի անարգել, ինտենսիվ արևմտականացման իրողությամբ, որը, զրկելով իրանցիներին իրենց ավանդական իսլամական արժեքներից, խաթարել էր նրանց կենսագործունեության ինքնատիպությունն ու ներդաշնակությունը և խոչընդոտել երկրի բնականոն զարգացման ընթացքը:

Խոմեյնին, առաջ քաշելով Իսլամի վերածնման անհրաժեշտության գաղափարը, որը ենթադրում էր անհատի և հասարակության գործունեության բոլոր ոլորտներում աստվածային օրենքների գերակայություն, փաստորեն իսլամին էր վերադարձնում իր իսկական՝ միակ ազատարարի և փրկչի դերը, իսկ իրանցիներին՝ իրենց հավատը:

«Վելայաթ-ե ֆաղիհ»-ը ամբողջական, կուռ և համապարփակ դոկտրինա է, որի բոլոր ասպեկտները սերտորեն փոխկապակցված են և փոխպայմանավորված, և որոնց հիմքում ընկած են նույն՝ իսլամական սկզբունքները: Այդ է պատճառը, թերևս, որ հաճախ անկարելի է սահմանազատել այդ դոկտրինայի զուտ ներքին և արտաքին քաղաքական կոնցեպցիաները, քանի որ նրա շատ դրույթներ հավասարապես կիրառելի են երկու դեպքերում էլ:

«Վելայաթ-ե ֆաղիհ»-ի կոնցեպտուալ սկզբունքների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հավաստել նաև, որ Խոմեյնու գաղափարախոսության հիմքում ընկած են ոչ միայն զուտ իսլամական, այլև հաճախ համամարդկային արժեքներ: Դրանցից ամենակարևորը, թերևս, արդարության և նրա համար պայքարի վառ արտահայտված գաղափարն է, որը տվյալ դեպքում նույնանում է ազատության գաղափարի և անկախություն նվաճելու իրավունքի հետ: Անկախություն. ինչը թույլ կտար իրանական ժողովրդին ձերբազատվել ոչ միայն իրեն պարտադրված խորթ ու վնասակար բարքերից ու մշակույթից և ձևավորել իր սեփական օրենքները, որոնք ներշնչված լինելով իսլամով, լավագույն ձևով կհամապատասխանեին իր մենթալիտետին, այլև թոթափել օտարերկրյա տևական, ստորացուցիչ ճնշումն ու ազդեցությունը: «Իսլամը ազատության համար մարտնչողների կրոն է, նրանց կրոնը, ովքեր հանդես են գալիս հանուն արդար կյանքի, նրանց կրոնը, ովքեր ձգտում են ազատության և անկախության, շահագործման հակառակորդների կրոնը»,- գրում էր Խոմեյնին:

Խոմեյնու «Ոչ Արևմուտք, ոչ Արևելք» հայտնի, դասական դարձած թեզը, որը հետազոտողների կողմից իրավամբ առավելապես դիտվում և ներկայացվում է որպես Խոմեյնու ներքին և արտաքին քաղաքականության հիմնական կոնցեպցիա /որն, ի դեպ, հետագայում դարձավ նաև Իրանի Իսլամական Հանրապետության պաշտոնական արտաքին քաղաքականության կոնցեպցիան/, իրականում նույն՝ արդեն հիշատակված արդարության, նաև ազատության գաղափարի արտահայտությունն է, որը դրված է իսլամական պետական կառավարման կառուցվածքի հիմքում: «Ոչ Արևմուտք, ոչ Արևելք» թեզը, փաստորեն հռչակում է իսլամական կառավարման անկախություն մեծ տերություններից: Հավասարապես մերժելով թե՝ կապիտալիստական և թե՝ սոցիալիստական արժեքները /որոնցից առաջինի կործանարար

հետևանքներն Իրանի համար ավելի քան ակնհայտ էին, իսկ երկրորդինը նույնքան սպառնալից/, այն առաջարկում էր երրորդ՝ Իրանի համար միակ ընդունելի, բնական և արժանապատիվ իսլամական դիրքորոշման ընտրության հնարավորությունը:

Արդարության խոմեյնիական ընկալումն, այսպիսով, չափազանց լայն է և, միաժամանակ, չափազանց կոնկրետ. երկրի ներքին և արտաքին քաղաքականության իսլամականացումը, իսլամական արժեքների, քաղաքակրթության և ավանդույթների վերականգնման և հաստատման հնարավորությունը Խոմեյնին համարում էր ոտնահարված և կորսված արդարության վերականգնման լավագույն դրսևորում: Խոմեյնու ըմբռնմամբ արդարությունը ներքին քաղաքականության մեջ Արևմուտքի և Արևելքի որևէ ազդեցությունից զերծ ինքնուրույն ու ինքնաբավարարող ժողովրդատնտեսական համակարգի ստեղծումն էր, իսկ արտաքին քաղաքականության մեջ՝ դրսի աշխարհի հետ ինքնուրույն և ինքնաբավարարող հարաբերությունների հաստատումը:

Իրանի համար կատարյալ արդարության և ազատության վիճակը Խոմեյնին տեսնում էր Իրանի կյանքի բոլոր բնագավառների՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, գաղափարական, մշակութային, իսլամի օրենքներին խստորեն ենթարկելու մեջ:

Խոմեյնու գաղափարախոսությանը բնորոշ է նաև իսլամի դինամիզմի և կառուցողական ունակության ընդգծումը, այն, որ իսլամը ոչ միայն հավատք է, ոչ միայն կենսաձև, այլև գործողություն և առաջադիմություն: Ժխտելով իսլամի պահպանողական լինելու մասին արևմտյան /նաև արևելյան/ սոցիոլոգների կողմից շրջանառության մեջ դրված և լայն տարածում գտած թյուր և վնասակար թեզը, Խոմեյնին այն դիտում և ներկայացնում է որպես ոչ միայն Իրանի, այլև ընդհանրապես մահմեդական աշխարհի զարգացումն ու առաջադիմությունն ապահովող թերևս միակ ռացիոնալ միջոց: Խոմեյնու համոզմամբ՝ ճշմարիտ իսլամը մարդուց պահանջում է ակտիվ դիրքորոշում. Ալլահին և նրա օրենքներին ենթարկվելն ու նրանց համահունչ գործելն է միայն մարդուն ազատում շահագործողների և իշխանավորների կամքին ենթարկվելու հարկադրանքից և պայքարի հանում օտար ազդեցության և նրա տարածողների դեմ: «Իսլամը դինամիկ դոկտրինա է և Ղուրանը մեզ սովորեցնում է դինամիզմ»,- իր ելույթներում և աշխատություններում բազմիցս պնդում էր Խոմեյնին:

Խոմեյնու արտաքին քաղաքական կոնցեպցիաներում առանձնահատուկ տեղ է գրավում ջիհադի /սրբազան պատերազմի/ գաղափարը: Ջիհադը արմատապես տարբերվում է նվաճողական պատերազմից և դասվում է մահմեդականի կրոնական պարտականությունների շարքը, քանի որ պատերազմ է հավատքի համար, պատերազմ Ղուրանն

աղճատողների դեմ, ջանք /ջահադա/ ճշմարիտ միաստվածության, իսլամի հաստատման, հայրենիքի պաշտպանության համար: Մահմեդական այլ գաղափարախոսների պես Խոմեյնին ևս գտնում է, որ ջիհադը մահմեդականի համար ոչ միայն պայքարի ամենավեհ և ամենակատարյալ ձևն է, որը նրան հնարավորություն է տալիս իրականացնել իր սրբազան պարտքը, այլև նրա ինքնակատարելագործման և ինքնադրսևորման ամենահիդեալական միջոց: Ի դեպ, մոտեցումը ջիհադին՝ որպես իմպերիալիզմի և օտարերկրյա ագրեսիայի դեմ պաշտպանական պատերազմի, ընկած է իսլամական ռազմական դոկտրինայի հիմքում:

Խոմեյնին ջիհադը դիտում է նաև որպես ժողովրդական զանգվածներին համախմբող և մոբիլիզացնող կարևոր գործոն, որը, մասնավորաբար Իրանի պարագայում, հնարավորություն կտար վերականգնել այն ամենը, ինչը ավերվել և փլուզվել էր շահի անհավատ վարչակարգի կողմից: Այսպիսով կարող ենք հավաստել, որ Խոմեյնին ջիհադը դիտում է ոչ միայն որպես յուրաքանչյուրի կրոնական, այլև հայրենասիրական պարտքը. սրբազան պատերազմ՝ հանուն փրկության, սրբազան պատերազմ՝ հանուն արարման, սրբազան պատերազմ՝ հանուն կյանքի:

Անմիջապես ջիհադի կոնցեպցիայի հետ է կապվում նաև շահիդիզմի /ինքնազոհաբերման կամ նահատակության/ գաղափարը, որը արդարացվում է շիական իմամների նահատակության տրադիցիաներով: Այն իրանական ժողովրդին համախմբող և նրա մարտական ոգին պահպանող նշանակություն ուներ և բորբոքում էր նրա հայրենասիրական մղումները: «Իրանցիները պատրաստ են մեռնել հանուն արդարության», -հայտարարում էր Խոմեյնին:

Խոմեյնու արտաքին քաղաքական կոնցեպցիաներին բնորոշ է նաև իսլամական աշխարհի հակադրումը ոչ իսլամական աշխարհին և այստեղից՝ իսլամական աշխարհի մեկուսացման տենդենցը: Լինելով դարձյալ «Ոչ Արևմուտք, ոչ Արևելք» կարդինալ թեզի արտահայտություններից մեկը՝ այն առավել ամբողջականորեն դրսևորվում և նյութականանում է «Իսլամական համերաշխության» գաղափարախոսության մեջ: Վերջինիս տրամաբանությունը հետևյալն է. քանի որ իսլամական աշխարհը առանձնահատուկ սոցիալական, մշակութային, աշխարհայացքային և քաղաքական համակարգ է, ապա այն, բնականաբար, պետք է միավորվի և մեկուսանա տնտեսապես, քաղաքականապես և գաղափարապես՝ անցնելով նոր իսլամական տնտեսակարգի և ընդունելով ժամանակակից իսլամի ընդհանուր գաղափարական սկզբունքներն ու դրույթները: Միակ Աստծո՝ Ալլահի և նրա առաքյալ Մոհամմեդի ճանաչումը հիմք է հանդիսանում ոչ միայն

բոլոր մահմեդականների հավասարության և մահմեդական համայնքի /ումմայի/ միասնականության, այլև ոչ մահմեդական աշխարհին այդ համայնքի շահերի հակադրության համար: Ելնելով դրանից՝ Խոմեյնին փորձում էր ներշնչել մահմեդականներին, որ մահմեդական համայնքի անդամների միասնականությունը շատ ավելի բարձր ու վսեմ է նացիոնալիզմի կամ անհատի շահերի վրա հիմնված միասնությունից, և որ միայն այդ զորեղ միասնությունն է, որ կարող է ապահովել երկու տարբեր համակարգերի միջև գտնվող մահմեդական աշխարհի ոչ միայն գոյատևումն ու ինքնահաստատումը, այլև հետագա զարգացումն ու առաջադիմությունը: Պատահական չէ, որ Խոմեյնու կողմից «Իսլամական համերաշխության» ապահովման կարևոր միջոց էր դիտվում Իսլամական հեղափոխության արտահանումը մահմեդական այլ երկրներ և մահմեդական ուժեղ տարածքային միավորման կազմակերպումը՝ միասնական օրենքներով և միասնական ղեկավարությամբ:

Իսլամական պետության Խոմեյնու մշակած և առաջարկած քաղաքական մոդելը ներառում է նաև հեռանկարում համաշխարհային իսլամական պետության ստեղծման գաղափարը, որն ուղղակիորեն բխում է մյուս բոլոր գաղափարախոսությունների համեմատ իսլամական գաղափարախոսության ակնհայտ առավելության Խոմեյնու համոզվածությունից:

Ձեկուցման սահմանները, ցավոք, հնարավորություն չեն տալիս ընդգրկել և առավել ամբողջականությամբ, համակողմանիորեն և հանգամանորեն քննարկել Խոմեյնու արտաքին քաղաքականության բոլոր սկզբունքները:

Մենք փորձեցինք ներկայացնել միայն նրա արտաքին քաղաքական կոնցեպցիաների էությունը որոշող այն, մեր կարծիքով հիմնական և ամենակարևոր ասպեկտները, որոնք համախմբեցին և ոգեշնչեցին իրանական ժողովրդին, հանեցին նրան իսլամի իդեալների վերականգնման համար ազնիվ և անձնազոհ պայքարի և ապահովեցին իսլամական հեղափոխության փայլուն հաղթանակն ու Իրանում Իսլամական Հանրապետության հաստատումը:

ԱԼԻ ՔԱՋԵՄՋԱԴԵ
ԻԻՀ դեսպանության մամուլի
բաժնի պատասխանատու

ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆԻԻ ՏԵՍԱԿԵՏԸ ԶԼՄ-ՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես գիտեք յուրաքանչյուր երկրում մամուլը եւ զանգվածային լրատվամիջոցները տվյալ պետության ժողովրդի քաղաքական, տնտեսական, հասարակական եւ մշակութային հայացքների հայելին են: Առանձին վերցրած ռադիո-հեռուստատեսությունն ու թերթերը կարեւոր դերակատարություն ունեն ժողովրդին տեղեկատվություն տրամադրելու եւ իրազեկ պահելու գործում: Մյուս կողմից մեր ժամանակներում ցանկացած հասարակության զարգացման եւ բարգավաճման չափանիշներից մեկը տվյալ հասարակության մեջ մամուլի եւ ԶԼՄ-ների վիճակն է: Այստեղ կներկայացնեմ հեղափոխությունից առաջ եւ հետո Իրանի մամուլին եւ ԶԼՄ-ներին վերաբերող մի շարք թվեր:

Իրանական մամուլը շուրջ 150 տարվա պատմություն ունի: XIX դարի վերջին եւ XX դարի սկզբին շուրջ 50 անուն թերթ է լույս տեսել Իրանում: Հետագա տարիներին այն քանակական աճ է գրանցել եւ գագաթնակետը եղել է համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին, այնուհետեւ Իրանում նավթարդյունաբերության ազգայնացման ժամանակ: 1940-1951թթ., երբ Իրանի ժողովուրդը պայքարում էր ներքին բռնատերերի եւ արտաքին գաղութարարների դեմ, երկրում շուրջ 1000 անուն պարբերականներ էին լույս տեսնում: Սակայն 1953թ. ռազմական հեղաշրջումից եւ ազգային իշխանության անկումից հետո, երկրում ստեղծված հեղձուցիչ իրավիճակի պատճառով պարբերականների թիվը նվազեց մինչեւ 300-ի: Նման իրավիճակը շարունակվեց մինչեւ 1979թ. մինչեւ իսլամական հեղափոխության հաղթանակը: Հեղափոխության հաղթանակով ավարտվեց թագավորական 2500-ամյա պատմությունը: Ելնելով այն բանից, որ իսլամական հեղափոխությունը մշակութային բնույթ ուներ, մամուլը եւ զանգվածային լրատվության միջոցները աճեցին քանակապես եւ որակապես, քանզի բարենպաստ մթնոլորտ էր ստեղծվել մամուլի գործունեության համար: Սակայն Իրանի Իսլամական Հանրապետության դեմ Իրաքի պարտադրած պատերազմի պատճառով երկրի մշակութային ողջ կարողություններն ու հնարավորություններն

ուղղվեցին սուրբ պաշտպանության կազմակերպմանը, ուստի հեղափոխության հաղթանակի առաջին տասնամյակում (1979-1989թթ.) մամուլի զարգացման տեմպերը այնքան էլ շոշափելի չէին:

Պարտադրված պատերազմի ավարտը կրկին նպաստեց մամուլի քանակական ու որակական աճին, այնպես որ հեղափոխության հաղթանակի երկրորդ տասնամյակում (1989-1999թթ. սկիզբը) Իրանում լույս էին տեսնում 734 անուն պարբերականներ: Իսկ արդեն 1999թ. կեսերից երկրում լույս են տեսնում շուրջ 1300 անուն տարբեր օրաթերթեր, շաբաթաթերթեր, ամսագրեր, եռամսագրեր եւ տարեգրեր՝ քաղաքական, մշակութային, հասարակական, մարզական, հումորիստական, կրոնական, արվեստի եւ կինոյի, գիտահետազոտական բնագավառներում:

Իրանում լույս տեսնող օրաթերթերից 5-ը տպագրվում են օրական 250-500 հազար օրինակով: Երկրում լույս տեսնող օրաթերթերի ընդհանուր օրական տպաքանակը կազմում է 2 մլն 600 հազար օրինակ: Ի դեպ հեղափոխության հաղթանակից հետո հանրապետական եւ նահանգային նշանակության ռադիոկայանների թիվը հասել է 29-ի, հեռուստակայանները երկուսն էին, դարձել են հանրապետական 4 կայաններ եւ 2 արբանյակային կայաններ, որոնք շուրջօրյա հաղորդումներ ունեն: Մամուլը եւ զանգվածային լրատվության միջոցներն իրենց զարգացման ու աճի համար մեծապես պարտական են Իմամ Խոմեյնու տեսակետներին եւ նկատառումներին: Իմամ Խոմեյնու կարծիքով ռադիո-հեռուստատեսությունը հասարակական համալսարան է: Իմամ Խոմեյնին գտնում էր, որ «Հեռուստատեսությունը երկրով մեկ սփռված համալսարան է: Այն մեծ ազդեցություն ունի ժողովրդի գիտակցության վրա եւ կարող է թե՛ կառուցողական, թե՛ քայքայիչ դերակատարություն ունենալ: Ռադիո-հեռուստատեսության նպատակը պետք է լինի հասարակության բոլոր խավերի իրազեկումը, որպեսզի նրանց միջոցով հնարավոր լինի նոր տեսակետները հասու դարձնել մարդկանց»:

Ռադիո-հեռուստատեսությունը եւ մամուլը կարեւոր դեր ունեն մարդկանց գիտակցությունն այս կամ այն ուղղությամբ տանելու գործում: Եվ այդ իսկ պատճառով, ինչպես նաեւ նրանց ուսուցողական նշանակությունը հաշվի առնելով, Իմամ Խոմեյնին մեծ ուշադրություն է դարձրել այս հարցին:

Նկատի ունենալով այն, որ ռադիոն ու հեռուստատեսությունը հեռարձակվում են ամբողջ երկրով մեկ, ուստի ամենազգայուն լրատվամիջոցներն են եւ կարող են բարեփոխել մի երկիր կամ բարոյալքել այն: Սակայն զանգվածային լրատվության միջոցների, հատկապես ռադիո-հեռուստատեսության հիմնական պարտականությունը հասարակությանը եւ նրա մաքրությանը ծառայելն է: Մամուլը եւ ռադիո-հեռուստատեսությունը պետք է քայլեն ժողովրդին համընթաց ու ծառայեն նրան, լույս սփռեն եւ ուղղություն ցույց տան մարդկանց:

XX դարի վերջին, որը կապի եւ հաղորդակցության ժամանակաշրջան է, զանգվածային լրատվության միջոցների տեղը եւ դերը լավ է գիտակցվում: Իմամ Խոմեյնին եւս քաջ գիտակցելով պարբերականների կարեւորությունն ասել է.«Պարբերականների կարեւորությունը հավասարազոր է ռազմաճակատներում թափված արյան հետ»:

Իմամ Խոմեյնին իր ելույթներում կարեւորում էր նաեւ գրողների, լրագրողների եւ մեկնաբանների մտքի եւ խոսքի ազատությունը: Սակայն Իմամի կարծիքով մամուլը եւ զանգվածային լրատվության միջոցները չպետք է չարաշահեն այդ ազատությունը:

Նկատում ենք, որ Իմամ Խոմեյնին մեծապես կարեւորում է մամուլի եւ զանգվածային լրատվության միջոցների, հատկապես ռադիո-հեռուստատեսության դերը՝ գտնելով, որ յուրաքանչյուր ժողովրդի երջանկությունը կախված է դրանց առողջությունից ու ճշտությունից, իսկ նույն ժողովրդի անկումն ու բարոյալքումը պայմանավորված է մամուլի եւ ԶԼՄ-ների անառողջ ու քայքայիչ լինելուց: Իմամ Խոմեյնին իր հոգեւոր-քաղաքական կտակում զգուշացնում է եւ երկրի իշխանություններին հորդորում, որ մամուլի միջոցները չպետք է շեղվեն երկրի շահերից:

Հարկ է նշել, որ Իրանում 1931թ.-ից լույս է տեսնում է հայկական «Ալիք» օրաթերթը, իսկ «Պայման» եռամսագիրը պարսկերեն լեզվով տպագրվում է 2000 օրինակով: Իրանի ռադիոյի արտասահմանյան ծառայության շրջանակներում 1979թ.-ից եթեր են արձակվում հայերեն հաղորդումներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3
One - day Seminar on " Thoughts & Ideas of imam Khomeini" Programm 4
Իմամ Խոմեյնու մտքերի և հայացքների քննարկմանը նվիրված գիտաժողովի ծրագիրը 5
Գիտաժողովի առաջին մասը 7
Կարեն Դեմիրճյան. Այաթոլլա Խոմեյնիի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակիցներին 8
Հեքմաթոլլահ Ղորբանի. Այաթոլլա Խոմեյնիի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակիցներին 9
Նիկոլայ Հովհաննիսյան. Այաթոլլա Խոմեյնիի ֆենոմենը 11
Ավագ Խաչատրյան. Մտավորականությունը և համալսարանականները ըստ Իմամ Խոմեյնու (ՌԱՀ) հայացքների . . . 20
Իգոր Մուրադյան. Իմամ Խոմեյնին և Իրանի արտաքին քաղաքականության գաղափարախոսությունը 24
Ռաֆայել Ղազարյան. Անկախության կայացման գործում կրթության և մշակույթի դերը Իմամ Խոմեյնու գնահատմամբ . . . 28
Գառնիկ Ասատրյան. Կնոջ տեղը Իմամ Խոմեյնու (ՌԱՀ) տեսանկյունից 31
Գիտաժողովի երկրորդ մասը 35
Մոհսեն Աբութալեբի. Մարդը և մարդկային վեհանձնությունը Իմամ Խոմեյնու տեսանկյունից 36
Բաբկեն Հարությունյան. Իսլամական հեղափոխության պատմական գործընթացը 40
Արշավիր Գաբուջյան. Խոսքի և գաղափարի ազատությունը ըստ Իմամ Խոմեյնու հայացքների 48
Գուրգեն Մելիքյան. Իմամ Խոմեյնու պոեզիան 52
Վահան Բայբուրթյան. Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998թթ. 55
Արա Պապյան. Երիտասարդությունը Իմամ Խոմեյնու տեսանկյունից 66
Ռուբեն Անգալադյան. Այաթոլլա Խոմեյնին և XX դարի գաղափարախոսության ընթացքը 70
Ա.Գ.Ստամբուլցյան. Խոմեյնու արտաքին ժողովրդական կոնցեպցիաները 74
Ալի Քազեմզադե. Իմամ Խոմեյնիի տեսակետը ՋԼՄ-ների մասին 79